Եր զդեսաը կանաչ սպարեզօաէ մը կ'բաղկանար որուն օձիխն ու թեղանիքը սպիտակ մաշիկ էին , այս է տեսակ մ'աքիսնիէ վար մուշտակ մ'որ՝ ըստ երեւյթին միխապոյն միլիւրի օյիկէն յառաջ կ'դայ : Այս սպարեզօան անկրանակ կ'երկննար բաժկուակի մը վրայէն որ մարմնն ամրապէս կը զրկէր . մի և նոյն կերպասէ վարտիք հաղեր էր , որ հաղիս մինչեւ ազգը ընկնւեր և ծունկերը մերկ կ'մասցին : Գեղացիներուն պէս սանդալներ դրեր էր , որ առջեւն սոկի կոճակներով կարած էին : Թերն՝ սոկուն ակեղին ապարանջաններ , և նոյն մեատըն հաստ մանեակ մը վզին բուրն ունէր . մէջքէն բևեռակաս պէտք զօտի մը կապեր էր , որմէ կարձ , երկսայրի , սրածայր թուր մը կ'կախւէր , այն պէս որ քովմնափի շխտակ կ'եկնար : Աթուին ետեք մուշտակապատ ծիրանի չուխայէ վերարկու մը , և սոկեհառ սաղսարա մը կախուեր էին . այս ամէնը հարուսա հոգասէրին հաղուստար կը կապմէին երբ գուրս ելնելու հարկ տեսնէր : Կարձվարազի աէդ մ'որուն ծայրը լայն էր և փայլուն պողովատիկ՝ աթոռին կունակը կութնէր էր . երբ տունէն գուրս ելնէր տանաեւն այս անզը կ'գործածէր՝ երբեմն զաւականի , երբեմն զէնքի տեղ , ինչպէս որ դիստուածը բերէր :

Ըստ մը սպասաւորներ , որոց հաղուստը պէս պէտ աստիճաններ կ'ներկայէին սանափրոջ կապութեան Ճոխութեան և կիւրթ խողարածին պարզ և կոշտ հանդերձին մէջ ; սպասօն մեծատունին աչքին մէջ կ'նայէին և անոր հբամաններուն կ'սպասէին : Մէկ երկու բարձրագիր ոգաները իրենց տիրոջ ետեւը՝ ամպհու

վանիին ներքեւ կեցեր էին, իսկ միւսները սրահին վարի կողմերը՝ ուղիւ տեսակ ծառաներ ալ կային, ինչպէս երկու երեք խոշոր և թաւ որսական բարակներ, եղջերու և զայլ որսալու տեսակն, նոյնչափ ալ տոկոն ու ուկրուտ շուներ՝ որ հաստ վիզ, լայն գլուխ և երկար ականջներ ունեին. ասկէ զատ՝ մէկ կամ երկու մանր շուներ որ այժմ կտրձուն շնիկներ (terrier) կ'կոչ էին, անհամբեր կ'սպասէին կերակուրին. բայց շնական ցեղին յատուկ դիմադիտութեամբ այս անսատներն իրենց ակրոջ մթին ըստութիւնը վրդովելու չէին յանդկներ, թերևս վախնալով Սէտրիկի սիակին մօտ դրուած փոքրիկ սոլիտակ դաւազնեն որ այս ըսրբուանիներուն ճպրհութիւնը պատմելու կ'ծառայէր: Ֆիայն ծեր և ալզարդ դայլաշուն մը մներմի աղատութեամբ՝ զահին մօտ զացեր նստեր էր և տաեն ատեն տիրոջն ուշը դրաւելու կը յանդկնէր իր մորոտ գլուխն անոր ծնկայ վրայ գնելով կամ ցուուկն անոր ձեռքին մէջ մղելով. բայց Վէտրիկ այս շունն անզ վանեց սաստիւ. — Վար Պօլտր, վար իջիր, քեզի հետ խաղալու ախորժակ չունիմ»:

Իրաւի, Սէտրիկ, ինչպէս որ արդէն ըսինք, նոյն միջոցին շատ ինտումերես չէր: Օրիորդ Բովէնան՝ որ գուրս ելեր և հեռաւոր եկեղեցի մը զացեր էր երեկոյեան ժամերգութիւնը լսելով՝ գառնալով՝ անձրեւն թրջած զղեստը փոխելու կ'զարդէր: Տակաւին լուր չէին առեր կիւրթի և երամակին վրայ, որոնք մինչեւ այն ատեն անտառէն դարձած սկիտի լինեին. իսկ այն ժամանակիներն ապահովութիւն չլինելուն՝ վախ կար թէ արդեօք անտառները թափառող ելուզակներու երեսէն այսպէս կ'ուշանան, կամ դրացի Պետի մը բռնաբարութենէն որ՝ իր ուժին վրայ վատահելով՝ սեպհականութեան իրաւոնքն առ ոսն կ'կուիէր: Ծանր էր այս լինդիրը, վասն զի Սաքսոն հողատէրներու առանին դոյից մնծ մասը շատ մը խողի երամակներ էին, որոնք մօտաւոր անտառները կ'երթային առատ ճարակ դամնելու:

Ասկէ զատ՝ սաքսոն գեղասեան՝ իր մտերիմ Վամպա միմոսին ներկայութիւնը կ'ուղէր, որուն կատակներն անլի կամ աղի, խմած դարեջի և դինիի բաժակներուն պէս՝ իր երեկոյեան ընթրիքը համեմելու կ'օգնէին: Պէտք է նաև յիշել որ Սէտրիկ կէսօրէն վեր ծոր էր և սովորական ընթրիքի ժամը բաւական

անցեր էր, և այս ալ բարկութեան առիթ մ'էր ոչ միայն չին, այլ և նոր տանակերներու: Իր դժգոհութիւնը կ'յայսնէր Սէտրիկ կիակտուր խօսերով, երբեմն քթին տակէն կ'մրմուր, երբեմն իր չորս դին կեցող սպասաւորներուն և մանաւանդ մատուակին կ'գառնար, և այս ալ իբր հաշաբար միջոց մը, դինելի արծաթէ թակոյի մը կ'մեծարեր անոր:

— Բայց ինչո՞ւ համար օրիորդ Բովէնան կ'ուշանայ:

— Հաղուսոր փոխելու վրայ է — պատասխան տուաւ սպասուհի մ'այնպիսի վստահութեամբ, ինչպէս կ'պատասխանէ մտերիմ սենեկապանուհի մը մնը օրուան տանտիրոջ մը խօսելով. — « Զես կամիր անշուշտ որ օրիորդն իր գդակով ու լոդիկով սեղան նստի և բոլոր նահանդիս մէջ չկայ կին մ'որ իր վրան զլուխը տիրուհոյս չափ շուտ շոկէ »:

Այս անժխտելի առարկութեան սպասօն տանտէրը հայ մ'ըրաւ հաւանութեամբ և յաբեց. — Յուսամ որ քու բարեպաշտ տիրուհիդ աւելի աղլոր օդ մը կ'ընտրէ ուրիշ անզամ Ա. Յովհաննու եկեղեցին երթալու համար: Բայց ինչո՞ւ համար — շարունակեց նա, մատուակին գաւնալով և ձայնը բարձրացնելով, այնպէս որ զոհ կ'երեսէր իր բարկութիւնն անոր գլխին վրայ անսանձ թափելու, — ինչո՞ւ համար, յանուն տաս սատանայից, Կիւրթ այսչափ ատեն անտառները կ'ուշանայ. կարծեմ թէ երամակին փորձանք մ'եկած է, սակայն հաւատարիմ և խոչեմ սպասաւոր մը կ'երեսէր ոյն թշուտականն և միաք ունէի զանի աւելի լու պաշտօնի մը հասցնելու, կարելի է որ իմ սպահապաններու կորպոն անցընէի:

Օվլալտ մատուակին ակնարկեց թէ հրականակն զանդակը զարնելէն վեր հաղիւ ժամ մ'անցիր էր, և այս ալ անպատէհ սպահակ մ'էր, քանի որ սաքսոն ականջներու շատ խորթ կ'հնչէր այս ինդիրը:

— Սատանան տանի — զուեց Սէտրիկ, կրակաթաղը, զայն հաստատող բռնաւոր շնորդին, նոյնակն անսիրա ստրուկն որ սաքսոն լեզուով սպասօն ականջի մը կ'զրոցէ: Կրակաթաղը մի կ'կրկնեց նա — կրակաթաղն որ սպարկէշտ մարդիկը կ'բռնադաւէ իրենց լցուը մարելու, որպէս զի զող ու աւաղակ մթին գործեն, այս, կրակաթաղը, բէժինալտ ֆրօն-տը-Պէօ և Փի-

Հետ Մալվուսղէն կրակաթաղին օգուտը քաղել դիտէին, Շնորդի Վիլէմին պէս, կամ Հէսդինքսի Ճակատահարտին պատերազմող որ և է բաղդախնդիր զինորի մը պէս: Քիչէն պիտի իմանամ կարծեմ, որ իմ արջառներս կողոպտեր են, որպէս զի սովալը լուկ ելուզակները կշայնեն քանի որ իրենց տէրերը լոկ առ ու աւարով կարող են զանանք կերակրելու: Անտարակյս իմ հաւատարիմ ստրոկս սորաննած և երամակս իրը որս տարած են չ Խոկ Վամսա, ուր է Վամսա: միթէ քիչ մ'առաջ ըստին ինձ որ Կիւրթին հետ գուրս ելեր է:

Օսվալտ հաստատական կերպով պատասխանելուն,

— Ո՛չ, բարի, եղ կապէ: սաքսոն մորոսն ալ յափշտակած են նօրման նախարարին ծառայելու համար: Բայց, իրավի, ամենքս ալ մորոս, և մեր բանաւորներու կողմէն քամահելի և ծաղը ու ծանակ լինելու արժանի ենք, քանի որ կ'ծառայենք իրը թէ իւս խելքով ծնած ենք: Բայց վրէմս պիտի լուծեմ յարեց նա իր աթոռէն ցատկելով անհամբեր՝ այս նախատինքը կասկածելուն վրայ, և իր տէղը ձեռք առաւ: — Երթամ պիտի զանգատիմ բարձր առնանին առջեւ: Բարեկամներ, կողշ մնակիցներ ունիմ և նօրմանը գէմ առ գէմ՝ ի պայքար պիտի հրաւիրեմ: Թողլ դիմաց ելնէ նա իր զբահով ու վերատվ, և վատութեան առնական զոյն տուող ինչ որ ունի թողլ հաղնի, այս ձեռքի տէղիս պէս տէղ մը՝ անոնց ուղմական վահանէն եռուազատիկ ամուլ պատուարէ մը թափ անցուցի: Կարելի է կարծին թէ ծեր եմ, բայց պիտի տեսնես որ, թէ և մնակ եմ և անդաւակ, գեռ Հիրվօրտի արիւնը Սէտրիկի երակներուն մէջ կ'եռայ: Աչ, Ակլֆրիս, Ակլֆրիտ — դոչեց նա տելի մովլ ձայնով մը, եթէ անխորհուրդ սէրդ զսպելու կարող լինէիր, հայրդ այս ալեոր հաստակին մէջ չէր մնար մնաւոր կաղնիին պէս՝ որուն բեկեալ և անհեցուկ ճիւղերն բռնաշունչ հոլին ձգուած կ'ատասնին: Կարծես թէ ամբարտիմ զայրազին զգացութերը տրտմութեան դարձան. ուստի իր տէղը տեղը դնելով աթուը նստաւ ակնկար և կ'երեւէր թէ մը թին մոտմուքի մէջ կ'ծփար:

Սէտրիկ յանկարծակի ուշաբրեցաւ շեփորի մ'որոտալիր ձայշ պէս, որուն պատասխան տուին սրահին նոյնպէս շէնքին այլ և

այլ կողմերը ցրուած բոլոր շուներուն աղմկալի հաջումները: Ճարկ եղաւ Ճերմակ զաւազանին և սպասաւորաց օդնութեամբը այս շնային զու ու դոչումը դադրեցնել:

— Դուքս ելքք, անսպատաններ — ըստ սպասոնը յանկարծ, երբ աղմուկը դադրելով սպաներն իր ձայնը լսելու կարող եղան: — Նոյեցէք սա շեփորն ինչ լուր կ'բերէ, շատ համական է որ զողեր հողերս կոխած են, և կազուտ ու կողսպուտի զյուժ մը պիտի իմանամ:

Պահապան մ'երեք վայրիենէ դառնալով իմացոց, և թէ Փօրմօի Էյմբը վանահայրը, նոյնպէս Տաճաբական սապետաց արիասիրտ և պատկառելի կարդին հրամանատար՝ Պրայն աը Պուանիլակէր բարի ասպետը՝ քանի մը հետեղորդներու հետ՝ մէկ զիւշերուան համար սապնջականութիւնն և պատսպարան մը կ'իսընգրեն, վասն զի երկրորդ օրը Էշպի-տը-լա-Զուշի մօտ լինելիք նիզակամարու հանդիսին ներկայ զանուելու համար Ճամբայ ելեր են:

— Եյմբը, Էյմբը վանահայրը, Պրայն աը Պուանիլակէր, — մրմաց Սէտրիկ — երկոքնին ալ նօրման են. բայց ինչ որ լինին, նօրման կամ սպասոն, Աօմէրվլուտի սապնջականութիւնն անբասիր պիտի զանուի, և քանի որ այս օթևանն ընտրեր են, բարի առաքեցան, սակայն տելի բարի կ'լինէր եթէ իրենց Ճամբան շաբունակէին: Բայց անվայել բան է մէկ զիշերուան օթևանի և կերակուրի համար զանգատիլ, քանի որ՝ իրը հիւր՝ նօրմաններն անդամ՝ իրենց լովրշութիւնը զսպելու պարտաւոր են. զնա, Հընդպէրդ — յարեց նա, տեսակ մը տնտեսի՝ որ իր ետել կեցեր էր Ճերմակի բիր մ'ի ձեռին — զնա վեց սպասաւոր առ և օտարականները հիւրանոցը հրամցուր: Թողլ անոնց ձիերն ու ջորիները ինամմն և հետեղորդներուն պակասը հողան: Եթէ պէտք ունին՝ թողլ փախուելու համար լաթ տան անոնց, նոյնպէս կըակ, ջուր լուացուելու համար, զինի և զարեջուր: Ճարման առոր նաև խոհակերին որ բան մ'աւելցնէ մը երեկոյեան Ճաշին, և բերէ սեղանին վրայ զնէ եբբ նորեկ հիւրերը մեզի հետ Ճաշելու պատրաստ զանուին: Հընդպէրդ, իմ կողմէս ըսէնորեկ հիւրերուն որ ես ինքս անձամբ պիտի դայի զանոնք ընդունելու, բայց ուխտ ըրած եմ ամայհովանիէս երեք քայլէն առ

ւելի յառաջ չանցնիլ որ և է մէկը դիմաւորելու՝ եթէ սաքսօնա եան թաղառուական ցեղէն չլինի : Հիմակ գնամ, նայէ որ ամէն խնամք տանին անոնց, որպէս զի զոռողաբար չըսեն թէ անոպայ սաքսօնն իր ազահութիւնն ու չքաւորութիւնը ցցուց :

Տնտեսը բաղմաթիւ սպասաւորնելով գուրս ելաւ որպէս զի տան տիրոջ հրամանները կատարէ : — Եյմէր վանահայրը — կրկնեց Սէտրիկ Օսվալտին նայելով — եթէ չեմ սխալիր, Միալ չէմի տէր Կայլս Մօլվարիի եղայրն է :

Օսվալտ հաւանութեան յարդական նշան մ'ըրաւ : — Եր եղայրն անոր տեղը կ'նստի և լաւաղան տոհմի մը ժառանդութիւնը կ'զրաւէ, այս է Միալչէմի Խփկարի տոհմը . բայց ո՞ր նօրման իշխանը նոյնը չպիտի ընէր : Վ'ըսեն թէ այս վանահայրն ազատախօս և զուարթ քահանայ մ'է, որ զինիի բաժակն ու շեփորն առելի կ'սիրէ քան եկեղեցոյ զանդակն ու աղօթաղիրքը . լաւ, թուղ հրամէ, բարի եկեր է : Բայց տաճարականին անունն ի՞նչ էր :

— Պրայն տը Պուա-Կիլալէր :

— Պուա-Կիլալէր — ըստ Սէտրիկ, շարունակ մամուալով և իւրովի խոսելով, սովորութիւն մը զոր կ'զործածէր իրմէ ստորին կարդի մարդոց հետ ապրելուն, և որով այնպիսի անձի մը կ'նմանէր որ լին իրեն կ'խօսի քան թէ չորս դին զանուող ներուն հետ : — Պուա-Կիլալէր . այս անունը հռչակ առած է թէ լուսութեան և թէ չարութեան կողմէ : Վ'ըսեն թէ իր ուխտին քաջաց քաջաղոյնն է, բայց անոր սովորական մոլութիւններու արամն ունի, այսինքն է զուող, ամբարտաւան, անզութ, հեղակաւէր, քարսիբար մարդ մ'որ ոչ երկրիս վրայ երկիւղ զիւտէ և ոչ երկնի ահը : Այսպէս կ'սպասմէն Պաղեստինէն դարձող քանի մը մարակիներ : Փոյթ չէ, զիշեր մը միայն պիտի մնայ մեղի հետ, անոր ալ բարի եկար պիտի ըսեմ : Օսվալտ, պէտք է որ խիստ հին զինիին տակառը բանաս, ամենէն լաւ մեղըմպէլին, (mead) զօրաւոր զարեջուրը, համել թիւշրահէ, (morat) փրփրալի մրդողին, և հոստաէս համագինին (pigments) մնձարես . խիստ խոշոր գաւաթթներ լեցուր, տաճարականներն ու աբբաները աղուոր զինին ու աղուոր ծամոցը կ'սիրեն : Ելժիթա, զնա օրիորդ Քովէնալի իմաց տուր որ այս իրկուն իրեն չպիտի սպասել սրահը՝ եթէ զալու փափաք չունի :

— Բայց կարծեմ թէ մեծ փափաք ունի — պատասխանեց ելշ ժիթա շտապաւ — վասն զի խիստ հետաքրքիր է Պաղեստինի լուրերն իմանալ :

Սէտրիկ այս ժպիրհ սպասուհւոյն զայրազին ակնարկ մը նետեց, բայց Ռովէնան և իր ամէն պարագաները Սէտրիկի բարկութենէ աղատ էին : Ուստի տանտէրը պատասխանեց միայն — Լուռ կեցիր, աղջիկ, լեզուդ խելքէդ մեծ է : Դու զնա իմ պատուէրս տիրուհւոյդ յայանէ, և ինքն ինչպէս որ կ'ուզէ այնպէս ընէ : Գոնէ այս տան մէջ թաղուհւոյ պէս կ'ափրէ Ալֆրէտէն իջնող օրիորդ մը » : Ելժիթա սրահէն դուրս ելաւ :

— Պաղեստին . կրկնեց Սէտրիկ — Պաղեստին, քանի քանի մարդիկ ականչ կ'կախեն այն վէպիրուն զոր վատշուէր խաչակիրներ, կամ կեղծաւոր ուխտաւորներ այն աղէտաբեր երկրէն կ'բերեն : Ես անդամ թերես հարց ու փորձ ընեմ, ես անդամ թերես սիրու ՚ի թունտ մատիկ ընեմ այն առասպելները՝ զոր նենդամիտ թափառականներ կ'հնարեն որպէս զի մեր տան մէջ հիւրնկալ օթեան մը ձեռք ձեռն . բայց ո՞չ, իմ հետ որդիս, այլ ևս չէ իմ որդիս, անոր Ճակատազրին անտարբեր եմ, ինչպէս որ անզգայ եմ միլիոնաւոր ելուզակաց յետնազունին համար՝ որանք իրենց ուսին վրայ խաչ մը դրին, անհնարին ջարդ ու կոտորած տուին, և ասով Աստուծոյ կամքը կ'կատարենք ըսին :

Եւ Սէտրիկ իր Ճակատը խորշունց, և պահ մ'իր աշերը դեմին սեերեց : Երբ վեր նայեցաւ, սրահին ծայրը զտնուած զուոր կրնակի վրայ բայցուեցաւ, և նոյն երեկուեան հիւրերը ներս մըտան, անտեսին ու չորս ջահակիր սպասաւորներու առաջնորդ դութեամբը :



ԳԼՈՒԽ Դ.

Ուշար, թառ այժ կ'մորմէին և խոզեր,
Գլխուկ մազից գետին տաղաստ կ'արիւնէր.
Վառ էր խարոյիկ, կ'եփէր խորտիկ մաս առ մաս
գիհնի վարդդյոյն կ'բոլուր ամնալիր թառ:
Ինքն որիս հեռի նոտած կ'ուտէր ճաշ.
Սեղան չնչն և ամոռակ իսկ անտաշ,
Կ'տար անոր Տելէմաք . . .
ՈՒՒԾԱԿԱՆ, ՀԱՅԻԵ. 1.

ԵՅՄԻՐ վանահայրը սրատե՞չ առիթ դանելով իր ձիաւորի
պարեզօտը փոխեր և պէրճադդյոյն մը հազեր էր, իսկ ուսերուն
վրայ ասեղնակերտ լողիկ մը կ'կրէր: Իր կրօնական աստիճանին
յայտարար ոսկեձոյլ մատնին զատ՝ մատերը մեծադին գոհար-
ներով վարդարեր էր՝ իր ուխտին հակառակ. իր սանդալները
Սպանիոյ զերազնիւ կաշիե յօրինուած էին, իր կարդին ներա-
ծին չափ մօրուսը կարեր, և իր կուլակն ընտիր բանուած ծի-
րանի խոյրով մը ծածկեր էր:

Տաճարական ասպետին կերպարանն ալ փոխուեր էր. թէ և ա-
նոր չափ ուշադիր չէր վարդարուած, սակայն զարձեալ իր հա-
զուտը նոյնպէս Ճոխ և աեւպն իր ընկերէն առելի ահեղ էր:
Իր վերտ չապիկը հաներ և մուշտակապատ մութ ծիրանի մե-
տափսէ բաճկոն մը գրեթ էր, որոն վրայ իր բազմածալ և ձիւ-
նի պէս սպիտակ երկար պարեզօտը կ'ծածանէր: Իր ուխտին
եօթնածայր խաչը սև թաւիշէ շնուուած էր վերարկուին ուսին
վրայ: Իր երկար զդակն այլ ևս չէր ծածկեր ճակաաը, զգը
սևաթոյը ու խիտ զուուղ մալերը կ'բոլորէին և իր սեւուկ երեւ-
սին կ'յարմարէին: Իրաւի իր քալուածն ու կերպերը շնորհալի
և վսեմ պիտի երեւէին, եթէ տիրական զոռոշութեան դրոշմը
չկրէին, զոր անդիմադրելի իշխանութիւն մը վարելով ստացեր էր:

Այս երկու մեծաշոք անձերուն կ'հետեւին իրենց յատուկ ըս-
տասաւորները, իսկ իրենց ուղեցոյցն երկուտոթեամբ ետեւ մնա-
ցեր էր և իր կերպարանին նշանաւոր դրոշմն էր մի միայն ուխտ-
ուառը մը սովորական վերարկուն: Բոլոր մարմինը հաստ սև
բրդէ զրպելով մը ծածկեր էր: Այս գրդլիին ձեւ զրեթէ ար-

զի հիւտարի մը թիկնոցին կ'նմանէր, թևերը դոցելու համար
մի և նոյն դրօշներն (flap) ունէր և Սովորական վերարկու կ'կոչ-
ւէր: Իսկ իր հաղուստին միւս մասերն էին, մերկ ոտիշը վրայ
լարերով կցուած կոշտ սանդալներ, լայն և հովանուտ զլսարկ
մ'որուն բոլորտիքը խեցիներ կարեր էր, և երկար բիր մ'եր-
կաթակուու՝ որուն վերի ծայրն արմաւենիի ոստ մը կապեր էր:
Ամենէն ետքը սրահ մանելով ուխտաւորը գիտեց որ ստոր սե-
ղանին աթուոները հազիւ թէ Սէտրիկի և հիւրերուն սպայից կը
բաւէին, ուստի զնաց մեծ կրակարանին մօտ՝ և զրեթէ վերեր
դրուած նստոց մը՝ և կարծես թէ իր լաթերը չորցնելու կ'զբա-
ղէր, մինչեւ որ սեղանին մէկ աթուուը պարապ մնաց և կամ հիւ-
րասէր տնտեսը զայ իր նստած տեղն իրեն քիչ մ'ուտելիք բերէ:
Սէտրիկ ոտք ելաւ իր հիւրերն արժանապէս ընդունելու, և
դարէն վար իջնելով երեք քայլ անւու դէպ յառաջ և անոնց
զալսաեան սպասեց:

— Պատուարժան հայր, կ'ցաւիմ, ըստ Սէտրիկ, որ իմ ը-
րած ուխտն չներեր ինձ այս իմ նախահարցս սալայատակին
վրայ քանի մը քայլ ևս առնլու՝ նոյն իսկ քեզի և Ս. Տաճա-
րին այս ասպետին պէս հիւրեր հիւրընկալելու համար: Բայց
իմ տանիս սնսաեսը բայցարած է ձեզ անշուշտ իմ այս ակամայ
անմարդալարութիւնս: Նաև կ'աղաչեմ ձեզ ներել ինձ որ իմ
մայրենի լեզուս կ'խօսիմ, և կ'հրաւիրեմ ձեղ որ եթէ զիտէք՝
նոյն լեզուաւ պատասխան տայիք, ապա թէ ոչ, նօրման բար-
քառը բաւական հասկնալուս կարող եմ ձեր միտքն ըլբունել:

— Արժանի Ֆրէնքլին, կամ ներէ ինձ ըսելու, արժանի Տը-
Շէյն, թէ և այս տիտղոսը շատ հին է, ամէն ուխտ անլոյծ պէտք
է մնայ: Ուխտ մը մեզ երկնից հետ կասպող զօդն է, լարեր են
որով զոհը խորանին կ'կապեն, և հետեւապէս, ինչպէս որ ար-
դէն ըսի, հարկ է որ ուխտ անդրելի պահէս և կատարես,
միայն թէ մեր եկեղեցին հակառակ վճիռ շարչակէ: Իսկ լեզուի
զալով յօժարակամ կ'խօսիմ այն լեզուն որով իմ արգոյ հա-
նիս, Հիւրա Միթալէմ կ'խօսէր, որ սբրուհիի մը պէս մեռաց
և զրեթէ իրեն համանուն բարեյիշատակ Ս. Հիւրա Վիթպային
կ'նմանէր. Աստուած լուսաւորէ իր հողին:

Եռք վանահայրն իր խոսքն՝ զոր հաշտարար յորդորակ մը կը
6

համարէր, աւարտեց, իր ընկերն համառօտ և խրոխտ կերպով
մ'ըսաւ. — Ես միշտ զաղղիարէն կ'իօսիմ, Ծիչարտ թաղաւորին
և իր ազնուականաց լեզուն, բայց անկլիարէն ալ բաւական
հասկնալուն՝ երկրիս բնիկներուն հետ կարող եմ նոյն լեզուով
բանակցիլ:

Սէտրիկ իր խօսակցին այնպիսի արագ և զայրադին ակնարկ
մը նետեց որ երկու նախանձորդ ազգերու մէջ ստէպ հակառա-
կութեան ուղղոյն արդիւնքն էր. սակայն հիւրընկալութեան պար-
տիքը յիշելով, իր քէնը ծածկեց և ձեռքի շարժումով մը հրա-
մայեց իր հիւրերն որ դահէն քիչ մը վար՝ բայց իր երկու կող-
մը դրուած ուրիշ երկու աթոռներու վրայ բազմին, և երեկոյեան
քնթրիքը բերելու նշանյը մ'ըրաւ:

Երբ սպասաւորները Սէտրիկի հրամանը կատարելու կ'շտա-
պէին, հեռուէն խոզպած կիւրթը նշմարեց, որ իր Վամբա-
ընկերին հետ նոր կ'մտնէր սրահէն ներս: — Սա թափառիկ ա-
պիրատներն ինձի զրկեցէք — ըստ սաքսօն Սէտրիկն անհամ-
բեր: — Եւ. Երբ յանցաւորներն իր առջևն ելան: — Ի՞նչ պատ-
ճառաւ, գուշք, անպիտան անզդամներ, այսչափ ուշ դարձաք: —
Արդեօք երամակիդ տուն բերիր, վարպետ կիւրթ, թէ ոչ աւա-
զակներուն ճարակ եղաւ:

— Շնորհ, ըստ կիւրթ, երամակն ողջ առողջ է:

— Բայց անշնորհ բան մ'է, թշուառական, — ըստ Սէտրիկ
— որ քու պատճառաւող երկու ժամ ուրիշ կասկածներու մէջ
մտայ և այս տեղ նստած վրէժ առնլու հնարք մտածեցի դրա-
ցիներու դէմ՝ կարծելով թէ մեղապարտ են: Ահա իմաց կ'տամ-
քեզ որ եթէ ուրիշ անզամ այսպիսի բան մը պատահի շղթա-
յակապ բանտ պիտի նետեմ քեզ:

Կիւրթ՝ իր տիրոջ ցասկոտ բնաւորութիւնը դիտնալով ինք-
զինքն արդարելու չելաւ. բայց միմոն՝ իր յիմար արտօնու-
թիւններ ունենալուն՝ կրնար Սէտրիկի ներումը ստանալ, ուստի
կիւրթին և իրեն համար պատասխանեց. — Երաւի, տանտէր
Սէտրիկ, այս իրկուն կրակ ու բոյ կ'թափի բերնէդ:

— Ինչպէս, պարոն — ըստ տանտէրը — եթէ դու ալ խենդ
ու խելաւ թափես, քեզ դունապանին քովը պիտի զրկեմ որ
լաւ մը լուայ:

— Եսիս, դու իմաստութեամբ դատի՛ — ըստ Վամբա — ար-
դար և օրինաւո՞ր է արդեօք ուրիշի մը յանցանքին համար մարդ
մը պատժել:

— Հարկաւ արդար չէ, յիմար — պատասխանեց Սէտրիկ:

— Ուրեմն, ինչո՞ւ համար խեղչ կիւրթը պիտի կապկաես իր
ֆանկս շան յանցանքին համար. վասն զի կ'երգնուո՞ր որ ճամ-
բան վայրկեան մը չկեցանք մեր խովերը ժողվելէն ետե, թէ և
ֆանկս տակաւին ժողովելու չէր յաջողած երբ երեկոյեան զան-
գակը կ'զարնէր:

— Ուրեմն ֆանկսը կախեցէք — ըստ Սէտրիկ, յանկարծ խո-
դաբածին դառնալով — քանի որ յանցանքն անորն է, և դու
ուրիշ շուն մը զաիր:

— Շնորհ ըրէ, տէր իմ, — ըստ միմոնը — հիմակ ալ ար-
դարութեան քովէն կ'անցնիս. վասն զի ի՞նչ ընէ ֆանկսը եթէ
կալ է և խովերը չէ կարող շուտով ժողվել. բուն յանցանքն
անոր առջևի ոտքին երկու ճանկերը կարողինն է. անտարակոյս
այս զործողութեան չէր հաւաներ խեղչ կենդանին թէ որ իրեն
կարծիքը հարցնէին:

— Բայց ո՞ր յանդուզն մարդն իմ ստրակիս շունն այսպէս
հաշմեց — սպառաց սաքսօնը բարկութենէ բորբոքած:

— Միթէ կ'հարցնե՞ս, այն մարդը Հիւտէրդն է — ըստ Վամ-
բա. — Ֆիլիս Մալվազէնի անդէորդը: Մինչդեռ ֆանկս ան-
տառը կ'ըրջէր, բունեց զայն, և ըսելով թէ եղջերու կ'որայ
իր տիրոջը հողերուն վրայ, անոր ճանկերը խեց:

— Սատանան տանի Մալվազէնն և անդէորդն ալ միասին —
պատասխանեց Սէտրիկ, — նս անոնց պիտի իմացնեմ որ՝ անտա-
ռային գաշանց ուժովը՝ այն պուրակներն ազատ են: Բայց թո-
ղոնք առ այժմ խնդիրը մէկղի: Գնա, ապիրատ, տեղդ զնա,
խեկ գու, կիւրթ, ուրիշ շուն մը զաիր, և եթէ որսապահն ա-
նոր դակելու յանդգնի, չափը պիտի տամ. վասի տեղ անցնիմ
եթէ անոր աջ ձեռքին բթամատը չկոտրեմ, այնպէս որ ուրիշ
անդամ աղեղը լարելու անկարող լինի: Բայց ներում կ'իմնդեմ
ձեղնէ, արժանի հիւրերս. կ'տեսնե՞ս, աղնիւ ասպետ, չորս
կողմն այնպիսի գրացիներ ունիմ որ Ս. տեղեաց անհաւատնե-
րէն վար չեն մնար: Սակայն ահա մեր պարզ կերակուրը մե-

զանին վրայ է, չըամեցէք և թող հիւրասիրութիւնս անհամբ ընթրիքիս պակասը լեցնէ :

Սակայն սեղանին վրայ դրւած համագամմերը տանտիրոջ
կողմէ զովեստի կարօտ չէին։ Այլ և այլ կերպով եփած խողի
միսեր սեղանին ստոր կողմը կ'երեւէին, իսկ վերի կողմը՝ հաւ,
եղջերու, այծ, ձաղար, պէս պէս ձուկեր, նոյնապէս ահաղին
չկանաներ, զրաակ և զանազան պտուղներէ շինւած քաքարներ։
Իսկ մանր մունք որսի հաւերը, որ առատ էին, պնակներավ չէին
մեծարեր, այլ սպասարորները շամիփուրներու վրայ բերելով՝ հետ
զհետէ հիւրերուն կ'ներկայէին և ասոնք ալ ուղածնուն չափ կը
կտրէին կ'ուտէին։ Ամէն նշանաւոր անձի մօտ արծաթէ թա-
կոյլ սը դրուած էր. իսկ վարի սեղանին վրայ՝ բաժակի տեղ՝
մեծ եղջերներ շարեր էին։

Այս միջոցին որ կերակար ուտելու պիտի սկսէին, տնտեսը՝
յանկարծ գաւաղանը բառնալով՝ բարձր ձայնով ըստ . — Ներեցէք, տիրուհի Ռովենան կ'զայ, տեղ բացէք » : Սրահին վերի ծայրը՝ սեղանին ետէէն կողմակի դուռ մը բացուեցաւ անվաջապէս, և Ռովենա՝ հետն ունենալով չորս սպասուհիներ՝ ներս
մտաւ : Սէտրիկ բէև զարմացաւ՝ և նոյն միջոցին իր սանուհոյն
երեխը թերեւս անհանգ երեցաւ իրեն, սակայն զանի դիմաւու
բելու փութաց և ակնածնլիք քաղաքավարութեամբ տարաւ նըս-
տեցոց տան տիրուհոյն յատկացած աջ կողմի աթոռին վը-
րայ : Ամենքն ոտք ելան տան տիկինն ընդունելու, և այս ալ
հիւրերուն մարդավարութեամբ անձայն բարե մը տալով պատաս-
խանելէն ետեւ՝ շնորհալի կերպով յառաջ անցաւ սեղանին մօտ
իր աթոռը նստելու : Բայց տակաւին այս գործողութիւնը չ'ըմբնա-
ցած՝ Տաճարականը վանահօր ականջին փսխաց : — Կ'նայիմ որ
դուսպարին մէջ քու ոսկի մանեակդ չոլիտի կըեմ, և Քիոսկ դի-
նին վաստկեցար :

— Ես քեզի ըստի — պատառխանեց վանահայրը — բայց մեղմէ չի ացումկ , Ֆրէնքլինը քեզ կ'դիմէ :

Պրայն տը Պուա-Կիլսէր՝ վանահօր այս ազդաբարսթիւնը
բանի տեղ չդրաւ, և մի միայն իր կրից գրդման հետեւլով
սաքսօն օրիորդին վրայ աչերը սկերեց, որուն զեղեցիւնթիւնն
իր երևակայութեան այնքան հրապուրելի կ'երևէր՝ որբան որ առ

ըսել լեան սուլթանու հիներուն աղորութենէ չափազանց կ'սար-
բերէր :

Բովէնա իր սեւլին ամէն ձիբը պահելով՝ բարձր՝ սակայն աշքի զարնելու չափ չէր հասակը։ Երեսին դոյնն էր ընտիր սպիտակի. բայց իր գծաղրութեան և զլխին աղնիւ տիպարը չունէր բնաւին այն անհամութիւնն որ սովորաբար ձերմակ դիմաց յատուկ է, իր բայց կապոյտ աշերն որ, շնորհագեղ խարտեշ ունքերուն ներքեւ բառական հշմարելի էին իր ձակախն աղնուութիւն մը դրոշմելու, սէր ու մորմոք, նոյնավէս ակնածութիւն և զութ ազգելու կարուլ կ'երեւէին։ Թէև իր դէմքին բնական երեսյթն անուշութիւնն էր, սակայն ակն յայտնի կ'երեւէր թէ այս պարագայիս մէջ՝ նորատի սպասոնուհին անդադար տան մէջ իշխելուն և ամենուն կողմէն մեծարանք ընդունելուն՝ իր բնաձիր բնաւորութիւնը փոխեր և աւելի վէս կերպարան մը ստացեր էր։ Իր առատ մազերն որ ոչ թուխ էին և ոչ դեղձան, քմածին և շնորհալի գանգուրներով տրոհեր էր, և արհեստը բնութեան օդնած էր անշուշտ։ Այս գանգորալի մազերն սփիւռ աղամանդուներով զարդարանա վերէն վար թափեր էր հերաբձակ, և որմէ օրիորդին տոհմիկ ծնունդն ու անկախ կացութիւնը կ'յայտնուէր։ Սկի օղակ մ'որմէ նոյն մետաղէն մասունք մը կախուած էր՝ իր վզին բոլորը կ'երեւէր։ Ապարանջաններ ունէր թերերն որ մերկ էին։ Իր հագուստան էր ծովագոյն բայց կանաչ մետափսէ պարեզոտ մ'որուն վրայէն մինչեւ զեախնը հասնուլ երկար շրջազգեստ մը հաղեր էր և լսյն թեեր ունէր, որոնք հաղիւ մինչեւ արմուկները կ'իջնէին։ Այս շրջազգեստը ծիրանի և ամենընսակը ասուէ շինուած էր. ոսկեթել մետափսեայ քօղ մ'անոր վերի կողմէն կապուեր էր, և սպանիական սովորութեան համեմատ կառելի էր անով երեսն ու կուրծքը ծածկել, կամ զարդի պէս ուներուն վրայ դնել։

Երբ Բովէնա զիտեց որ տաճարական ասպետին աչքերն իր վրայ յառեր էին այնպիսի եռանդով մ'որ կարծես թէ հրափայլ ածուխներու կ'նմանէին իրենց մթին կամարին մշջ իսկոյն քօղով երեսը ծածկեց համեստութեամբ և այսպէս հասկցուց տաճարականին որ իր ցալիք ակնարկն անախորդ կ'գտնէ : Աէտրիկ Քովէնաի միտքն ըմբռնեց և բառ . — Քաջդ ասպետ , մը տաք-

սօն օրիսրդներուն այտերն այնչափ արև չեն տեսած որպէս զի խաչակրի մ'ակնասլիշ նայուածքը կարենան տանելու :

— Եթէ ըրածս անքաղաքավարութիւն է — սպատասխանեց Պը բայն — ձեզնէ, այսինքն օրիորդ Բովէնահէն ներում կ'խնդրեմ, վասն զի ասկէ աւելի չեմ կրնար խոնարհիլ :

— Օրիորդ Բովէնան — յարեց վանահայրը — մեղ ամենքնիս ալ պատմեց, իմ բարեկամիս յանդոնութիւնը պատմելով. յուս սալի է որ այսչափ անդութ չզանուիր այն շքեղ ժողովին մէջ, որ նիղակամարտին առթիւ պիտի դումարւի :

— Մեր այն զուպարին երթալն անսույդ է — ըսաւ Սէտրիկի : — Զսիրեմ այսպիսի նանիր բաներ որ մեր նախնեց անծանօթ էին երբ Անկլիա աղատ էր :

— Սակայն յուսանք — ըսաւ վանահայրը — որ մեր ընկերութեան սիրոյն համար միտքէ կ'փախես և կ'զաս. քանի որ Ճամբաները վտանգաւորեն՝ Պրայն տը Պուտա-Կիլսէր ասպետին ուղեկցութիւնն անդունելի չէ :

— Պատուարժան հայր — ըսաւ սաքսոնը — մինչև այսօր ամէն որ զացի տեսայ որ իմ սրիս և սպասաւորներուս օդնութենէ զատ բանի մը կարօտ չեմ. եթէ այս անդամ իրօք Էշպի-ար-լա-Զուշ ուղերիմ՝ բաւական կ'սեպեմ Գոնինկալըրկի Աթէլսէն իմ աղնիւ հայրենակից գբացիս և քանի մը սպաներ հետո առնուլ՝ ելուզակներ և աւասական թշնամիներ վանելու համար : Այս բաժակը, պատուարժան հայր, քու կենդանութեանդ կ'խմեմ, յուսամ որ զինիս Ճաշակիդ յարմար կ'զանես, և շնորհակալ եմ մարդավարութիւնք : Սակայն եթէ վանական ժոմկալութիւնը խստիւ պահել ուղես — յարեց նա — և թթու կաթդ զինիւս վեր կ'զասես, կ'աղաչեմ ինքընքդ մի նեղեր և կամքդ կատարէ :

— Ո՛չ — ըսաւ վանականը խնդալով — մինակ մեր մենաբանը ընկառ կ'այելենք . երբ մարդկան հետ կ'կենակցինք անոնց սովորութիւններու կ'յարմարինք, ուստի, այս աղւոր զինիով կը պատասխանեմ քեզ, և այն թեթեւիկ ընկելին աշխարհիկ եղբօրս կ'թողում :

— Իսկ ես — ըսաւ ասպետը զաւաթը լնով — զեղանի Բովէնքափի կենաց պիտի ըմսիմ. վասն զի իր համանուն կինն յԱնկ-

լնա իր անունը բերելէն վեր՝ բնաւ չէ զտնուած էակ մ'որ իրմէ աւելի այս նուերին արժանի լինի : Արգարե. արամադիր եմ ներելու անբաղդ. Աօրդիմէրնի, իր պատիւն ու տերութիւնը՝ ի կորուստ մատնելուն՝ եթէ միայն մեր նկատած էակին պէս էակ մը կիսովին դրզիւ տուած է :

— Քաջդ ասպետ — ըսաւ վեհաճնօրէն Յօվէնա առանց քողը հանելու — մարդավարութիւնդ չարաչար չպիտի զործածեմ, կամ ըստ ևս ըսեմ, քեզ ծանրութիւն պիտի տամ Պայլեստինի վրայ ըլուրեր հարցնելով, և այս նիւթը մեր ականջներուն աւելի ախորդելի է քան թէ զաղղիական քաղաքավարութեանդ քեզ ուս սուցած զովեստները :

— Կարեռը բաներ չունիմ հաղորդելու, օրիորդ — պատասխանեց Պրայն աղուա-Կիլպէր . — այս միայն դիտեմ որ զինադուլը խաչակրաց և Սալատինի մէջ ստուգուած է :

Վամպա անոր խօսքն ընդմիջեց, երբ եկաւ իրեն յատուկ տեղը նստաւ աթոռի մը վրայ որ իշրու երկու ականջներով զարդարուած՝ և իր ափորջը զահէն երկու քայլ հեռու ետեփ կողմը գրուած էր : Տանտէրն ատեն ատեն՝ իր պինակէն անոր կերակուր կ'ապար, և այս շնորհը մեր արդէն յիշած շատ մը շուներու հեա ինդզ միմուր կ'վայելէր : Վամպա այսպէս նստեր էր, իր առջեր փոքրիկ սեղան մ'ունէր, և իր կրուկներն աթոռին ձողերուն վրայ գրեր էր . իր այտերը փոսելովը՝ ճնոտին զոյդ մ'ընկուզարեկի (nut-crackers) ձև տուեր էր, և իր աչերը թէւ կէս զոյդ անդուլ կ'զիտէր որ առիթ մը դանէ իր ծաղրածու տաղանդը զործածելու :

— Այս զինադուներն անհաւասից հետ — զոչեց Վամպա, առանց գիտելու թէ ինչպէս վէս ասպետին խօսակցութիւնը խրոխտարար կ'ընդհանրէ . իս ծերացուցին :

— Ինչպէս, ապիրանա — զոչեց Սէտրիկի, որուն զուարթ դէմքէն կ'իմացուէր որ այս կատակէն կ'ախորդէր :

— Որովհետեւ — պատասխան տուաւ Վամպա — իմ կենդանութեանս ատեն արդէն երեք զինադուլ կ'յիշեմ, որոց ամէն մէկը յիսուն տարի պիտի տեւէր . այնպէս որ հաշիւ ընելով կը նայիմ որ հիմակ՝ հարիւր յիսուն տարու պէտք էի որ լինիմ :

— Վամպահովեմ որ ծեր չպիտի մեռնիս — ըսաւ տաճարաւ

կանը , որ նոյն պահուն դիմեց թէ խօսողը անտառին մէջ հաճախ գիտած բարեկամն է : Հայ , ստոյդ եղիք որ բուռն մահով պիտի մեռնիս եթէ այս իրկուն վանահօր և ինձ տուած տեղեկութիւններուդ պէս տեղեկութիւններ տաս ուղևացներուն :

— Ինչպէս — ըստ Սէտրիկ — ուղեղողներուն ծովո ճամբայ կը ցուցնէ : Խարազանը կ'սպասէ քեզ, որովհետեւ որչափ յիմար նոյնքան անզգամ ես :

— Կ'աղաչեմ քեզ, տէ՞ր իմ — սպասասխանեց միմուը — թող
մի անդամ յիմարութիւնս նենդութեանս օգնէ : Մինակ աջ ու
ձախ ձեռքիս մէջ սխալմունք մ'ըրի . և յիմար մը խորհրդաւ
տուի տեղ առնողը պէտք է որ աւելի ծանր յանցանքի մը նե-
րողամբաւ լինի :

Այս տեղ արտաքին պահապան մը ներս մասնելով՝ խօսակցութիւնն ընդմիջեց, և յայտնեց թէ օտարական մը դրան առջեկեցէր հիւրընկալութիւն կ'հայցէ:

« Ա Ե Ր Ծ Հ Յ Ա Մ Գ Պ Ո Ւ Թ — ը ս ա ւ Ս է Թ Բ Ի Կ — ո ՞ լ ո ր կ ՛ ո վ է թ ո ղ լ ի ս ն ի , այսպիսի մ ր ր կ ա լ ի դ ի շ ե ր մ ը՝ վ ա յ ր ի կ ե ն գ ա ն ի ն ե ր ն ա ն գ ա մ ը ն ս տ ա ն ի ա ն ս ա ս ո ն ն ե ր ո ւ մ օ ս տ ա պ ա է ն մ ը՝ և մ ա ր դ ն ի ս կ ի , ա ն հ ա շ տ թ շ ն ա մ ի է ն ս պ ա շ տ ա ն ո ւ թ ի ւ ն կ ի ն ո ղ ը է տ ա ր ե ր ա ց կ ա ս դ ո ւ թ ե ն է ա զ ա տ ե լ ու հ ա մ ա ր : Ն ո ր ե կ հ ի ւ ր ի ն ա մ է ն ի ն ա մ ի ք տ ո ւ է ք . հ ո դ տ ա ր դ ու , օ ս վ ա լ ա տ :

Եւ տնտեսը սեղանատունէն դուրս ելաւ տանտիրոջ հրաման։
Ներն՝ ի դորձ գնելու։

ԳԼՈՒԽ Ե

Այլ հիմք հւեայ մի աշխ չունի. միթէ ձեռք, գործաքաններ, չփայտանք, յօթարութիւն և կիրք շուռնի. միթէ մի և նզի սը-նունդով չ'ունաիր, մի և նշյան զենքով չ'վերասորիր, մի և նյյան հիւանդութիւններու ենց ակայ չէ, մի և նշյան միջոցներով չ'դար-նանուիր. միթէ մի և նշյան ձմեռէն և ամառէն շմիր և չ'ըսպ-նար ճիշտ մի քրիստոնէի պէս:

ՎԵՆԵՏԿԻ ՎԵՃՄՈՒԿԱՆ

ՕՍԱՎԱԼՏ ետ դառնալով՝ իր տիրոջն ականջին փսխաց։
— «**Յորեկ** հիւրը հրեայ մ'է, որ ինքզինքն Եօրք քաղքի բնիկ
Խասհակ կ'կոչէ, միթէ կ'վայլէ որ զանի սրահը հրամցնեմ։

— Թողարկած այդ սպաշտոնը կիւրիթ կատարել, Օպվալու — ըստ Վամփա իր սովորական լրբութեամբը — հրէին յարմար կարապետ մը՝ խոզպանը կընաց լինիլ:

— Սուրբ կյս — ըստ վանահայրը խաչ հանելով — ի՞նչ պնդաւած է ու մը մեր առ ցե պիտի ներկայանայ:

— Ծաւն հրէայ մը — ձայնեց տաճարականը — ի՞նչպէս Սուրբ
զերեղմանին պաշտպանի մը պիտի մօտենայ :

— Երաւի — ըստ Վամպա — կ'երևի թէ տաշարականն ըն առելի կ'ուրեն չըէից ժառանդութիւնը քան ընկերութիւնը :

— Մի այլայլիք, իմ արժանի հիւրես — ըստ Ակտբիկ — շեմ կարող իմ հիւրասիրութեանս չափ գնել ձեր ատելութեան պատճառաւ : Եթէ Աստուած այն կամնկոր և թերահաւասար ազդին շատ տարիներ հաշտ աչօք նայեցաւ, մենք ինչո՞ւ համար հրէի մը ներկայութեան մի քանի ժամ չհանդուրմէնք : Բայց շեմ ստիպեր մէկն որ անոր չեւ խօսի կամ կերպակոր ուտէ թող անոր սեղանը զատ տեղ մը դնեն, միայն թէ — յարեց նստավորվ — եթէ կամին չեմ արգիլեր որ այս սապարօշ հակնող օտարականներն անոր չեւ ընկերակցին :

— Պարո՞ն Սէտբիկ — պատասխան տուաւ տաճարականը —
իմ սարակինացի զերիներս Ճշմարիտ մահմէտական են, և քրիս-
տոնեի չափ կ'իսորշին հրէի հետ տեսակցութիւն ընկլու :

— Ճշմարիտու կ'ըսեմ — յարեց վասնա — որ չեմ հասկած

թէ ինչպէս Մէհմէտի ու Տէրմականդի պաշտօնարկուներն երբ բեմն յՆստուծոյ ընտլեալ ժողովուրդէ մը դերազանց լինին :

— Հրէան քու քովդ պիտի նստի, Վամակ — ըսաւ Սէտրիկ յիմարն ու խաբեբան իբար պիտի զանեն այս կերպով :

— Յիմարը — պատասխան տուաւ Վամակ՝ Ճարպի մը կտոր ցոյց տալով — խաբեբային դէմ պատուար մը կանդնելու միջոցը պիտի դմէնէ :

— Կուռեթիւն — ըսաւ Սէտրիկ — վասն դի ահա ներս կ'մանէ նոր հիւրը :

Քարձրահասակ ծեր ու նիշար մարդ մ'որ իր բնական երակացնութիւնը կորուսեր էր ստէպ ծուելէն, ներս մտաւ, պաղ ընդունելութիւն մը դտաւ, շատ մը բարեներ ուղեց, ահով և վարանմամբ յառաջ անցաւ և դնաց ստորին սեղանին մէկ ծայրը նստաւ : Իր դէմքին կանոնաւոր և բարպակ դծերը, արծուի քիթը, իր սուր սև աշերը, իր լայն ու խորշոմած ճակատը, ալշղարդ երկար մազերն ու մօրուսը թերես աղլոր երեւեն, եթէ այնափսի ցեղի մը յատուկ նշանները չլինէին, որ՝ այն խաւարին դարերուն մէջ, միօրինակ ատելի էր դիւրահաւան ռամէկին, և ընչասէր աղնուականներու կողմէ կ'հալածուէր, և կարսէլի է նոյն իսկ այս ասելութեան և հալածանքին պատճառաւ ազգային յատուկ դրոշմ մ'առեր էր, որով աւելի ծանր խօսք մը չըսենք, խիստ անարդ և նողկալի կ'երեւէր :

Հրէին հաղուստն որ՝ ըստ երեսյթին փոթորկէն շաա ալտուտեր էր, բազմածալ պարզ վերաբու մ'էր որ մթաղոյն ծիրանի բաձկոնակ մը կ'ծածկէր : Մուշուակապատ լայն կոշիկներ հազեր և մէջքէն զօտի մը կապեր էր, որուն վրայ փոքրիկ զանակ մ'ու գրելու զործիներ կային՝ առանց դէնքի : Երկար, քառակուսի դեղին գտակ մը դրեր էր մասնաւոր ձեռով մը շինուած որպէս դի հրէաները քրիստոնէից գտաէն զանազանին ; և սրա հինդուններս մասնելուն նոյն զլիանոցը խոնարհութեամբ հանեց :

Խսրայէլի ամենէն անհաշտ թշնամին դոհ պիտի լինէր անշշուշտ տեսնելով թէ ինչ ընդունելութիւն կ'ստանայ նորեկ հըքէայ հիւրը Սէտրիկի սրահը մանելուն : Նոյն իսկ տանտէրը պաղ կերպով մը գլուխն օրեց 'ի պատասխան հրէին կրկնակը ողջոններուն և նշան ըրաւ որ սեղանին ստորին ծայրը նստի :

թէ ոչ ոք կ'շարժէր անոր տեղ բանալու . ընդ հակառակն կոչանաներուն կարգէն անցնելու ատեն՝ վարի կողմը նստող ներուն աղերսալի և վեհերոտ նայուած մը կ'նետէր, սակայն սաքսօն սպասաւորներն իրենց ուսերը կ'լայնէին և առանց նորի հիւրին հոդ տանելու իրենց ճաշն անլոնդատ կ'լափէին ։ Վանահօր սպասաւորները խաչ կ'հանէին բարեպաշտական կերպարան մ'առնլով, և նոյն իսկ սարակինացի ծառաները՝ իսահակը մօտենալուն իրենց դաշոյնը քաշցնը քաշեցին՝ իբր թէ ծայրայեղ միջոցներով անոր հաղորդակցութեան աղտէն ազատելու . պատրաստ էին :

Հաւանական էր որ Սէտրիկ ինչ հիւրամէր ողուզ որ իր տռենն այն ընկեցիկ ժողովրեան մէկ զակին բացեր էր, նոյն ողուզ պիտի պատուիրէր իր սպասաւորներուն զանի աւելի մարդավարութեամբ ընդունելու, եթէ նոյն պահունակ վանահայրը նշանաւոր խօսակցութիւն մը սկսած չլինէր անոր որսական շոներուն ընտթեան և հոգատարութեան վրայ . խօսակցութիւն մ'որ բնաւէր ուղեր ընդհատել աւելի ծանր խնդիրներու համար անգամ, մող թէ հրէին անօթի անկողին երթալը :

Մինչդեռ այսպէս Խսահակ նոյն ընկերութեան մէջ իբր տառագիր կ'մնար, ինչպէս որ է իր Շալովուրդը միւս ազգերու մէջ, 'ի զուր բարե մը կամ հանդստեան տեղ մը փնտուելով, կրակարանին մօտ նստող ուխտաւորը զթաց անոր վրայ, և իր տեղն անոր տուաւ համառօտ ըսելով . — Ծեր մարդ, իմ լաթերս չորցան, փորս կշտայցաւ, իսկ քու վրադ թաց է և անշուշտ անօթի ես » : Այս ըսելով կրակարանին ցիր ու ցան խարցիները ժողվեց և կրակն աբծարձեց . վերջը մնձ սեղանէն քիչ մը թան և խաշած այծ առաւ, և դնելով այն սեղանին վրայ ուր ինքն ևս ընթրեր էր՝ սրահին միւս կողմն անցաւ առանց հրէին շնորհակալութեան սպասելու, թերես սա պատճառաւ որ չէր ուղեր իր բարեսրտութեան առարկայ եղող անձին հետ աւելի խօսակցիլ, կամ թէ վերի սեղանին մօտենալու փափաք ունէր :

Եթէ այն ժամանակիները քաջ պատկերհաններ զտնուելին, անտարակոյս ձմեռուան կենդանի պատկերը պիտի ընծայէր այն հրէայն որ կորակոր մարմնով՝ ցրտահար ու երերուն ձեռքերն երկնցած՝ կրակին վրայ կը ծռէր : Քիչ մը տաքնալէն ետև հըքէայ հրէ-

բեայն իր առջեկ կեցած շոգելիք ճաշին դարձաւ անկշտօրէն և այնպէս արսորնօք և հաճութեամբ կերաւ որմէ կ'իմացուէր թէ երկար ատեն կերակուրէ զուրկ մնացեր էր :

Նշյն միջոցին վանահայրն ու Սէտրիկ իրենց խօսակցութիւնը կ'շարունակէին որսի վրայ . Բովլէնան իր սպասուհիներէն մէկուն հետ խօսփի բռնուեր էր , իսկ վէս տաճարականը՝ որ իր աշքը հրէին վրայէն դէպ 'ի սաքսօն օրիգրդին կ'ածէր անդադար , կարծես թէ գլխին մէջ խիստ կարևոր խորհուրդներ կ'զարձնէր :

— Կ'զարմակամ , արդոյ Սէտրիկ — ըստ վանահայրը խօսքը շարունակելով — որ՝ թէե սաստիկ կ'սիրես քու առնական լեռ զրուտ , չես գործածեր զէթ որսի և անտառային բառերու համար ֆրանքօ-նօրման բարբառը : Իրաւի չկայ լեզու մ'որ զաշտային հրաշանգի մասին այնչափ չոփի բացատրութիւններ ունենայ , կամ անդէորդին այնքան միջոցներ քննայէ իր զուարթ արհեստը բացատրելու համար :

— Բարի հայր Էյմէր — ըստ սաքսօնը — քաջ զիտցիր որ պնդր-ծովեան նրբութիւններն աչքիս ստակ մը չեն արժեր , և առանց անոնց կրնամ իմ գործս տեսնել անտառներուն մէջ : Կարող եմ իմ փազս հնչել , թէ և ոչ րեհեաւ և կամ ոչ մorte կ'անուանեմ դոչինը : Կարող եմ շուներս որփ գրգռել , կարող եմ կենդանին քերծել և չորս կատր ընել առանց զորժածելու սապիսի գոեհիկ բառեր , շուրջ , արծու , արծունութեան բոլոր զբարան թրիստանմին բարբանջը :

— Գաղղիարէն լեզուն — ըստ տաճարականը՝ ձայնը բարձրացնելով և սյնալիսի խրոխաւ ու իշխանական կերպով մ'որ ամէն առթիւ կ'զործածէր — ոչ միայն որսորդութեան բնական լեզուն է , այլ նաև սիրոյ և պատերազմի . լեզու մ'որով կիները կը հրապառենք և թշնամիներ կ'սուածենք :

— Ասպետ տաճարական , ձեռքդ բաժակ մ'առ լեցուր — ըստ Սէտրիկ — և վանահօր ալ տուր , մինչդեռ ես պատմութիւն մ'ըսնելու համար կենացս վերջին երսուն տարուան միջոցն աչքէ պիտի անցնեմ : Այն ատեն սաքսօն Սէտրիկն ինչ որ էր , իր պարզ անկլիական պատմութիւնը գաղղիական վիպասաններու իբայլէն ողէտք չունէր կանանց հաճելի դառնալու համար , և որբթալէրուն՝ պատերազմի դաշտը՝ նորիրական դրոշակը պար-

զուած օրը , կրնայ վկայել թէ՝ սպասոնեան դորի աղաղակը չը լսուեցաւ սկովտիական բանակին մէջ՝ ամենէն յանդուգն նօրման սեպուհի մ'աղաղակին չափ : Հիւրերս , այն կրուին մէջ պատերազմով քաջերուն յիշասակին կ'առաջարկեմ այս բաժակսն Այս ըսելով բաժակը սպարպեց և իր խօսքը շարունակեց աւելի ջերմագին : — Այն , այն օրը քանի՛ քանի ասպարներ բեկան , երբ հարիւրի չափ դրոշակներ քաջերուն դլիսին վրայ ընկան , երբ ջրի պէս արիւն վաղեցաւ , և մահ նախադաս համարեցաւ քան փախուստը : Սպասօն վիպասան մը՝ սուրերու խնջոյք մը , որսին բոլորակը արծիւներու զումարում պիտի անուանէր այս պայքարը , վահաններու և սպասարսներու թնդիւնը , պատերազմի գու ու բոմբիւնը՝ հարսանեաց ցնծութեան ձայններէն աւելի զուարթուն : Սակայն մեր վիպասանները մեռան — ըստ նա — մեր գործերն ուրիշ ցեղի մը գործերուն մէջ կորսուեր են , մեր լեզուն՝ նոյն իսկ մեր անունն օր քան զօր աներևոյթ լինելու վրայ է , և մինակ ինձի պէս մենաւոր ծերունի մ'այս աղետքը տեմակլով խոր սուզի մէջ կ'համակուի : Մատուուակ անզգամ , լեցուր բաժակները : Տաճարական , այս բաժակը պիտի ըմպենք քաջազէն մարտիկներու համար , թող ինչ ցեղէ կ'ուզեն լինին , այն կարիքներուն համար որ Պաղևստինի մէջ խաչին ախոյեան կ'կանզնին անվլեհեր :

— Այն նշանը կրողին չընկնիր պատասխանելու — ըստ Պրայն առ Պուա-կիլպէր ու սակայն Խաչին ախոյեաններու մէջ ոյլք աւելի արժանի են այդ սպատուին եթէ ոչ անոնք որ Սուրբ գերեզմանին երդուեալ ախոյեաններն են :

— Հաւրասէր ասպետներուն արժանի է — ըստ վանահայրը — անոնց կարգին մէջ եղբայր մ'ունիմ :

— Անոնց համբաւը չեմ անարգեր — ըստ տաճարականը — սակայն . . . :

— Սէտրիկ բարեկամ , ինձ կ'երեկի որ — ըստ Վամազա կրօնաւոր զինուորին խօսքը կտրելով — եթէ Առիւծասիրութ Յիշարու բաւական իմաստուն լինէր խենդի մը խորհրդին հետեւելու , իր զուարթ անկլիական յիշարութ հետ տեղը կ'նսաւէր՝ նըռուաղէմի աղաղատումը թողով այն ասպետներուն որ այս գործին մէջ շահ ունեին :

— Եւ միթէ անկլիական բանակին մէջ չկա՞ր անձ մ'որուն աւ-

նունը տաճարական և Ս. Յովհաննու ասպետաներուն հետ յիշութելու արժանի լինի . . . — ըսաւ օրիորդ Յօվէնա :

— Ներէ ինձ, օրիորդ — պատասխան տուաւ Պուա-Կիլպէր — իրաւ է որ Անկլիոյ թագաւորն իր հետը քաջասիրտ մարտիկներու բանակ մը մերեր էր՝ 'ի Պաղեստին, որ արիութեան կողմէն նոյն օրհնեալ երկրին անսասան պատուարն եղող քաջերուն երեկորդ կարդը կ'բռնէին :

— Ոչ, ամենէն ԳԵՐԵԶՄԱՆՑ էին — զոչց ուխտաւորը, որ բաւական մօտ եկեր էր անոնց խօսքը լսելու համար, և այս խօսակցութիւնն ակներեւ անհամբերութեամբ մտիկ ըբեր էր :

Ամենուն աչքը այս անակնկալ վկայութիւնը տուող անձին կողմը դարձան : « Այս, նորէն կ'ըսեմ — կրկնեց ուխտաւորը հաստատ և ուժդին ձայնով մը — թէ անկլիացի ասպետները ԳԵՐԵԶՄԱՆՑ էին այն ամէն մարտիկներէն որ Ս. Տեղեաց պաշտպանութեան համար զէնք առին : Կ'ըսեմ նաև, քանի որ աչքս տեսայ, որ նոյն իսկ Բիշարտ թագաւորը՝ ու իր ասպետներէն հինգ հոգի՝ Աքիափ բերդն առնլէն ետև՝ նիդակախաղ զուպար մ'ըրին և որ և է քաջի հետ մենամարտելու հրաւեր տուին : Կ'անդեմ թէ նայն օրը, մէն մի ասպետ երեք անդամ՝ 'ի վէդ ելաւ. և երեք ոսոխ զեախն տապալցեց : Կ'յաւելում նաև, որ այն ոսոխներէն եօթ հոգի տաճարական ասպետներ էին և Պրայն որ Պուա-Կիլպէր այս ըսածիս Ճշմարտութեան կրնայ վկայել :

Անհնար է լեզուաւ նկարագրել տաճարականին կատարութիւնն որով իր մե դէմքն տւելի ևս սեցաւ. իր ասելութեան և շփոթութեան չափն անցնելով՝ իր դողդոջուն մատերը դէպ իր սրին դաստապանին տարաւ, ապա թռղուց, և թերևս զզաց որ կարելի չէր բռնութեան զործ մ'ընել ապահովութեամբ այն տեղ ներկայ գտնուողներուն առջեւ : Աէտրիկ՝ որուն զդացումները միշտ ողիղ էին և անկեղծ՝ չէր կրնար շատ բաներու մէկէն ուշ դնել, ուստի այնքան բերկութիւն զդաց իր հայրենակիցներուն փառքն ու արիութեան զավեսոր լսելով՝ որ չդիտեց իր հիւրին զայրալիր շփոթութիւնը :

— Ոսկի ապարանջանը յօժարակամ սլիտի պարզեմ քեզ, ուխտաւոր — ըսաւ նա — եթէ ըսես ինձ այն ասպետներուն առնուներն որ զուարթուն Անկլիոյ համբաւն արիարար պահպանեցին :

— Ամեն ցն սիրով խնդիրդ պիտի կատարեմ — պատասխանեց ուխտաւորը — առանց վարձ մ'ընդունելու, վասն զի իմ երդումն, դեռ քիչ մ'ատենուան համար, ոսկիի դպելու կ'արգիւլէ զիս :

— Ապարանջանն ես քու աեղդ կ'առնում, եթէ կ'հաճիս, աղնիւ ուխտաւոր — ըսաւ Վամպաւ :

— Պատույ և արիութեան, նոյնալիս համբաւի և պաշտօնի կողմէ առաջինն էր — ըսաւ ուխտաւորը — արին Ռիշարտ, Անկլիոյ թագաւորը :

— Կ'ներեմ — ըսաւ Սէտրիկ — կ'ներեմ անոր՝ Վիլյէմ բռնակալ դքսէն սերելուն :

— Երկրորդն էր Լիսէտրի կոմսը — շարունակեց ուխտաւորը . — Կիսլէնափ Թումաս Միւլգըն երրորդն էր :

— Գոնէ այս վերջինը սաքսօնեան տոչմէ կ'սերի — ըսաւ Սէտրիկ եռանդագին :

— Զորրորդն էր Ֆուլք Տուայլի սեպուհը — շարունակեց ուխտաւորը :

— Այս ևս սաքսօն է դէթ մօրը կողմէն — յարեց Սէտրիկ, որ ուշադիր մտիկ կ'ընէր, և ըստ մասին կ'մոռնար իր սին նօրման ցեղին դէմ, Անկլիոյ թագաւորին և իր կղզեցիներուն արիութեան հոչակն իմանալուն : — Եւ ով էր հինգերորդը — հարցուց նա :

— Հինգերորդն էր Թըրնհէմ Կավին սեպուհը :

— Բուն սաքսօն մը, Հէնմիստի հոգին վկայ — զոչց Սէտրիկ : — Հապա վեցերո՞րդը — շարունակեց նա շտապաւ — Բնշ է վեցերորդին անունը :

— Վեցերորդը — ըսաւ ուխտաւորը պահ մը կայ առնլէն ետեւ, որպէս թէ անունը յիշելու կ'ջանար — նորատի ասպետ մ'էր, որ աւելի քիչ համբաւ և ստորին աստիճան մ'ունէր, և այն պատուաւոր զնդին յարած էր ոչ այնչափ աջակից գտնուելու՝ որչափ անոր թիւը լցնելու համար . իր անունը միտքէ և ելեր է :

— Պարո՞ն ուխտաւոր — ըսաւ Պրայն քամահական ձայնով մը այնչափ բաներ միշելէն ետև՝ վերջնոյն անունը կամովին կը մտնաս և քու նողատակիդ չես կրնար հասնիլ : Ես ինքնին պիտի ապարանջանը յօժարակամ սլիտի պարզեմ քեզ, ուխտաւոր — ըսաւ Վամպաւ :

տի ըսեմ այն ասպեսին անուն որուն նիղակին առջև բաղդն ու իմ երիվարիս յանցանքն անկման պատճառ եղան, այն ասպեսին էր Խվանօէ, և այն վեց անձերուն մէջ թէ նորատի, իրմէ աւելի նշանաւոր մարտիկ մը չկար: Սակայն այս ևս կը փոթամ՝ ըսելու, որ եթէ այն ասպետը հիմակ Անկլիա դժոնտէր և այս շաբթուան լինելիք նիղակամարտին մէջ ինձի հետ այսպէս ասպաւաղէն չափուիլ և Եքիար մենամարտը կրկնել կամնար՝ զինոց առաւելութիւնն անոր կ'լինծայէի և հետը նորէն ի վէդ կ'ելնէի:

— Եթէ սոտիստ քովի լինէր — պատասխանեց ուխտաւորը — իսկայն կ'ընդունէր այդ մենամարտ (challenge): Սակայն քանի որ ներկայ չէ նա, մի՛ վրդովեր քու պարծուկ խօսքերովկ այս տան անդորրութիւնն այն մենամարտին ելքին վրայ, քանի որ զիտես թէ չկրնար տեղի ունենալ: Եթէ երբէք Խվանօէ Պաղեստինէն դառնայ, կ'ապահովէմ որ քեզի հետ չափուելու չպիտի վարանի:

— Աղօր ապահովութիւն — պատասխանեց տաճարական ասպետը — ասպա ի՞նչ զրաւ կ'գնես այս բանիս համար:

— Սա մասունքը — ըստ ուխտաւորը, և իր ծոցէն փղոսկրէ փոքրիկ տուփ մը հանեց, խացակնքեց — որ կարմնեան լեռնէն բերուած Ճշմարտին խաչի մաս մը կ'պարունակէ:

Ժօղվօյի վանահայրն ևս խաչ հանեց և հայր մեր մ'ըստ, որուն ամենքը միացան, 'ի բաց առեալ հրէայն, մահմէտականներն և տաճարականը, որ առանց զտակն հանելու կամ ակնարկեալ մասունքին սրբութիւնէ ակնածելու, վղէն ոսկի շղթայ մը հանեց և սեղանին վրայ նետելով ըստ: — Թող Էյմէր վանահայրն իմ և այս անանուն թափառականին զրաւն առնու պահէ, իբր ՚ի հաստատութիւն որ երբ Խվանօէ ասպետը չորս ծովերը պատով Քրիտանիոյ կղղին ոտք կոխէ, Պրայն տը Պուասպէրի մենամարտը պիտի ընդունի, և եթէ զայն մերմէ՛ բուլոր Եւրոպաի տաճարականներու գարպասին մէջ իբր վատ պիտի հոչակեմ զանի:

— Այդ բանն ընելու պէտք չպիտի լինի — ըստ Ռովէնա՛ իր ըստթիւնը զոր ցայն վայր պահեր էր՝ խղելով: — Եթէ այս սրահին մէջ տաճարակայ Խվանօէն պաշտպանուլ ձայն մը չկայ,

իմ հարկաւ պիտի լսուի: Կ'հաւաստեմ որ նա պատրաստ պիտի գանուի ամէն սպատուաոր մենամարտի արիաբար պատասխանել: Եթէ իմ տկար երաշխաւորութիւնս սոյն բարեպաշտ ուխտաւորին անդին զրաւին արմէքը կարող է աւելցնել, անունս և պատիւս զրաւ կ'դնեմ՝ ստոյդ լինելով որ Խվանօէ այս զոռող ասպետին հետ պիտի մենամարտի:

Կ'երեւէր թէ նոյն պահուն իրարու ներհակ զգացումներ Սէտրիկի սիրու պաշարած լինելով՝ չէր կրնար խօսիլ սոյն վիճականութեան ժամանակ: Գոհունակ հպարտութեան, քինու և շրջափութեան նշաններն իր լսյն և կայտառ Տակտին վրայ իրարու կ'յաջորդէին, ցորենի արտի վրայ անցնող ամպերու ստուերի նման, մինչդեռ իր սպասաւորները, որոց վրայ վեցերորդ ասպետին անունը զրեթէ գիւթական ներգործութիւն մ'ունէր, իբրենց տիրոջ կ'նայէին ակնապիշ: Սակայն երբ օրիորդ Ռովէնան խօսեցաւ, անոր ձայնին հնչինը կարծես թէ Սէտրիկի թմրութիւնը փարատեց:

— Օրիորդ — ըստ Սէտրիկի — այդ խօսքը քեզի չվայլեր: Եթէ ուրիշ զրաւ մը պէտք լինէր, ես ինքս որ իրաւի նախաւած եմ, Խվանօէին համար իմ պատիւս զրաւի կ'գնէի: Բայց մարտին զրաւը կատարեալ է, նոյն իսկ նօրմանեան ասպետութեան այլանդակ կանոններու համեմատ: Միթէ ըստ Ճիշտ չէ, հայր Էյմէր:

— Ճիշտ է — պատասխան տուառ վանահայրը: — Եւ ես այս օրհնեալ մասունքն ու Ճոխ շղթան մէր վանքին զանձաստան մէջ ապահովապէս պիտի պահէմ, մինչեւ որ մենամարտութեան արդիւնքը անոնտի:

Այսպէս խօսելով՝ վանահայրը կրկին ու կրկին խաչ հանեց և շատ մը ծունդ դնելէն և աղօթք ընելէն ետև՝ մասունքն իրեն սպասաւորով եղբայր Ամֆրափասի տուառ, մինչդեռ նուազ յարդանօք, թէ նոյն ըստ զրաւի գոհունակութեամբ ոսկի շղթան առնաւ և իր թմրին ներբեկ զանուած կաշխապատ փոքրիկ զրավանին մէջ դրաւ: — Արդ, արդոյ Սէտրիկ — ըստ նա — քանի որ աչկանչներս զանդակի պէս կ'խօսին ձեր ընտիր դինին շնորհիւր, ներեցէք մեզ օրիորդ Ռովէնափ կենդանութեան բաժակ մ'ևս պարպել, և ասպահաման տուեր մէջ հանդստանալու երթաւ:

— Պրօնհուլմի խաչը վկայ — ըստ սաքսոնը — քու համբաւիդ
մեծ պատիւ մը չես բերեր, պատուարժան վանահայր։ Զուարթ
եկեղեցականի մ'անունն ունիս, և կ'ըսեն թէ ժամկոչը դալէն
առաջ բաժակը ձեռքէ չես թողուր. ասոր համար՝ թէ և ծեր եմ,
կ'վախնայի որ քեզի հետ դլուխ չպիսաի ելնեմ։ Բայց, իբաւի,
տանն երկու տարու սաքսոն պատանեալ մ'իմ ժամանակս այդչափ
շուտապ դինիի բաժակը մէկդի չէր թողուր։

Սակայն վանահայրն իր ընտրած ժութելութեան դրութեան
հետևելու պատճառներ ուներ : Ոչ միայն՝ ի պաշտօնէ հաշտա-
րար էր, այլ ՚ի փորձ կ'ատէր ամէն տեսակ կուխներ և վէճեր-
եւ այս ընթացքը չէ թէ անձնասիրութենէ կամ մարդասիրու-
թենէ կ'բռնէր, այլ այս պարագայիս մէջ սպասոնին խրոխտ բը-
նութիւնը կ'ձանչը և կ'վախնար որ իր ընկերին աննկոն և անհ-
նապաստան ողին՝ որուն փողձերն արդէն ստեղ տեսեր էր, նոյն
ընկերութեան մէջ փոթորիկ մը չհանէ : Ուստի մեղմօրէն հաս-
կցուց որ անհնար է որ և է օտար բնակչի մը յանդուզն ու
պահպան սպասոններու հետ մըսիլ այս մասին . նոյնպէս կա-
մացուկ մ'իր նուիրական պաշտօնին վրայ քանի մը խօսք մրմր-
ուց, և խօսքն աւարտեց ներում ինդրելով որ հանդսանալու
երթան :

Հետևապէս վերջին բաժակը լցին, և հիւրերը տանտիրոջ և
օրիորդ Յօվէնախին յարզական խոնարհութիւն մ'ընելէն ետև՝ զա-
ւաթները պարսկեցին, յետոյ իրարու խառնուցան, մինչդեռ
տան մեծերն իրենց սպասառորներու հետ այլ և այլ գոներէ
դուրս կ'ելնէին :

— Անհաւանուն — ըստա տաճարականնը հրէայ Խաչակիլին,
այն միջոցին որ ամբոխին հետ իր քովեն կ'անցնէր — արդեօք
անձունու այսինի երթաս :

— Այդ միտքն ունիմ — պատասխան տուաւ Խսահակ խոնարհութեամբ ծռելով — եթէ ձեր արժանապատիւ քաջութեան անհաջող չթուիր :

— Այս — ըստ ասպետը — որպէս զի մեր ազնուականներուն
արիւնը քամես վաշխառութեալը , և կիններն ու սպասանինները
խաբես քու գոհարներուլ և խաղալիկներուլդ : Գրաւ կ'զնեմ որ
սա պարկիդ մէջ անբաւ ոսկի կայ :

— Ոչ ոսկի , ոչ գահեկան և ոչ իսկ թանկմ . Աբրահամու Աստուածն օդնէ ինձ — ըստ Հրեայն ձեռները պրկելով : Սոյն հանդիսին սլետի երթամ որ իմ աղջակից եղայրներէս նըստ սրստ ինդրեմ որպէս զի Հրեկից Գանձապետին իմ վրայ դրած հարկը վճարեմ . Յակոբ նահապէտ սրահանէ զիս , աղքատ թշուառ մ'եմ , նոյն իսկ հաղած վերարկուս Թատկաստրի Որութէնինն է :

Տաճարականն այս պատասխանին վրայ քթին տակէն խնդաց.
— Նղովից արմատը, նայէ ինչ չարասիրտ ստախօս մ'է — ըստ տաճարականն և յառաջ անցաւ, որպէս թէ հրեէն հետ խօսքն երկարելու կ'անդոսնէր, և ներկայ զանուողներուն անձանոթ լեզուով մը ասրակինացի զերիներուն բան մ'ըսաւ : Հեք խարայէլացին մարտիկ կրօնաւորին յանդիմանական ձայնէն այնքան շուարեր էր որ տաճարականը սրահին միւս ծայրը համնելէն ետեւ միայն՝ սիրտ ըրաւ այն իր նուաստ դիրքը թողլով զըսլուխը վերցնելու՝ որ տեսնէ թէ գուրս ելնելու ժամանակը հաստ թէ ոչ։ Երբ վերջապէս չորս զին նայելու ելաւ, այնպէս ասղած էր կարծես թէ իր առջեր կայծակ մ'իջեր էր և անոր որտասալիք ձայնը գեռ իր ականջին մէջ կ'չնչէր։

ԳԼՈՒԽ Զ.

Իր շնորհը գտնելու, իմ սիրոս կ'տամ.
Եթէ բնդունի, լաւ, թէ ոչ, մաս բարև,
Եւ, իմ սիրոյ համար, բնդքեմ ինձ մի վասեր:

ՎԵՆԵՏԻԿԻ ՎԱՃԱՌԱԿԱՆԸ

ԵՐԲ ուխտաւորն՝ որուն առջևէն ջահակիր մը կ'երթար,
այս ընդարձակ և անկանոն տան պատ 'ի պատ սենեակներէն
կ'անցնէր, ետևէն եկու մատուակն անոր ականջին փսփսաց
որ՝ եթէ հաճի իր խոցը զալ և բաժակ մը մեղքըմպելի ըմպել,
շատ մը սպասաւորներ կան որ անձկանօք պիտի լսեն երուսա-
ղմէն բերած լուլերը, մանաւանդ իվանօէ ասպետին վերաբե-
ռեալ զբոյցները։ Նոյն պահուն Վամպա վրայ հասաւ և նոյն
խնիրը կրկնեց, յայտնելով որ կէս զիշերէն ետքը բաժակ մը
մեղքըմպելի աւելի մեծ արժէք ունի քան կրակաթաղէն առաջ։
Այսպիսի ծանր պատղամի մէջ բերած առածին դէմ առարկել
տելորդ սեպելով ուխտաւորը շնորհակալ եղաւ անոնց մարդա-
վարութեան, բայց աս կէտը հասկուց որ իր կրօնական ուխտին
հետ պարտաւորութիւն մ'առած է իր վրայ, այսինքն, տիրոջ
որահին մէջ արգիլեալ բաներուն վրայ բնաւ չխօսիլ խոհանոցը։
— Ահաւասիկ ուխտ մը — ըստ Վամպա մատուակին։ — որ ըս-
պասաւորի մը բնաւ չյարմարիր։

Մատուակը դժկամակելով ուսերը վեր վերցուց։ — Ես այս
ուխտաւորին լաւ սենեակ մը տալու միտք ունէի — ըստա. —
բայց քանի որ պաղէ կ'վարուի քրիստոնէից հետ, ես ալ զանի
հասհակ հրէին կից սենեակը պիտի դնեմ։ Ինվօլտ — յարեց
նա ջահակիր ծառային դառնալով — սա ուխտաւորը հարաւային
խղիկը տար։ Գիշեր բարէ քեզ, արդոյ ուխտաւոր, քիչ մարդա-
վարութեան թեթև շնորհակալութիւն կ'վայլէ։

— Քեզ լոյս բարի, և տիրամայրը քեզ օրհնէ — ըստ ուխտաւորը հանդարտ և իր առաջնորդին հետեւլով։

Այն ինչ նեղ նախասենեակ մը մտան որ շատ դուներ ունէր

և երկաթէ կանթեղով մը լուսաւորած էր, Յօվէնաի սպասուհի-
ներէն մին իրենց առջեւ ելաւ, որ իշխանական ձայնով մ'ըստ
թէ իր տիրուհին ուխտաւորին հետ խօսիլ կ'ուզէ։ ուստի են-
վոլտին ձեռքէն ջահն առաւ, ապապրեց անոր որ վերադարձին
սպասէ և ուխտաւորին նշան ըրաւ որ ետևէն երթայ։

Կ'երեկի թէ ուխտաւորը յարմար չգտնեց այս հրաւերը մեր-
մելու, ինչպէս որ մատուակինը մերմեր էր, վասն զի թէն
կերպերէն կ'իմացուէր որ զարմանք կ'զգայ, անխօն և անմոռնչ
սպասուհին հետեւցաւ։

Նրբաղաւթէ մ'անցնելով՝ եօթ աստիճանով սանդղէ մը վեր
ելան; որոց խւաբանչիւրը հաստ կաղնի դերանէ շինուած էր,
և օրիորդ Ռովէնաի սենեակը հասաւ, որուն շքեղութիւնը կ'հա-
մապատասխանէր սամստիրոջ անոր ցոյց տուած յարդանաց։ Պատերն
ուկեթել մետաքսէ վարադոյրներով ծածկուած էին և դարուս
տարած ամէն արհեստը թափեր էին որսէս զի զցնզգոյն որսոր-
դութեան և բազէի տեսարաններ ներկայեն։ Սահիճը նոյն ձո-
խութեամբ զարդարուն՝ և ծիրանի վարադոյրներով շրջապատ-
ած էր. աթուներն ալ զունաւոր կերպասով ծածկուած էին,
և անոնց մին որ միւսներէն աւելի բարձր էր՝ վարի կողմը զըր-
ուած ձարտարութեամբ քանդակուած փղոսկրէ աթուակ մ'ունէր։

Չորս հատ արծաթէ աշտանակներ՝ մեծ մոմերով սենեակը կը
լուսաւորէին։ Սակայն պէտք չէ որ մեր արդի զեղանի կիները
սաքսօն իշխանուհուց մը շքեղութեան նախանձին։ Սենեկին պա-
տերն այնպէս թերակատար և ծերպալի էին որ պերճ սրահակ-
ները հովէն կ'շարժէին, թէև տեսակ մը հովանեակ (screen)
դրեր էին հովէն պահպանելու համար. ջահերուն բոյն օդին
մէջ ասդին անդին կ'ասատանէր հրամանատարի մը դրոշակին պէս։
Շքեղութիւնը կ'տիրէր նոյն սենեկին մէջ, վայելութեան հաս-
նելու փորձեր կ'տեսնուէին, ասկայն դիւրատարութիւն դրեթէ
չկար, և որովհետեւ այս բանս չէին դիտեր, անոր կարօտութիւ-
նը չէին զգար։

Օրիորդ Ռովէնան մեր արդէն յիշած զահին վրայ նոտեր էր.
իր չորս դին երեք նամիշներ առեր մազերը կ'սանստրէին ան-
կողին մտնելէն առաջ, և կարծէս թէ ամենուն ակնածութիւնը
զբաւելու բնածին ձիբք մ'ունէր։ Ուխտաւորն այս ակնածական

յարդանքը մատոյց անոր խորին ծնբաղբութիւն մ'ընելով։
— Ոտք ելիր, ուխտաւոր — ըստ անոր շնորհալի կերպով մը
— բացակայից պաշտպանն իրաւունք ունի սիրով ընդունուելու
այն ամէն անձերէն որ ճշմարտութիւնը կ'սիրեն և արիութիւնը
կ'պատուեն — : Այն ատեն իր նաժիշտներուն ըստ . — Գայկ,
դու միայն կեցիր, կլծիթա, այս սրբակրօն ուխտաւորին հետ
քիչ մը պիտի խօսիմ։

Սպասուհիները սենեկէն գուրս չելնելով հեռաւոր անկիւն
մը քաշուեցան և պատին կից բազմոցի մը վրայ նստան՝ իբր քա
րէ արձաններ, թէ այն հեռաւորութենէ իրենց փափստքը չէր
կրնար վրովել տան տիրուհւոյն խօսակցութիւնը։

— Ուխտաւոր — ըստ Քօվէնա՝ պահ մը լուռ կենալէն ետե,
վասն զի կ'խորհէր թէ ի՞նչ կերպով խօսքն ուղղէ օտարակա-
նին — այս իրկուն դու անուն մը յիշեցիր, այսինքն — յարեց
նա Ճիզ մ'ընելով — Իվանուի անունն՝ որուն հնչիւնն ազդակ-
ցութեան և բնութեան շնորհիւր պարտ էր աւելի շարժէր մեր
սիրտերը, սակայն ճակատագիրն այնքան անիրաւ է որ այն սըր-
տերուն մէջ՝ ես միայն կ'իշխեմ հարցնելու քեզ թէ ուր և ի՞նչ
ասաթճանի մէջ թողեր այն ակնարկած անձու : Իմայսանք որ իր
առողջութիւնը կապտուելու համար Պաղեստին մնալու սախա-
ռած լինելով անկլիական բանակին մեկնելէն ետե՝ դաղղիացի
զօրաց երեսէն հալածանք կրեր է, որոց, ինչպէս որ յայտնի
է, տաճարականները յարած են։

— Շատ բան չգիտեմ Իվանու ասպետին վրայ — պատասխա-
նեց ուխտաւորը՝ այլայլած ձայնով մը : — Կ'փափաքէի լսու ևս
Ճանչել զանի, քանի որ դու, օրիորդ, անոր վիճակին մեծ հոգ
կ'տանիս : Կարծեմ թէ իր թշնամիներուն Ճանկէն հեռացաւ և
կ'տանիս : Կարծեմ թէ իր թշնամիներուն կ'սատրաստուէր . և դու, ախ-
ռաղեստինէն Անկլիա դառնալու կ'սատրաստուէր . և դու, ախ-
ռուհիս, պէտք է որ իզնէ քաջ զիտնաս թէ ի՞նչ երջանկու-
թիւն կ'սպասէ իրեն։

Օրիորդ Քօվէնա խորին հառաչեց, և յատկապէս հարցուց թէ
արդեօք Իվանու ասպետն երբ պիտի դառնայ իր հայրենի եր-
կիրն և թէ Ճամբան վասնզի կրնայ հանդիպիլ : Առաջին կէ-
տին նկատմամբ՝ ուխտաւորն իր տղիտութիւնը յայտնեց, երկ-
րորդ հարցման վրայ՝ ըստ թէ Վենետիկի և Ճէնովաի Ճամբով

ապահովի կրնայ Գրանսա և անկից Անկլիա անցնիլ : — Իվանու-
— ըստ նա — այնքան հմտութ է Գրանսաի լեզուին և բարուց որ
սոյն Ճամբորդութեանը մէջ փորձանքի մը հանդիպելու վախ չը
կրնար ունենալ :

— Երանի թէ — ըստ օրիորդ Քօվէնա — անվտանգ իր բը-
նիկ երկիրը համեր, և կարող լինէր մօտալուս նիվակամար-
տին մէջ պայքարել, քանի որ տեղոյս բոլոր ասպետներն ի-
րենց արբութիւնը պիտի ցոյց տան այն տեղ : Եթէ Գօնիկա-
պըրի Ամէլյանը մրցանակը տանի, թերևս Անկլիա համե-
լուն Իվանու տխուր լուրեր պիտի լսէ : Օտարական, վերջին
անդամ զանի տեսնելուդ ինչպէս զտար : Միթէ հիւանդութիւնն
անոր ոյժն ու վայելութիւնը սաստիկ խանգարե՞ր էր թէ ոչ :

— Աւելի թուխ և նիշար երես մ'առեր էր — ըստ ուխտա-
ւորը — քան թէ երբ Առիւծասիրա Ֆիշարտին հետ Ախորոս կը-
զեկէն դարձաւ, և կարծես թէ Ճակտին վրայ անձկութիւն մը կը
տիրէր, բայց ես անոր մօտ չզայի, որովհետեւ հետը յարաբե-
րութիւն չունիմ։

— Կ'վախմամ որ իր բնիկ երկրին մէջ — ըստ Քօվէնա —
այնչափ սփոփանք չպիտի գտնէ իր արտօնութիւն մնայլը փարա-
տելու : Շնորհակալ եմ, բարեսիրտ ուխտաւոր, որ իմ մանկու-
թիւնս ընկերին վրայ այդ տեղեկութիւնները հաղորդեցիր ինձ:
Աղջիկներ — յարեց նա — մօտեցէք և երեկոյեան բաժակը մա-
տուցէք այս սուրբ մարդուն, որուն թոյլ պիտի տամ որ երթայ
հանդիսա ընէ :

Սպասուհի մ'արձաթէ բաժակ մը ներկայեց որ ընտիր համե-
մուս ըմբելի մը կ'պարունակէր : Քօվէնա նոյն բաժակը միայն
շրմերուն գտուց և ապա ուխտաւորին տուխն զայն, և այս ալ
թէթէ խոնարհութիւն մ'ընելէն ետե՝ քանի մը կաթիլ ըմպեց :

— Ընդունէ այս ողորմութիւնը, բարեկամ — յարեց Քօվէնա
ուկի մ'ընծայելով — իբր վարձ քու տաժանելի աշխատութիւնն
և Սուրբ Վայընը այցի գնալուդ համար :

Ուխտաւորը նորէն թեթև մը ծուելով ընդունեց այն պարզեն

և սենեկէն դուրս ելաւ Կլծիթակ ետեկէն երթալով :

Կախասենեկին մէջ Ինվօլու սպասաւորը զտար, որ նորատի

աղջկան ձեռքէն ջահն առնելէն ետե՝ շտապան քան մարդավա-

իութեամբ շէնքին մէկ հեռաւոր և զաղըալի կողմը տարաւ ձեց
զանի , ուր շատ մը փաքրիկ խուցեր կամ խղիկներ կային , ո-
րոնք ստորին ծառաներուն և միջին կարդի հիւրերու համար
ննջարաններ էին :

— Այս խուցերէն որուն մէջ կ'պառկի հրէայն — հարցուց
ուխտաւորը :

— Այն անհաւատ շունը — պատասխանեց Էնվօլու — քու սըր-
բութեանդ կից խցին մէջ կ'սատիկ : Յանուն Ս. Տոնստանի , ինչ
պէս պիտի քերթենք և սրբենք այն խուցն որպէս զի քրիստոնէի
մը յարմար լինի :

— Հապա խոզարած Կիւրթն ուր կ'պառկի — ըստ օտարան-
կանը :

— Կիւրթ — պատասխան տուաւ սնորուկը — աջ կողմի խուցը
կ'քնանայ , ինչպէս որ հրէայն ձախ կողմէ կ'գանուի . դու պիտի
զատես թլիքատեալ մարդը իր ցեղին ատելութեան առարկայ ե-
զող անձէն : Եթէ Օսվալտի հրաւերն ընդունէիր աւելի պատ-
ւառը սենեակ մը պիտի ննջէիր :

— Այսպէս աղէկ է — ըստ ուխտաւորը — հրէի մ'ընկերու-
թիւնը կաղնի փայտէ միջնորմի մը մէջէն չկընար տարափոխիկ լի-
ւնիւլ :

Այս ըսելով իրեն յատկացած խուցը մտաւ , և սպասաւորին
ձեռքէն ջահն առնլով անոր շորհակալ եղաւ և զիշեր բարի
ըստ . իր խցին դուռը գոցելով փայտէ աշտանակի մը վրայ
դրաւ ջահնը և իր ննջարանին բոլորտիքը դիմեց , որուն կահոյքը
շատ պարզ էր : Մինակ փայտէ կոշտ աթոռակի , և աւելի զը-
ծուծ յարգալի անկողնէ մը կ'բաղկանար , որուն վրայ քանի մը
ոչխարի օդիկներ նետեր էին վերմակի տեղ :

Ուխտաւորը՝ ջահնը մարելէն ետեւ հազուած այն կարծը մահ-
քին վրայ ընկաւ և քնացաւ ; կամ լաւ ևս այնպէս պառկած մը
նաց մինչեւ որ արեւուն առաջին նշոյլներն վանդակաւոր պիտիկ
պատուհանէ մը ներս մտան , պատուհան մ'որմէ այս կազիր խուցն
օդ ու լոյս կ'թափանցէին : Այն ատեն ուխտաւորն ուսք ելաւ ,
իր առաւօտեան աղօթքն ըստ , վրան զլուիր շոկեց և դուրս
ելնելով Խաչակին խղիկը մտաւ գոնակը կրցածին չափ մեղմիկ
վեցցնելով :

Հրէայն՝ ուխտաւորին խշտեկին նման խշտեկի մը վրայ պառկեր
էր և վրդովեալ քուն մը կ'քաշէր : Առջի իրկուն հանած զլեստ-
ներն իր չորս դիմ պատեր էր այնպէս որ քնանալու ատենը չառ-
նուն չտանին : Իր Ճակախն վրայ հողեվաբրի նման շփոթ մը կ'տես-
նուէր : Իր ձեռներն ու թմերը ջամակի կ'շարժէնին որպէս թէ Ճի-
ւաղի մը դէմ կ'մաքառէր :

Եբրայեցի լեղուաւ շատ մը բացադանչութիւններ ընելին զատ՝
հետեւալ խօսքերը անկլօ-նօրման լեզուաւ բացորոշ արտասանեց.
« Ի սէր Աստուծոյն Եբրահամու՝ խնայէ հէք ծերունի մարդ մը .
աղքատ եմ , ստակ մը չունիմ , եթէ երբէք երկաթովիդ իմ անդամ-
ներս ջախջախնես , դարձեալ չպիտի կարենար քեզ զոհ ընել : »

Ուխտաւորը հրէին երազը միհնչեւ վերջը մտիկ ընել չուղեց , իր
դաւազանով անոր դպաւ : Այս գպումն կ'միանար անշուշո իր ե-
րազին ահուելի մէկ առարկային հետ , վասն զի ծերունին ընդուա-
կանդ առաւ , իր սպիտակ մազերը զրեթէ զլիխն վրայ անկուեցան
և իր հադուստին մէկ մասովը ինքզինքը շուտ մը ծածկելով , մինչ-
գեռ բալէի մը պինդութեանիր միւս մասերը բռնիր կիցեր էր , ուխ-
տաւորին վրայ իր սե ու սուր աշերը սկերեց որ վայրագ զարմացում
և ջլուտ երկշոտութիւն կ'յայտնէին :

— Խսահակ , իպնէ մի՛ վախնար — ըստ ուխտաւորը — ես իրը
բարեկամ քու քովդ կ'դամ :

— Թո՛ղ Խսրայէլի Աստուծը վարձատրէ քեզ — զոչեց հը-
րէայն շունչ առնլով — երազ մը կ'աւենէի . բայց զովեալ լինի
հայր Եբրահամ , մինակ երազ մ'էր :

Յետոյ՝ պահ մը խորհելով՝ իր սովորական ձայնովը յարեց :

— Բայց այսպէս առառ կանուխ ի՞նչ ունիս ըսելու խեղջ հը-
րէի մը :

— Սա կուղեմ յայտնէլ — ըստ ուխտաւորը — որ եթէ այս
տունէն անմիջապէս չելնես և ճամբաղ չշարունակեն , շատ հա-
ւանսական է որ մեծ փորձանքի մը հանդիպիս :

— Առ'ւրբ Աստուծ — ըստ հրէայն — ինձի սկէս հէք մար-
դու մը վես հասցնելով ինչ օդուտ կրնայ ծաղիկ :

— Դու իպնէ աւելի լաւ կրնաս զուշակել թշնամիներուդ խոր-
հուրդը — ըստ ուխտաւորը , բայց հաւաստի եղիր սա պարա-
գացէն վրայ որ երբ երեկ իրկուն տաճարականը սրահէն անցու .
իր մահմէտական սպասաւորներուն արապերէն քանի մը խօսք

ըստ , ապօպրեց որ ուղևորութիւնն լրտեսեն այս առառու , այս առանքն էն բաւական հեռու տեղ մը քեզ ձերբակալ ընեն , և ֆիլիս առ Մալվագինի կամ Քէմինալս Գրօն - առ - Պէօի դըշ եակը տանին քեզ :

Կարելի չէ բացարել թէ ի՞նչ անհնարին սարսափ պաշառեց հրեայն երբ այս լուրն առաւ . կարծես թէ լիովին ուժաթափ մնայ . ձեռներն երկու կողմէն կախեց , զլուխը կուրծքին վրայ ընկաւ , ծունկերը զայթեցան , իր մարմնոյն մէն մի ջիղն ոլոր ոլոր գարձաւ և ուխտաւորին ոսքն ընկաւ . չէ թէ մարդու մը պէս որ կամովին կ'ծուի , ծունք կ'դնէ կամ զոթ շարժելու մնօք երկիր կ'պազնէ , այլ այնպիսի մէկու մը պէս որ անտեսանելի զօրութենէ մղեալ՝ զետին կ'տապալի անկար և անդիմաղիր :

— Սուրբն Աստուածածին Աբրահամու — զոչեց նա իր խորշումած և զոյ ձեռները վեր վերցնելով՝ առանց իր ալէ զարդ զլուխը դեմնէն բաւնալու . — ուստի Մովսէս , ու օրհնեալ Ահարոն , երազս անհիմն չէր , և անուրջ մ'ընդունայն չպաշարեր մեղ : Արդէն կ'զգամ որ անոնց սուրն իմ նեարդս կ'պատւեն , կզզամ որ մարմինս տանջանիք կ'մատնեն ինչպէս որ Հռաբայի մարդոց և Ամմոնի որդւոց վրայ սպացներ և կացիներ կանցնէին :

— Առք ելիր , Խօսհակ և ինձ միտ դիր — ըստ ուխտաւորը , որ արհամարհանօք խառնարդահատութեամբ մը կ'զիտէր հրէին այս ծայրայեւ տաղնապը : — Ահոդողդ իրաւացի է , քանի որ իշխաններ և ազնուականներ միշտ կ'չարչարեն հայրենակիցներդ անոնց ինչքն ու զյքը կողոպատելու համար : Բայց ողլալու ատեն չէ , ուսք ելիր ըսի , և պիտի ցոյց տամ քեզ խոյս տալու միջոց մը : Խսկյն ելիր զնա այս տունէն՝ մինչդեռ ամէն անեցիք առջի զիշերուան ինջյուէն ետքը կ'հանդչին : Ես քեզ անատուին ծածուկ ուղիներէն պիտի առաջնորդեմ , պահնորդին չափ զիտեմ՝ անոնք , և մինչեւ որ նիվակախաղ հանդիսին զայցող ազատանիի մը ապահով պահպանութեան չյանձնեմ քեղ՝ քովեդ չպիտի հետ չափանամ . զու այսուհետեւ պէտք կ'ախործիմ կամ քեզնէ շահ մը կ'սպասեմ . եթէ կ'ուզես այս աեղ կեցիր : Սաքսոն Սէտրիկը թերեւս քեզ պաշտպանէ :

Քանի որ Խօսհակ կ'լսէր այս ապատումի միջոցը՝ սկսաւ քիչ քիշ զետնէն վեր ենել միոնչեւ որ ծունկի վրայ եկաւ . յետոյ իր երկար ալէ խառն մաղերն ու մօրտւն ետին ձգեց և ուխտաւորին երեսը նայեցաւ իր սուր սե ուշելով՝ որոց ակնարկը թէ

յոյս և թէ երկիւղ կը յացնէր և լիովին կասկածէ զեբծ չէր : Սակայն երբ ուխտաւորին վերջին խօսքը լսեցա կարծես թէ իր նախորդ տարսափն աւելի ուժդին սիրու զրաւեց և երեսն ՚ի վայր զետին ընկնելով՝ սլուաց :

— Ինչպէս ես կրնամ ուրիշի մը բարեսիրութիւնը շահիլ , աւաղ , ի՞նչպէս . միակ միջոց մը կայ քրիստոնէի մը սիրտը վաստրիկելու , և ողորմելի հրեայ մ'ի՞նչպէս կարող պիտի լինի այս միջոցը գանել , քանի որ հարասահարութիւններն ղենքը Պաղարու չքաւորութեան դուռը հասուցած են : Յետոյ որպէս թէ հասկածը միւս բոլոր զգացումներուն տիրած լինէր , հրեայն յանկարծ զոչեց : — Ի սէր Աւատուծոյ , սրատանի , զիս մի՛ մատնէր . յանուն Արարչին որ մեղ ստեղծեց , թէ հրեայն , թէ հեթանոսը , թէ խրայելացին և թէ խսմայելացին , մի՛ մատնէր զիս : Ես մուրացիկ քրիստոնէի մը սիրտը շահելու միջոցը չունիմ , և թէ այս միջոցը բէնէ մ'անդամ լինի : » Այս խօսքերն ըսելով՝ հրեայն ոտք ելաւ և աղերսալի նայուածքով մ'ուխտաւորին վերարկուն բունեց : Աւխտաւորն անոր ձեռքէն հեռացաւ , որպէս թէ տարափուիկ աղտ մ'ունէր անոր շօշափումը :

— Եթէ ազգիդ բոլոր զամնձերովին անդամ բեռնաւորուած լինէիր — ըստ ուխտաւորը — ես ինչ օդուտ պիտի ունենամ քեզ մնասելով : Այս հազուաստովս ինքպինքս աղքատութեան ուխտած եմ , և զայն ուրիշ բանի հետ չպիտի փոխեմ այլ միայն ձիումը և վերտ զրահի մը հետ : Սակայն մի՛ կարծեր բնաւ որ քովընկերութենէդ կ'ախործիմ կամ քեզնէ շահ մը կ'սպասեմ . եթէ կ'ուզես այս աեղ կեցիր : Սաքսոն Սէտրիկը թերեւս քեզ պաշտպանէ :

— Ափսոն — ըստ հրեայն — չպիտի հանդուրմէ որ իր հետեւորդներուն միանամ , թէ սաքսոն և թէ նօրման՝ ամօթ պիտի սեպեն խեղջ խրայելացին ուղեկից առնըլու , և սակայն ի՞նչ պէս կարելի է ինձ Մալվուաղէնի և Գրօն - տը - Պէօի հողերէն անցնիլ . . . : Քաջ սրատանի , քեզի հետ համբայ պիտի ելնեմ : Ըստ ընենք , զօմեպինդ պատրաստուինք և խոյս տանք : Ահա զաւաղմնդ , ինչո՞ւ համար կը զանդաղիս :

— Զեմ զանդաղիր — պատրասիան տուաւ ուխտաւորը իր քնակին հետ արտորալով . — բայց պէտք է փախչելու միջոցը մը տածէլ , ետեւ և եկուր :

Ուխտաւորն առաջ անցաւ և մօտակայ խղիկը դնաց , ուր խո-
ղարած կիւրթ կ'հանդէք , ինչպէս որ ընթերցողը դիտէ :—Եւ
լիք , կիւրթ—ըստ ուխտաւորը —շուտ ոտք ելիր : Գաղանի
դուռը բաց , և թող տուր որ հրէայն և ես գորս ելնենք :

Կիւրթ՝ որուն պաշտօնն թէ և այժմ շատ անարդ կիւրկի մեզ ,
Սաքսոնեան Անկիոյ մէջ այնշափ կարեռութիւն կ'ընծայէր իրեն
որչափ որ նոյնն ունէր Եւմէ Խթակէի մէջ , կիւրթ կըսեմ , ուխ-
տաւորին դործածած ընտանեկան և մեծասասա լեզուն շատ ծանր
դտաւ : —Ի՞նչ , միթէ հրէայն Ռօթրվուտէն պիտի մեկնի—ըստ
նա արմելին վրայ յենլով , և առանց խշակիր թողլու՝ անոր երեսն
դուռզաբար նայելով —և որ մեծն է՝ ուխտաւորին հետ պիտի
ուղեկցի՞ . . . :

—Այսպիսի բան մը չէի կրնար երազել անզամ— ըստ Վամշ-
սրա որ նոյն պահուն սենեակի մատաւ —ինչպէս որ կարելի չէ եւ-
րեակայել որ հրէայն կտոր մը խողի ապուխտ դողնայ աանի :

—Սակայն— ըստ Կիւրթ՝ իրեն բարձի տեղ ծառայող կոճ-
ղին վրայ ընկնելով —երկուքնիդ ալ պարտաւոր էք սալասել որ
մեծ դուռը բացուի :

—Սակայն— ըստ ուխտաւորը՝ հրամայական ձայնով մը —
յուսամ որ այս չորսչը չափանի մերժես ինձ :

Այս ըսելով գանդաղ խողզպանին խշաեկին վրայ ծուեցաւ և
սաքսոն լեզով քանի մը բառ փսփսաց անոր ականջին : Կիւրթ՝
իրը ելեկտրական զօրութենէ մը շարժեալ՝ ոտք ելաւ : Այն ա-
տեն ուխտաւորը՝ մաար բերնին վրայ գնելով՝ որպէս թէ զզոյշ
լինիլ կը պատուիրէր անոր , յարեց . —Կիւրթ , աչքը բայ ,
դու սովորաբար խոչեմ ես : Քեզ կըսեմ որ զաղտնի դուռը բա-
նաս , վերջէն զործն աւելի տղէկ պիտի համենաս :

Կիւրթ եռանդապին փութաց ուխտաւորին կամքը կատարելու՝
մինչգեռ հրէայն և Վամշա՝ խողաբածին յանկարծահաս փոփո-
խութեան վրայ զարմացած անոնց կ'հետեւին :

—Քորիս , ջորիս ո՞ւր է— ըստ հրէայն , երբ գոնէն դուրս
դտաւ ինքովինքը :

—Քերէք սա մարդուն ջորին— ըստ ուխտաւորը —եւ ինձ
մտիկ ըրէ , ուրիշ ջորի մ'ես բեր ինձ որպէս դի անոր ընկե-
րանամ և այս սահմաններէն զինքը հեռու տանիսմ : Աէտրիկի
մարդոց տալով նոյն ջորին ետ կ'զարձնեմ ասլահովապէս , խոլ

դու— յարեց նա , ու խօսքը Կիւրթին ականջին փսփսալով առ-
ւարաեց :

—Ամենայն սիրով— ըստ Կիւրթ —ամենայն սիրով , խըն-
դիրդ իսկոյն պիտի կատարեմ : Եւ անոմիջապէս զնաց ուխտաւո-
րին հրամանն ի զործ դնելու :

—Կը փափաքէի դիտնալ— ըստ Վամշա երբ իր ընկերը
կոնակի դարձուց —թէ ձեզի պէս ուխտաւորներ ինչ կ'սովորին
Ս . Երուսաղէմի մէջ :

—Մեր մաղթանքն ընել , միմու դու —պատասխանեց ուխ-
տաւորը—մեր մեղաց թողութիւն ինդրել , և ծումապահութեամբ ,
հսկումներով և երկայն աշոթքներով գորանալ :

—Այդ բաներէն աւելի ազգու բաներ կ'սովորիք— սլատաս-
խանեց միմուը . —վասն զի՞ ինչպէս կարելի է որ աղօթքն ու-
սպաշաւը կարենան յորդորել Կիւրթը մարդավար լինելու , կամ
ծոմ ու հսկումը ձեզի ջորի մը տալու զինքը մղեն : Եթէ այդ-
պէս լինէր , ստոյդ եմոր նոյն մարդավարական պատասխանը պի-
տի ստանայիր անոր սիրական սե խողէն քու աղօթից և հսկումնե-
րու շնորհիւը :

—Կորիթ՝ ըստ ուխտաւորը —գոն սաքսօն միմու մ'ես :

—Իրաւոնք ունիս— սլատասխանեց միմուը —եթէ նօրման
ծնած լինէի ինչպէս որ դու ես կարծեմ , ես իրաւոնք պիտի ու-
նենայի և իմաստունի կարզը անցնէի :

—Նոյն պահուն Կիւրթ փոսին միւս կողմն երեցաւ ջորիներով :
Ճամբարդներն երկու տախտակէ լայն շարժուն կամրջէ մ'անցան .
այս կամուրջը ծածուկ դրան հետ հաղորդակցութիւն ունէր և
փոքրիկ դւնակ մը կար արտաքին պատճեշն վրայ , որմէ ան-
տառը կ'մոնուէր : Այն ինչ ջորիներուն մօտեցան որ հրէայն
դողդոջուն ձեռօք վերարկուին տակէն կապյու կտաւէ ծրար մը
հանեց և թամբին ետել աեղաւորեց , իր խօսքին նայելով նոյն
ծրարը «փոխնորդ լաթերն , մինակ փոխնորդ լաթերը» կ'սարու-
նակէր : Այն ատեն իր տարկիքէն չսպասուած շտապով և արա-
գութեամբ ջորին հեծնելով՝ իր վերարկուին ծալքերն այնպէս
որ գրաւ որ գտաւիկին վրայի ծրարը բոլորովին ծածկէց :

Ուխտաւորն աւելի ծանր կերպով հեծաւ իր ջորին և մեկնե-
լու ատեն Կիւրթին երկնցուց ձեռքն զոր յետին ակնածոթեամբ
պաղաւ նա : Խողզպանն ուղեկորներուն ետելն կ'նայէր մինչև որ

անտառին խորերն աներևոյթ եղան, երբ Վամսպային ձայնեն խորին մտածութենէն սթափեցաւ :

—Գիտե՞մ արդեօք, իմ բարեմիտ բարեկամս Ախորթ—ըստ միմուը, —որ այս ամառուան օրս սովորականէն տելի քաղաքավար և բարեպաշտ կ'երեխս Կ'փափաքէի բոկոտն ուխտառը մը կամ սեադէմ վանահայր մը լինել այդ անսովոր եռանդէգ և մարդավարութենէդ օդուտ քաղելու համար : Իբուի լոկ համբոյր մը քաղելով զոհ չպիտի լինէի :

—Այս անդամ խելացի խօսք մ'ըսիր, Վամսպու—որատասահանեց Կիւրթ—թէն լոկ արտաքին երեսյթի վրայ կ'զատես, և ամենէն խմասուանն ասկէ առելի չկրնար ընել: Բայց երանակին վրայ հսկելու ատենն եկաւ :

Այս ըսելով՝ գէալ 'ի առւն դարձաւ, միմուին ուղեկցութեամբը: Կոյն ալահաւն ուղերդները՝ մանսաւանդ Հրէին զդացած սաստիկ երկիւղէն դրշեալ՝ իրենց ճամբան արագօրէն կ'շարունակէին, վասն զի այն հասակի տէր մաբդիկ ուր ուրեմն բուռն շարժումներ կ'սիրեն: Ուխտաւորն որ կարծես թէ անսատին ամեն ծակ ուծուկ զիսէր, արտուղի ճամբաներէ քալելով առջնէն կ'երթար, որով Հրէին կապկածները նորեն զրդուեցան, այնպէս որ կ'երեսակայէր թէ սիստի մատնուի և թշամիներուն ծուզակը սիստի ընկնի:

Արդարեւ իր կասկածները նեբելի էին. վասն զի՝ 'ի բաց առեալ թերես թեւաւոր հուկերը, երկրի, ծովու և օդին մէջ չկարցեղ մ'որ նոյն ժամանակի Հրէից պէս անդուլ, ընդհանուր և անհաշտ հալածանաց ենթակայ լինի: Ամենաթեթև և անհիմն բարուր մը, զուր և անսեղի ամբաստանութիւն մը բաւականէին իրենց անձն ու զոյքը ժողովրդեան կատաղութեան մատնելու. վասն զի՝ Նօրման, Սաքսոն, Դանիցի և Բրիտոն թէն իրարուներհակ ցեղեր էին, կարծես թէ այս ժողովրդեան ամեն չարիք հասցնելու կ'մըցէին, և կրծնական պարտ կ'սեպէին զայն ատելու, անկունելու, կողոստելու և հալածելու: Նօրմանեան թաղաղութեան անկախաւ աղնուականներն որ ամէն բունական զործերու մէջ՝ անսոնց օրինակին կ'հետեւին այս բարեկամաշտ ժողովրդեան գէմ առելի կանոնաւոր և շահագէտ հալածանք մը կը շարունակէին: Ճօհն թաղաւորին համար կ'պատմէն, և այս պատմութիւնը շատերը զիտեն, թէ իր արքայական մէկ գղեկին մէջ հարուստ Հրէայ մը բանասարիւով՝ ամէն օր անոր ըերնէն

ակուայ մը հաւնել կ'տայ եղեր, այնաէս որ՝ երբ խեղջ խարայեալացիին ակուաները կիսովին աւեր զարձան՝ յանձն առաւ միծկակար զումուրը վճարելու, և այս զումարը կորզելու. Համար բունաւորը չարչափեր էր զանի: Երկրին մէջ զտնուած պատրաստ զրամը սոյն հալածական ժողովրդեան ձեռքն էր. և աղնուականներն իրենց վեհապետին օրինակին հետևելու չին վարաներ՝ տմէն տեսակ հարստահարութեամբ և նոյն խսկ մարմարական զայն շարութեամբ համար: Սակայն շահամութեան աղգած կրաւորական արիութիւնն կ'յորգորէր հրեաներն ամէն վերահաս չարեաց տոկալու, Անկլիոյ նման բնապէս հարուստ երկրի մը մէջ իրենց ըրած անբաւ վաստակին սիրոյն համար: Ամէն տեսակ վհաստական զործերու, նոյն խսկ մեր արդէն յիշած յատուկ արց հակատակ՝ որ հրէից վրայ կ'ծանրանային իրը հրէական հարի, մինակ զանոնք կեղեքելու. և կողապահելու համար հաստատուած էր, զարծեալ հրէաները կը շահապահին, ահազին զումարներ կ'զիկէին, որ փոխանակակիրներու միջոցաւ ձեռքէ ձեռք կ'անցնէին — զիտ մ'որուն համար կ'ըսուի թէ վաճառականութիւնն անսոնց պարտասոր է, և այս միջացաւ կարող կ'լինէին իրենց զոյքը քաղքեր քաղաք փոխադրել, այնպէս որ եթէ այս երկրին մէջ հարստահարութեամբ նեղուէին, ուրիշ մը մէջ իրենց ինչքն ատահով զտնուին:

Այսպէս Հրէից ժլատութիւնն ու յամառութիւնը կերակով մը իրենց տիբապեաներուն կրծնամուլութեան և բռնակալութեան ներհակ զալով՝ իրենց կրած անդուլ հալածանաց համեմատ կ'աւելնային. խսկ առուտուրի մէջ սովորաբար իրենց հաւաքած հարստութիւնն որչափ որ ստէպ վտանգ կ'սպանար, ատեն աւեն ալ իրենց ազգեցութիւնը տարածելու կ'օդնէր և տեսակ մը պաշտպանութիւն կ'ասպահովէր: Աչա այս վիճակին մէջ կ'ասպի ին Հրէաներն. և իրենց բնաւորութիւնն միշտ բռնաբարեալ՝ արթուն, կատկածուտ և վեհերու էր, ապնպէս կամակոր, անբարեսէր և սպաւնալից վտանգներէ խոյս տալու յաջողակ:

Երբ ուղնարներն շատ մը խոտարուակ շատիդներէ շոյտ ընդ փոյթ անցան, ուխտաւորը բերանը բայցաւ և ըսաւ:

—Այս քայքայուն կաղնին Գրօն-ար-Պէօի Հողերուն սահմանը կ'յայտնէ. արդէն Մալվուալինի կալուածներէն շատանց հետացած ենք: Այսուհետեւ անոնց հետաղուտթիւնէ վակինաւու բան մը չտնիս:

—Երանի թէ անոնց կառքերուն անխւները խորտակին—ըստ հրեան —Փարաւոնի հրօսակներուն պէս, որ ծանր ծանր յաւ ուաջ քալեն : Բայց մի՛ թողուր զիս, բարեսիրտ ուխտաւոր : Միաբդ բեր անդամ մ'այն վէս և վայրագ տաճարակիանն ու իր սարակինացի դերիներն, որ չեն յարգեր ոչ երկիր, ոչ սուն, ոչ աւատական հոլ :

—Մեր ուղեկցութիւնն այս տեղ կ'վերջանայ— ըստ ուխտաւորը —և պէտք է որ բաժնուինք . վասն զի իմ և քու կարդի մարգերու չվայլեր ասկէ աւելի ուղեկից զանուիլ : Ասկէ զատ՝ ի՞նչ օգնութիւն կրնաս սպասել ինձի պէս խաղաղամատը ուխտաւորէ մը՝ երկու սպասազէն հեթանոսներու դէմ :

—Ո քաջ սպատանի— ըստ հրեայն —դու կարող ես պաշտպանել զիս, և զիտեմ որ կամք ունիս : Թէև աղքատ եմ, քեզ պիտի վարձատրեմ, չէ թէ դրամնով, վասն զի դրամ՝ չունիմ, վկայ է հայր Աբրահամ, այլ . . . :

—Գրամ՝ և վարձք քեղնէ չեմ ինդրեր— ընդմիջեց ուխտաւորն —ինչպէս որ արդէն ըսի : Քեզ առաջնորդել կարող եմ, թերես՝ ի հարկին սպաշտպանեմ նաև քեզ, վասն զի հրեայ մը սարակինացիի մը դէմ սպաշտպանելը քրիստոնէի մ'անվայել դործ չեմ համարիր : Աւստի, հրեայ, կ'փափաքիմ՝ քեզ ապահովական պաշտպաններու ձեռք յանձնել : Այս միջոցիս Ծէ ֆֆիլտ քաղաքէն հետու չենք, և այն տեղ կարող ես աղղակիցներ և անոնց մօտ ապահն մը զանել :

—Յակոբայ օրհնութիւնը քու վրագ իջնէ, քաջդ պատանի . . . — ըստ հրեայն : Ծէ ֆֆիլտի մշջ իրօք Զարէթ աղղականիս հետ կրնամ բնակիլ, և իմ ուղեկորութիւնու անլուտանդ շարունակելու հնար մը զանել :

—Ճատ լսու— պատասխանեց ուխտաւորը —ուրեմն Ծէ ֆֆիլտէն կ'բաժնուինք և եթէ կէս ժամ՝ ևս առաջ քշենք նոյն քաղքին առջնը կ'հասնինք :

Այս կէս ժամն՝ երկու ուղեկորները լուս ու մունջ անցուցին . կարելի է որ մէկ կողմէն ուխտաւորը կ'անդունէր հրէին խօսք ուղելու, եթէ անհրաժեշտ հարկ չլինէր, միւս կողմէն հրեայն չէր իշխեր խօսակցութեան յորդորել անձ մ'որուն ուղեկորութիւնը Ա. Գերեզմանի սրբութեան դրոշմ կ'ընծայէր անոր բնաւորութեան : Վերջապէս բլուակի մը զաղաթը կանկ առին և

ուխտաւորը՝ Ծէ ֆֆիլտ քաղաքը ցոյց տալով՝ որ իրենց ոտքին ներքեւ կ'ատրածուէր, սա խօսքերը կրկնեց . —ուրեմն այս տեղ իրարմէ բաժնուինք պիտի :

—Բայց խեղճ հրէի մը չնորհակալութիւնը չընդունած կուղես մեկնիլ — ըստ Խաչակի . —վասն զի չեմ համարձակիլը առաջարկել քեզ որ Զարեթ աղղականիս տունը զաս, կարելի է առաջ ծանրութիւնդ վարձատրելու միջոց մը տայ ինձ :

—Նրդէն ըսի քեզ — պատասխանեց ուխտաւորը —որ վարձ չեմ ուղեր քեզնէ : Սակայն եթէ քու պարտապաններուդերիայն ցանկին մշջ, հաճիս իմ սիրոյ համար՝ հանկիդ ներքեւ զըտանող քամի մը գժբաղդ քրիստոնեաներ բանտէ և շղթայէ աղղատ սպահել, այս առաջու քեզ ըրած ծառայութեանս փոխարէնը լիովին ստացած ոլիտի լինիմ :

—Կեցի՛ր, կեցի՛ր — ըստ հրեայն ուխտաւորին վերաբերուն քանելով — այդ ըսածէդ եւել բան մը կուղեմ ընել, քեզի համար ընել : Աստուած զիտէ որ հրեայն աղղատ է, այս՝ Խաչակի իր աղղակիցներուն մշջ մարացիան մ'է : Բայց ներէինձ եթէ զուշակեմ քեզ թէ այս պահուս ամենէն տեղի ինչ բանի կարօտ ես :

—Եթէ Ճիշտ զուշակես — ըստ ուխտաւորը — զարձեալ այնա պիտի բան մ'է իմ խնդրած որ չպիտի կարենաս ինձ տալ, եթէ ըսածիդ պէս որչափ աղղատ նոյնչափ հարուստ լինէիր է

—Ըստածի՛ս պէս մի — ձայնեց հրեայն : —Ո՛չ, հաւտախօսքիս, բուն Ճշմարտութիւն մ'է ըսածս . կողովուեալ, պարոքի տակ Ճնշուած, թշուառ մարդ մ'եմ ես : Ոխերիմ մարդիկ իմ ձեռքիս առին խլեցին իմ տակիս, նաև երս և բոլոր զոյքս : Սակայն կրնամ ըսել թէ ինչ բանի պէտք ունիս զու, և թերես նոյնը Ճարեմ : Այժմ՝ քու միտի փափաքդ է երիւլար մ'ուղար մ'ունենալ :

Ուխտաւորը գող մ'զլաց և յանկարծ հրէին զառնալով ըստ արտօրնօք . — Ո՞ր սատանան թելադրեց քեզ այդ զուշակութիւնը :

—Ի՞նչ փոյթ է — ըստ հրեայն ժպանելով — ըստական է որ Ճշմարտս լինի, և ինչպէս որ փափաքդ զուշակեցի, կարող եմ նաև զոյն լնուլ :

—Բայց նկատէ անդամ մ'իմ կարդս, իմ հաղուստու, իմ

—Ես քրիստոնեաները քաջ կ'ձանչեմ — պատասխանեց ՏՂՇ րէայն . — Ձեզնէ ամենէն մեծն ու աղասանին ստեղ զաւագան 'ի ձեռին մնապաշտական ապաշխարհանք կրելու կելնէ և բոկտան մեռեներու զերեղմանը այցի կ'երթայ :

—**Մի՛** հայ հայեր, կը է՛այ — բայտ ուխտաւորը վէսօքէ՞ն :

—Ներէ ինձ— ըստ հրէայն —անդղութեալիք խօսեցայ: Սակայն երեկ իրկուն և այս առառու բերնեղ քանի մը խօսքեր եւան՝ որ կայծքարէն ցայտող նշցյլներու պէս՝ ներքին մետաղը մատնեցին. և ոխտառորի այս հաղոստիդ ներքեւ ասպետի մը ռակի շղման և մորակները պահուած են: Երբ այս առառու իմ անկողնիս վրայ ծռեցար՝ անսնք աչքիս դարձին:

Աւխտառոյն իր մակիսը չկրցաւ բոհնել։ — Խսահակ, — ըստ
նար — եթէ հանգեցձգ նոյնպիսի հետաղնին աչք մը քններ յ
արդեօք ի՞նչ բաներ պիտի զաներ։

—Մի խօսիր այդ կիստին վրայ — ըստ հրեայն դպինը նետելով ասպա իր կաղամարն ու թուղթ հանեց շտափար , իրը թէ խօսակա ցութեան վերջ տալ կ'ուղէր , և սկսաւ գրել թուղթը իր ցեղակետին ուղղեալ , առանց ջորիէն վար իջնելու : Երբ զիրն աւարդեց , տամսակն որ եքրայիրէն էր , ուխտաւորին տուաւ ըսելով .
— Կիսիարը քաղաքն մէջ ամեն մարդ կ'ձանչէ Կոմիգարտացի կիրա կադ ճէյրամ հրեայն , այս տոմսակն անոր տուր . վեց հատ Միլանի զրահ տնի ծախու . ամենէն դէցը թաղակիր զլիի մ'անզամ կ'վայ լէ . տասը հատ լնտիր նժոյգ , որոց ամենէն վատը իր աթոռին համար պատերազմող թագաւորի արժանի է : Վասնցմէ ընտրած գուեկ պիտի տայ՝ նոյնակէս զուգարին համար ինչ որ պէտք ունիս . երբ զուզարը վերջանայ՝ առջի վիճակին մէջ զամնոք տիրոջը կը դարձնես եթէ ծախու առնլու համար սկզբած զումարը չունի :

— Բայց ։ Խսահակ — ըստու ուխտաւորը ժպտելով ։ միթէ չըս
դիահօս որ այս տեսակ խաղիքու մէջ յաղթահարեալ ասսկետին
ողէնքն ու երիվարը յաղթալին կ'արուին իբր միշանակ ։ Կարելի է
որ ես յաղթուիմ, և հետեասէս կորուսեմ ինչ որ չեմ կդնար
ոչ վճարել և ոչ տեղը լեցնել ։ »

Հրեան այս ենթադրութեան վրայ փոքր ինչ շուարեցաւ, բայց
արդիութեամբ վճռուելով՝ շուտ մը պատասխանեց. — Հայր Աբրամ

Համեմատ օրհնենքը քու վրադ պիտի լինի , քու նիվալիդ Առկօն սի դաս
ւագանին պէս զօրաւոր պիտի լինի :

Այս լսելով՝ իր ջորիին զըստիլ դարձուց որ ճամբայ ենէ,
երբ ուխտաւորը շատ կարգի անոր վերաբերուն բռնեց և ըստ —
Սակայն Խաչակի, դու չես դիսեր թէ որչափ մեծ է վտանգը։
Չատ կարելի է որ երիվարն սպաննուի և զրահը խանգարի, վասն
զի միտքս գրեր եմ չխնայել ոչ ձի և ոչ մարդ։ ասկէ դատ քու-
ցեղակիցներդ լնդ ունայն ոչ ինչ չեն տար մարդու։ պէտք է որ
փոխարէն մը տրուի իմ կողմէն։»

Հըմայն ոլորեցաւ իր քուռակին վըսյ , փորի ցաւէ բռնուած մարդու մը պէս , սակայն իր լսաւդոյն զգացումները զաղեցին իրեն յաստեկ ժշատութիւնն , ուստի ըստու . փոյթո չէ , փոյթո չէ , թողոր երթամ : Նըմէ ինձ մնաս մը պատահի , դու չպիտի տուժիս . եթէ բան մը վճարել հարկ լինի Կիրկաս Շէյրամ կրնայ ներել քեզ իր Խաչական աղջականին սիրոյն համար : Մնաս բարե . բայց աս խօսքս մտիկ ըրէ , քաջ պատահի , — դոչեց նա ետ դառնալով . — մի՛ խիղախէր չափէն առելի այն խառնադանձ կառին մէջ . այս յորդորս ոչ երիվարին և ոչ զրահին համար կ'առամ : այլ սարգապէս քու կեանքիդ և մարմնոյդ համար :

— Ընորհակալ եմ շատ — ըստ ուխտաւորը նորին ժպտելով
— քու մարդասիրական զգացումն չպիտի մոռնամ, և եթէ՝ փոխաւ
ունի չառատանիւմ՝ ոսեւ է թէ բաղդր չէ յաջողեր ինձ :

Այնուհետև իրարմէ հետայրան՝ և տարբեր ձամբով Շէֆֆիլա
քաղաքը մտան :



Շաբք անհամար սպասից՝ հետևող սասկեասց՝
զերծ 'ի զէն' ժիր 'ի զարդ' զային հռւազ ընդյառաջ՝
Մին անդէր սալաւարան, մի ուրիշ տէդ ածէր,
Երբորդ մի վաղովուն վահան մի ճոխ վարէր,
Ռունով անձանձէր զարդ երիվար,
Ծամեր սանձ սոկեղէն՝ և զբնչւով փրփրա՝
Կայուղներու հեծած՝ զնաղործ և գարվին
Խարսոցներ 'ի ձեռն' մուրճէր կախ 'ի կողին'
Թայլ վեղարդից զամեր՝ ասպարի փոխ տային:
Գեղացիք փողոցներ բռներ էին գունդ գունդ
Ծաղրածուներ զային բերերով սիրս 'ի թունդ:

ՊԱԼԵՄՈՆ ԵՒ ԱՐԿԻՏ

Սնկլիական աղյին վլճակին այն ժամանակը բաւական թշուառ
էր : Ի իշարտ թաղաւորը տարակայ և Աւտրիոյ նենդաւոր և ան-
դութ զբսին իշխանութեան ներքե գերի կ'մնար . նոյն խոկ իր զերա-
թեան վարին անցայտ էր, և իր հպատակներէն շատերն որ նոյն
սպահուն՝ ամէն տեսակ բռնութեանց ենթակայ էին, վեր 'ի վե-
րա դիտէն իրենց վեհապետին հակասապիրը :

Ճօհն իշխանը՝ Առիւծասիրտ Ռիշարտի անհաշտ թշնամի՝ ֆրան-
սայի թաղաւորին հետ միացած՝ իր բարոր ազգեցութիւնը կր գոր-
ծածէր Աւստրիոյ զբսին վրայ՝ որպէս զի իր եղորը զերութիւնը
երկարէ, թէև ասորմէ շատ բարիք տեսեր էր : Նոյնպէս իր կու-
սակցութիւնը զօրացնելու կաշնատէր տէրութեան մէջ՝ որպէս զի
եթէ թաղաւորը մեռնի ինքը աթուն ենի՝ զահաժառանդ իշխանին,
տեղ՝ որ էր Բլանդամընէ ծէօֆֆիրէյի որդի՝ Բրիտանիոյ զուքս Ար-
թիւն՝ Բիշարտի կրտսեր եղացըն, ոյլ ճօհնէն մեծը, Ինչոք ո-
ր յայսնի է՝ վերջն այս յափշտակութիւնը 'ի կատար հանեց : Իր
թէթէ, շուայա և նենդամէտ բնաւորութեամբը ճօհն դիւրաւ շա-
հեցաւ ոչ միան այն անձերն որ իրենց մեղապարտ դաւերսւն հա-
մար Բիշարտի բարկութենէ վախնալու իրաւունք ունէին՝ այլ հակ
այն «անօրէն քաջերուն» դասն՝ որ խաչալիութենէ դարձէր էին
և Արևելքի մոլութեանց մէջ շաղուելով՝ իրենց կալուածքը սպա-
ռներ, բնաւորութիւնը կարծրացեր էր և քաղաքային խուզու-
թիւններու մէջ ձարակ զսնելու կ'յուսացին :

Հասարակաց թշուառութեան և երկխառակութեան այս որումնե-
րուն հարի է յաւելու նաև այն անհամար վլոարակներն՝ որ աւա-

տական իշխաններու բռնութեանէ և անտառային օրինաց խատու-
թեանէ յուսահատութեան մէջ ընկնելով՝ զատ զատ զունդեր կազ-
մեր՝ դաշնակցէր և անտառաներ ու գաշտեր գրաւելով՝ դիմադրա-
կի կենացին երկրին օրինաց և արգարութեան ատեաններու դէմ:
Նոյն խոկ աղնուականներն՝ իրենց զղեակներուն մէջ ամբացած՝ իրը
ինքնալլուխ մանր իշխաններ՝ կ'ափիէն իրենց հողերուն վրայ՝ և ու-
րիշ խումբներու զլուխը կ'անցնէին, որ միւս վտարանդի վտարակնե-
րուն չափ անօրէն էին և բռնաւոր : Այս զօրքերը պահելու, նոյն-
պէս՝ ամբարաւանութեանէ յառաջ եկած շուայլութեան և Ճո-
խութեան ծախսերն հողալու համար՝ աղնուականները ծանր վաշ-
խով ահաղին դումարներ հրէաներէն փոխ կ'առնուին, դումարներ
որ՝ իրը քաղցկեղ՝ իրենց կալուածքը կ'լրծէին, և անդումելի կը
դաւնար՝ եթէ աններելի բռնութեամբ իրենց պարտասէրներէն ա-
զատելու առիթ մը չուատահէր :

Իրաց այս դժբաղդ վլճակէն՝ Խնկլիս յողովարգը ծանր հար-
կերու տակ կ'ընկձէր, ներկային մէջ սաստիկ կ'տառապէր, և ա-
սպագային մէջ աւելի սոսկալի տառապանդ կրելու կ'երինչէր :
Այս թշուառութեանց չափը լցաւ՝ տարափոխիկ ախտ մ'ես վրայ
դալով՝ որ շատ վասնդաւոր էր և երկրին չորս զին կ'ձարակէր
անհարին կոտորած ընելլով ստորին կարդի մարդոց մէջ, որ անշահ
մնունդ և աղտեղի բնակարաններ ունէին, թէև ասոնց բաղդն ա-
ւելի նախանձելի էր ապրուներուն քանի որ կ'աղատէին այն չա-
րիներէն զոր ապագան կ'ապաւնար :

Սակայն այս դաւնադասն աղէտից մէջ՝ աղդքատ և հարուստ,
ուամիկ ու աղնուական մեծ հետաքրքրութեամբ կ'վառէին նիզա-
կավաղ դաւսպարի մ'առթիւ որ այն գարուն ամենէն երեկելի տեսա-
րանն էր, ճիշտ այն հետաքրքրութեաննման որով կ'վառի Մատ-
րիսի սովալուկ քաղաքային՝ որ՝ թէև թանկ մը չունի իր ընտան-
եաց ուտելիին հողալու բայց յուլամարտին կ'վաղէ : Ո՛չ պար-
տաւորութիւն, և ոչ ծերութիւն արդելք չեն լինիր Սարանիացոց
այս տեսակ տեսարաններ յաճախելու :

Ինչոքէս որ այն ժամանակը կըսէին՝ Զինուց հանդէսն եշպի քա-
ղաքը՝ Կիսիագրի նահանդին մէջ տեղի պիտի ունենար, վասն զի
ամենէն հոչակաւոր ախոյաններն՝ նոյն խոկ ճօհն թագաւորին ներ-
կայութեան ասպարեղ պիտի իշնէին, և իրին անձամբ այս հան-
գէսը պատուելու փափարէր էր : Ուստի այս զուսպան առ հասա-

բար ամենուն ուշադրութիւնը գրաւեր էր, և ամեն գասու մարդ կան անհամար բազմութիւն մ'որաշեալ առառու մրցարանին տեղը ենիր հասեր էին :

Այս տեսարանս վիսպային երևոյթ մ'ունէր : Եշպի քաղքէն մղն մը չեւուի անտառ մը կար՝ որուն եզրը կտարածուէր լսյնացիք և գալարադեղ մարդագետին մը . սոյն մարզին մէկ կողմէն կ'զատէր պուրակը , միւս կողմէն առանձին կաղնիներ՝ որոց մէկ քանին յազի էին և ստուար : Գետինն՝ որ կարծես թէ զննական մարզից համար յատկասէս յարդարուեր էր՝ ամէն կողմէն զառ ՚ի թափ ի'սահէր ի'բջնէր մինչեւ հարթ վայր մ'ուր հասաստուն պատճենենքու . միւ ջոյաւ ցանկ շրջապատեր էին , և որ քառորդ մղոնի չափ երկար և շորջ կես մղն լսյն էր : Մրցարանին հարաւային և հիւսիսային կողմերը մարտիկներու մուտ տալու համար վայտէ դռներ կային ուսկից երկու ձիաւորներ կարող էին քովէ քով անցնիլ : Խարաբնչիւր դրան մօտ երկու սուրահանդակ կեցներ էին , վեց փոշարներու և նոյնչափ քարոզներու հետ , նոյնպէս զունդ մը դիմակիր ուահապաններ՝ որպէս զի կարդ կանոն պահէն և այս զինուորական դուստրին մամնակից դանուելու համար ներկայացող աստեմներու հանդամնիք ստուգեն :

Հարաւային դռնէն անզին հողին բնական բարձրութեամբ յօւրինուած հողաբլի մը վրայ՝ հինգ փառաւոր վրաններ կ'տեմնուէին կարմիր ու սև դրոշակիներով զարդարուած՝ որ հինգ մենամարտիկ ասպետներու ընտրած զյոներն էին : Վրաններուն լսրերն էին նոյնազոյն : Մէն մի վրանի առջև կախեր էին մարտիկ ասպետին վահանը՝ որուն մօտ կեցներ էր զինակիրն այլանդակ կերպով ծագեալ՝ այս է իբր վայրենի կամ շահապետ , կամ իբր ուրիշ մոտածին էակ մը ինչպէս որ վերջապէս իր տիրոջ ճաշակը և դուստրին ժամանակ խաղաղեք գերը կ'ափահանջէր :

Կեդրմին տաղաւարը՝ իբր պատոյ վայր՝ յատկացած էր Պրայն որ պատահ վիլսերի որուն համբաւն՝ ամէն ասպետական խաղերու մէջ հոյնալէս սոյն դուստրին մասնակցող ձիաւորներու հետ ունեւ ցած յարաբերութիւնը՝ այնպէս բերեր էին որ հետամուսներու զնդին մէջ եռանդադիմնը ունենուեր էր և մինչեւ անդամիրենց պետան ու առաջնորդը հոչակեր էին զանի , թէեւ տակաւին նոր տեսնուեր էին անոր հետ :

Իր տաղաւարին մէկ կողմը կանդներ էին թէմինալու Փրօնի ար-

ոէօի և Գիլալ տը Մարվուաղէնի վրանը , և միւս կողմը՝ չեւէ առ Կրէնդմէմնիլ՝ գրացի՝ ափիւ պարոնի մը , որուն նախհայրն՝ Ակէ յէմ յաղթողին և իր որդուոյն Վելէմ թէֆքսի օրովը արքունի մատակարար էր . իսկ Ռապֆ տը Վայբըն՝ որ Ս. Երուսաղէմի կարպին ասպետ մ'էր , և Եշպի-տը-լա Զուշի մօտ Ճիտէր կոչուած տեղը քանի մը հին կալուածներ ունէր , հինդերորդ վրանին բնինց էր : Մրցարանին մուտքը վեց կանգուն լսյն անցք մը թեթև զառ ՚ի Ապակով մը դէպ՝ ՚ի հողաբլուրը կ'ասնէր՝ որուն վրայ վրաններ կանգնանէր էին : Այս անյաքն երկու կողմէն ամուռ պատճեններ ունէր , նոյնպէս և վրաններուն առջեկի գաշտավայրը , և այս ամէնը վեհակիրներ կ'պահչպահնէին :

Մրցարանին հիւսիսային կոռմի գուռն ալ նոյն մուտքն ունէք երսուն սոտք լսյն , որուն ծայրը ընդարձակ միջոց մը կար ցանկապատ՝ այն ասպետներուն համար որ ախոյաններու դէմ՝ ՚ի պայքար ենելու տրամադրի էին . նոյն ցանկապատէն հիւսու վրաններ կային որոց մէջ ամէն տեսակ պաշար և ուտեստ դրեր էին , նոյնպէս զինագործներ , պաշտօնատարներ և որիշ շատ մը սպասաւորներ , որպէս զի հարկին պատրաստ գտնուին պէտք եղածք հոգալու :

Մրցարանին արտաքին կորմն առ ժամանակեայ պատշգամներ կային , օթոյիներով և զորպերով ծածկուած՝ և հանդիսանես կասնաց և աղնուուականներու համար բարձերով զարդարեր էին : Այս պատշգամներու և մրցարանին միջեւ տեղ մը պահտած էր զեղացի զինուորականներու և ստորին կարդէն աւելի բարձր անձեւու . այս միջաւայրը թատրի մը ստորավայրին (թթ) կ'անձանէր : Խառն ՚ի խուռն խուժանը յատկապէս պատրաստած դարարուտ բլրակներու վրայ կ'գաղաքեր է՝ այս բնակին բարձրութենէ՝ կարող էր պատշգամներուն վրայ տիրել և մրցարանին տեսքը վայելլ անարդէլ : Այս կայաններու շատութիւնը բաւական չետակելով՝ հարիւտառ հանդիսանեմներ մարդադետինը շրջապատող ծառերուն վրայ ելեր գաղաքեր էին , և նոյն իսկ շինական մօտառ որ եկեղեց ցւոյ մը զանգակատունը խոներ էին :

Այս ընդհանուր կարդագրութիւններէն ետև կ'մնայ մեզ յիշատակել մրցարանին արեւելեան կողմը , և նոյն իսկ կեդրմանատեղին կանդնած պատշգամն , որ՝ հետեւապէմ Ճիգդ այն վայրին զիմացը կ'ընկնէր՝ որ մարտիկներն իրարու պիտի զարնուէին : Այս պատշ-

Ղամը միւսներէն աւելի բարձր էր , աւելի շքեղ և զարդարուն և տեսակ մը զահ ունէր ամպհովանիով՝ որուն վրայ արքունի զինագրոշմներ կ'փայլէին : Զինակիրներ , սպաներ , թիկնասրահ զինաւորներ հաղուած այն պատշգամին բոլորը շարուեր էին , որ ձօհն իշխանին և հետեւորդներուն սահմանուած էր : Մրցարանին արևմտեան կողմը՝ սոյն պատշգամին զինացն նոյն բարձրութեամբ ուրիշ պատշգամ մը կ'տեսնուեր որ աւելի սղնալարդ էր քան ձօհն իշխանինը : Ամենաղեղանի պատանիներու և օրիորդներու խումբ մը՝ որ կանաչ ու վարդագոյն քմածին զզեսաուլ զարդարուեր էին՝ համադոյն աթու մը կ'բոլորէին : Գրօշներու և նարօմներու մէջ՝ որոց վրայ նշանարելի էին վիրաւոր սիրաեր , հըրատապ սիրտեր , արինալի սիրտեր , աղբշներ և կապարձներ , մէկ խօսքով կուտիտոնի յաղթանակին նուիրուած ամէն գուեհինը շանակները , շողոզուն արձանաղիր մը կ'տեսնուեր՝ որմէ հանդիսականները կ'հասկային թէ այն պատոյ զահը Գէղցիունեան և ուրոյ նախունաւոյն յատկացած է :

Սակայն ո՞ր տիկինը պիսի ներկայէր Գեղեցիութեան թաղուհին այս սրարադայիս մէջ՝ ո՞չ ոք կարտու էր զտշակել :

Կոյն միջոցին ամէն գասէ զունդ զունդ հանդիսականներ յառաջ կ'անցնէին որ իրենց յատուկ կայանները նատին , թէ և որոշ տեղերու համար կուիւը պակաս չէր : Քանի մը պահասպան զինուորներ առանց գժուարութեան շատ մը վէճեր գադրեցտցին , և իրենց տասլարներու կոմելն , և թուրերու գատանելն իրը հզօր փառտեր՝ զործ տեսան ըմբռաններն զգաստութեան բերելու համար : Գարձեալ բարձրադոյն և հակառակ գասի մարդկան վէճերու ալ վերջ տրուեցա . սուրհանդակներու՝ կամ Վիլէմ ալ Վիլէլ և Ստէֆըն ալ Մարգիլալ՝ հանդիսին վերակացուներու ձեռօք , որ ոտքէն ցցլուխ զինեալ՝ վեր վար մրցարանին ամէն կողմըրը կ'վազէին որպէս զի հանդիսականները կարգի բերեն :

Տակաւ առ տակաւ քաղաքային հաղուատով եկող որեարն ու ասպետները պատշգամները լցան որոց սկըրճադոյն վերաբրուները կամանց զտարթադին և չքնար զզեաներու հետ հակառատկեր մը կ'ընծայէին : Այս կիներն որ մարդկան գասէն աւելի շատոր էւին վաղեր եկեր էին որպէս զի վայելին այնպիսի տեսարան մ'որ թերեւս իրենց ախորմելի չերեւեր խիստ վասնդաւոր և արինահեղ լինելուն :

Քիչ ատենէն շինականներ և երեւելի անձեր , նոյնագէս այնովիալ նուաղ աշնուական մարդիկի որ համեստութենէ , աղքաստութենէ , կամ անհիմն ախտղուներ ունենալով չին կրնար աւելի բարձր տեղականակ , եկան ու մրցարանին միջավայրը բռնեցին : Մահաւանդ այս մեջիներու մէջ նախադասութեան վէճերը շատցան :

— Անհաւամտ շուն — ըստ ծերունի մ'որուն մաշած պարեզօտէն իր աղքաստութիւնը կ'յայտնուէր , իսկ իր սուրը , զաշոյնն և ուկի շղթան կ'յուցնէին որ աշնուականի տեղ կ'ուղէր անցնիլ — զայիր կոռընւն , ինչպէս կ'յանդդնիս քրիստոնեայ մը , ինձի պէս Մօնտիտէի արենակից նօրման աշնուական մը հրել :

Ծերունին այս բիրս կշտամբանքը կ'ուղէր մեղի ծանօթ Խօսհաւկին , որ պերճօրէն , մահաւանդ շքեզօրէն հագեր էր նարօմապարպ և մուշտակապատ թիկնոյ մը , և պատշգամին վրայ տեղ բանալու կ'ջանար իր Ռեսելեկա զեղանի աղջկան , որ Եշպի եկեր էր հայրը զտեւլու , և այն միջոցին անոր թեկն յենած կ'սոսկար ժողովրեան բարկութենէն որտւն պատճառ տուեր էր իր հօրը յանդպնութիւնը : Վակայն Խսահակ որ՝ ինչպէս ուրիշ առ աթու տեսանք , երկսոտ կ'երեւեր , քաջ կ'զգար որ նոյն պահուն վախնալու բան մը չունէր : Ժշատ և շարաւաէր աշնուականներ չին կրնար այն բազմամբու վայրերն ուր իրենց աստվանակից անձեր կ'ային , զինքը թշնամնել : Այս տեսակ զումարումներու ատեն՝ հրէաներն ընդհանուր օրինայ սպաշտպանութեան ներքեւ էին , և եթէ այս երաշխաւորութիւնն ալ բաւական չլինէր , շատ անդամ այնպէս կ'սպասահէր որ նոյն հանդէմներուն մէջ քանի մը սպարաններ կ'զտնուէն որ՝ անձնական շահու համար՝ պատրաստ էին անոնց պաշտպան կանդնելու : Այս պարագայիս մէջ Խսահակ ստվրականէն աւելի վստահ էր , վասն զի քաջ զիտէր որ ձօհն իշխանն նոյն միջոցին Եօրփի հրէաներէն աշադին փոխառութիւն մ'ընելու կ'բանակցէր՝ քանի մը զոհաբները և կալուածներ առանդ տալով : Այս փոխառութեան մէջ Խսահակ մեծ մաս մ'ունէր , և քաջ զիտէր նաև որ իշխանն այս գործողութիւնն ի կատար հանելու կ'փափաքէր և՝ իր ներկայ գժուարին վիճակին մէջ արքայական սպաշտպանութեան պիտի արժանանար :

Այս նկատումներով սիրտ տաւած՝ հրէայն իր նորաստակին զիմեց , և առանց նօրման քըստոնէին նախնիքը , աստիճանն ու կրօնը յարդելու հրեց անդին ամյա : Սակայն ծերունին արտունջները հանդիսակառ նաց զայրցթը զրդուեցին : Ասոնցմէ մին կորովի և յաղթ շինական մը ,

որ Դիմքօնի կանաչ չուխայէ հաղուստ հաղեր, դօտիէն տասննըկու նետ անցուցեր, արծաթեայ գրոշմ մ'ու կամար մ'ունէր, և վեց ուրք լայն աղեղ մ'ի ձեռին, յանկարծ զլուկը զարձուց, և մինչդեռ իր դէմին՝ որ կաղնի զոյն առեր էր անդադար բաց օդին մնալուն՝ առեւ լի ևս կ'մըանար բարկութենէն՝ հրէին ասպարլեցյիշելու թէ թշուառ մարդիկներու արինը ծծելով զիլած հարստութիւնները զինքը ասրդի պէս ուրեր են, այլ սարդն որչափ իր սորին մէջ նստի անտես կ'մնայ, բայց երբ լոյսին երեխ կ'զգմուի: Այս սպառնալիքը՝ հաստատ ձայնով և խոժոռ դէմքով արտասանեց ծերունին և հրէին սիրութ թունտ հանելով յետո ընկրկեց, և անտարակյու այս վտանգաւոր զբացիէն պիտի հեռանար՝ եթէ ձօհն իշխանն յանկարծ երեխ լով՝ ամենուն աչքն իր վրայ չհրաւիրէր. այս իշխանն նոյն պահուն հանդիսարանը կ'մննէր, և իր ետեւէն կ'երթային բազմաթիւ զուարթերես հետեւորդներ, որոցմէ ոմանք աշխարհական, ոմանք կրօնական էին, և իրենց ուղեկիցներու պէս զզեւստով թեթև և կերպարանօք իննդաղին էին: Կրօնաւ կաններու մէջ ծօրմօլի վանահայրն ևս կ'զանուէր պյնակէս պէրճօրէն հաղուած շքուած՝ որով հաղիւ թէ եկեղեցւոյ բարձր պաշտօնեայ մը կ'համարձակի երեխիլ: Մուշտակն ու ոսկին չէր ինայած իր հանդերձն համար, և իր կօշիկներուն ծայրերն ժամանակին ծաղրելի նորաձեւոթիւնը չափազանցելով՝ այնքան վեր դարձեր էին որ զաննք չէ թէ պարզապէս իր ծնկերուն այլ իր զօտին կապելու ստիպուեր էր և այսպէս իր ոսներն ասպատանէն անցնելու կ'արդիլէին: Սակայն այս բանս արիասիրտ վանահայր համար թեթև անսպատեհութիւն մ'էր, ուրովշետե՛ կարելի է կ'հընուէր որ՝ տիկար ձիտորներու դործածած սոյն նեցուկները զանց ընելով՝ պիտի կարենար իր ձիալարժութիւնն ցոյց տալ այնչափ հանդիսականներու, մանաւանդ իդական սեռին առջե: Ձօհն իշխանին միւս ուղեկիցներն էին՝ իր վարձկան զօրաց գլխաւոր զօրապետները, քանի մ'ասպատակ պարուններ, վատշուէր պալատականներ և շատ մը Տաճարի և Ա. Յովհաննէսի ասպետներ:

Ուշոք է յիշելաստանօր որ այս երկու ուխտերուն ասպետները Ծիշարտ թաղաւորին հակալիր էին, վասն զի՞ Պալէստինի մէջ Ասիւծասիրտ Ծիշարտի և Գրանսայի Գիլայ թաղաւորին ունեցած երկարաւու կունեներուն ատենն՝ այս վերջունոյն կողմը բուներ էին: Ամենուն յայտնի էր թէ այս երկարաւութեան պատճառաւ Ծիշարտի կրիսակի յաղթութիւններն ապարդիւն մնացեր էին, թէ Ելուսաղէմը պաշարելու հարած առաջանական քաջութիւններն ի զերեւ ելիր և թէ

իր շահած բոլոր փառքն ուրիշ արդիւնք մը չէր ունեցեր այլ միայն սուլթան Սալատինի հետ տարտամ զինադութեալ ընել: Ինչքաղաքականութեամբ որ սուրբ Տեղեայ մէջ իրենց եղբայրները վարուեր էին՝ նոյն քաղաքականութեամբ Անկլիոյ և Կորմանստիոյ Տաճարական և Հիւրասէր* ասպետները ձօհն իշխանին կողմն անցեր էին, և բնաւ չէին փափաքեր որ Ծիշարտ Անկլիա դառնայ, կամ անոր օրինաւոր ժառանգն Արմիւր զահն ենէ: Խակ ասոր հակառակ՝ ձօհն իշխանը կ'ատէր և կ'անդոսնէր Անկլիոյ սակաւաթիւն նշանաւոր սաքսոն ընտանիքներն, և առիթ մը չէր մունար զմննէք վիրաւորելու և թշնամանելու, քաջ զիսնալով որ իր սնան ու պահանջումներն անհանոյ էին անոնց, ինչ պէս նաև անկլիացի ժողովրդեան մեծագոյն մասին՝ որ կը վախնար թէ իր իրաւոնց և աղաստոթեան մնաս մը չպատահի ձօհնի պէս վատշուէր և բոնասէր իշխանի մը կողմէն:

Խակ ձօհն իշխանն որ ծիրանի և ոսկեթել զգեսաններ հաղած՝ իր ձեռքը բաղէ մը բռներ, զլուին անդամնդէ շրջանակով զարդարուն Ճոխ մուշտակ զդակ մը դրեր էր, որմէ իր զանգուր զիսակն առաւառ բէն թափելով ուսերուն վրայ կ'ծածաննէր, Ճարտուկ հրալիր երիվար մը կ'աշտանակէր, իր զուարթերես խմբին դլուին անցած՝ հանդիսարանը մտաւ Ճափորելով. բարձրաձայն կ'ծիծաղէր իր հետեւորդներուն հետ, և թաղաւորական յանդղնութեամբ կ'քննէր այն զեղանի կիններն որ բարձր պատշամներու վրայ կ'փայլէին:

Աննէք որ ձօհն իշխանին կերպարանին վրայ շուայտ ժպրհութեան հետ մէս ամստարբերութիւն մը կ'նշմարէին ուրիշներու զգացու մներու գէմ, չէին կարողակայն ու բանալոր անկեղծ գէփիյաստով վայելութիւն մ'ունէր, գէմք մը զոր բնութիւնը լաւ կերտեր և արհեստն մարդարաբութեան ամէն ձեւերու յարմարեր էր, բայց գարձեալ այնզիսի անկեղծութիւն և բարեկրութիւն մ'ունէր որ հոգւոյ շարժումները թաղուն պահելու իրը թէ չէր խնարծէր: Այս տեսակ երկույթ մը ստէպ արիական անկեղծութիւն մը կ'համարտի, թէ եւ իրք սրիշտ բնաւորութեան մը անհողութիւն, իր ծննդեան, հարստութեան, կամ որ և է պատահական առաւելութեան մը զերազանցութիւնն զգացող սրիշտ մը կ'ծած որ, որմնէք ամեննեին յարաբերութիւն մը չունին անձնական արժանիքի հետ: Խակ աննէք որ խորունի չէին մտածեր, և մեծագոյն մասն էին իրը հարիւրին իննառուն ինն, եռանդաղին կ'դովէին

*Այս անուանը կը յիշուեին քանի մը զինարական նաև մանաւանդ կրօնական միարանութիւններ Փանու գարու մէջ:

Ճօ՛ՀՆ իշխանին ճոկս հաւէնձն (այս է մուշտակէ վզի վարշամակը) մեծաւ զին աքլիսնիով պատած սիրճ վերաբրկուն , սեկեայ կօշիիներն և ոսկի մորակները , այնպէս այն շնորհալի ձևերն որով կ'վարէր իր նժցողը :

Մինչդեռ Ճօ՛ՀՆ իշխանը մրցարանին բոլորը կ'ճախրէր՝ իր ուշաւ գրութիւնը գարձուց այն շփոթութեան որուն առիթ տուեր էր Խառհակին բարձր տեղ մը զրաւելու փառաւաէր փափաքն և տակալին չըր գագարեր : Իշխանն իր սրատես աշքովիսկոյն հրէայն ճանչեց , առաջն Սիօնի գեղանի օրիորդին տեսիլն աւելի մեծ և ախորդելի տպաւորութիւն մ'ըրաւ իր վրայ , երբ նաև աղմիէն ահ ու դողի ելած՝ իր ալենոր հօրը թեկին փարեր էր :

Վարդաբէ Ռեպէկափ գեղութիւնը կարելի էր բաղդատել Անկլիոյ տամնէն զեղաշուգ կիներու հետ , եթէ Ճօ՛ՀՆ իշխանին պէս խորանին զիտակ մը լինէր անդամ գատաղը : Անպէկափ մարմնոյն ձեւը գողտրիկ համեմատութիւն մ'ունէր , և իր ազգին սովորութեան համաձայն հազած արևելքան հազուտան իրեն շատ կ'վայլէր : Իր զեղին մետաքսէ ապարօշը քաջ կ'յարմաբէր իր թխագոյն կերպարանին հետ : Իր աչերուն փայլն , իր կամարաձե շքեղունքն , իր աղւոր արծոփ քիթն , իր մարդարտի պէս սպիտակ ակրաններն , և իր սե առաստ առաստ մաղերն , որ զանդրաձե ոլորաձ ազնուատիկ վզին և կուրծքին վրայ դեղածուփ կ'ծփային , իր հազած սպարսիկ նուրբ մետաքսէ սպարեգօսն՝ որ բնական զայնպօյն ծաղիներով ծիրանի երեսի վրայ բանուած՝ իր կուրծքն ու վիզը բայ կ'թաղուր , ահա այս ամէն զեղն ու շնորհն այնպիսի վայելչութիւն մը կ'սային Ռէպէկալին որով իր բոլորը կեցող աւ մէն զեղեցիկ օրիորդները կ'զերպազնցէր :

Իրաւ է որ վզէն մինչեւ մէջքը դոյուղ չփակին (vest) մարդարտազարդ սակի ճարմանագներէն երեք հասը վերէն չէր կռակած՝ օդը տար լինելուն , որով մեր ակնարկած տեսիլն առելի հրասարութիւն կ'գառնար : Մի և նոյն պատճառաւ իր ակրանակուռ մանեակն անդին օդերուն հետ պուելի աչքի կ'զպանէր : Անդամանդեայ ճարմանդով մ'ապարօջին կցած ջայեամի փետուր մը նոր փայլ մը կ'յաւելուր զեղանի հրէայ օրիորդին , որ իրմէ վեր նատող հապարտ կանանց կողմէն ծաղը ու ծանակ կ'լինէր թէեւ , բայց նոյն իսկ ասոնք որ քամահել կ'կեղծէին իր վրայ դաղսնի կ'նախանձէին :

Վարդահամու ճաղատ զլիսին վրայ կ'երդնում — ըստ Ճօ՛ՀՆ իշխանն — որ սա վարի հրէայ օրիորդը զեղեցկութեան այն կասարուն նկարը պէտք է լինի , որուն զեղն ու շնորհն ամնէն իմաստուն թա-

դաւորին խելքը թուցուցին : Քնչէ քու կարծիքդ , Կյմէր վանահայր : Վկայ այն իմաստուն թագաւորին տաճարը՝ զոր մեր իմաստնաղոյն Շիշարա եղբայրը չկրցաւ աղատել , այս պիտի լինի անշուշտ Երգ երգոցին նշանածը :

Սաարոնի վարդն ու հոլոփի շուշմնը . . . — պատասխանեց վանահայրը ունդային ձայնով մը — բայց թող ձեր Վաեմութիւնը նկատէ անդամ մ'որ այն օրիորդը հրէուհի մ'է :

Այս — յարեց Ճօ՛ՀՆ իշխանն՝ առանց անոր ըսածին միտ գնելու — այն , նոյն ինքն անօրէնութեան Վաննն , մարկերու (գրամ) մարգիւղը , գահէկաններու պարանն է , որ տեղ մը զանելու համար անարձաթշուներու հետ կ'ոգորի , որ մաշած զգեստներ ունին , և ոչ իսկ թանկ մը : Ա. Մարկոս վլայ , իմ սեղանաւոր իշխանս իր սիրուն հրէայ կիւսն հետ պէտք է որ պատշշամին վլայ աթոռ մ'ունենայ : — Ով է այս հրէուհին , Խահահակ — հարցուց Ճօ՛ՀՆ իշխանը — կի՞նդ է թէ աղջիկդ . այս արևելքան հուրբն զըր թեկիդ տակ սեղմբր ես իրը ստակի մնաուկ մը :

Կմ Ռէպէկա աղջիկս է , աէր իմ — պատասխան տուաւ Խահակ խորին բարե մը տալով , առանց իշխանին ողջունէն երկիւղյայտնելու , թէ և անոր ողջոյնը հեղնալի էր և միանդամայն մարդավարական :

Դու ամնէն խելցայի մարդն ես — ըստ Ճօ՛ՀՆ իշխանը քահքահ մը ձգելով , որուն ձայնակից եղան և իր հետեւրդներն երեսալաշտութեամբ : — Բայց թէ աղջիկդ և թէ կինդ լինի այս հրէուհին , պէտք է իր զեղեցկութեան և քու արժանեաց համեմատ զանի պատուել : Ովնաստեր է վերը — յարեց իշխանն աչքը գէպ ՚ի պատշգամը վերցնելով : — Է՛հ , սաքսօն զեղջուկներ են որ երկար բարակ լարուեր նատեր են : Դուրս ելիք : Թաղքիչ մը նեղնատին և տեղ բանան իմ վաշխառուներու իշխանիս և իր սիրուն աղջկան . այս զեղջուկներուն պիտի զգայնեմ որ պէտք է ժողովանային մէջ բազմին այն անձերուն հետ որ իրօք ժողովանային տէրն են :

Սակայն պատշշամին վրայ զանուող անձերն որոց ուղղեց Ճօ՛ՀՆ իշխանն իր նախառալի և կապիտ խօսքերը , սաքսօն Աէտրիկի ընսառիկը , նոյնպէս իր գաշնակից և աղջական Գօնինսպրիկի Աթէլսդէյնի գերգաստանն էին : Այս անձն Անկլիոյ վերջին թագաւորներէն սերելուն մեծ յարդ ուներ հիւմբարանակ ժողովրդեան մէջ , բայց նաև արքունի հին արեւան հետ ժառանդէր էր նաև անձն թերութիւնները :

Ապյելուչ կերպարան , ուժեղ և կորովի մարմին , ծաղիկ հասակ մ'ուշ
նէր Աթէլսդէյն , սակայն դապրութիւնն անկենդան , աշելն անլոյն և
յօնքը թանձր , շարժումները յոյլ և զանգաղ էին , և այնքան ուշ բան
մը կ'որոշէր որ իր նախահարց մէկուն մակդիրը տուին անոր և սովոր

— Խմնք այս բաժակն — ըստ նա — Ակլֆրիտ Խվանօնէի կենաց , մեծ դուպարին շահատակը . վշտանարով որ իր վէրքին պատճառաւ մեղ սեղմանակից չգտնուիր : Թող ամէն մարդ իր բաժակը ընու , մանաւանդ Ռոօթրվատի Աէտրիին , այն յուսպիր որդուոյն արժանի հայրը :

— Ոչ , տէր իմ — պատասխանեց Աէտրիկ ոտք ենելով և իր անձաւակը սեղմանին վրայ դնելով — ոչ , չեմ կարող որդի անուանել անհնապանդ որդի մ'որ իմ հրամաններս կ'անարդէ և միանդամայն իր հարց բարոյքն ու սովորոյթը կ'թողու :

— Անհնարին բան է — զոչեց Ճօհն իշխանն զարմանք կեղծելով — որ այնպիսի արի ասպետ մ'անարժան և անսաստ որդի մը լինի :

— Եւ սակայն , տէր իմ — պատասխան տուաւ Աէտրիկ — Ակլֆրիտի համար ըսած Ճիշտ է : Իր հօրենսական տունը թողլոց քու եղքօրդ արքունեաց զուարթ աղատանիկն միանալու , և այն տեղ ուսաւ այն ճիշտարքութեան խաղերն որոց գու մեծ արմէք կ'ասաւ : Իմ փափիս և հրամանիս հակառակ ձգեց դնաց , և Ալֆրէտ թագաւորին օրովն այսպիսի ընթացք մ'անհնապանդութիւն , և մանսաւանդ խստի պատժելի յանցանք կ'համարուէր :

— Ափսան — պատասխանեց Ճօհն իշխանը՝ ուստ համակրութեան հառաջով մը — քանի որ որդիկ իմաստերջանիկ եղքօրս մէկ հետեւորդն եղաւ , առելորդ է հարցնելթէ ուր և որմէ ուստ որդիական անհնաւագանդութեան դասր :

Կյապէս կ'իսուէր Ճօհն իշխանը՝ մոռնալով մտադիւր , որ Հէնրի Բա

ին բոլոր զաւակներէն , թէ և ամէնքն անսպարտ չէին , ինքն ամենէն աւելի իր հօրն առջև նշանաւոր եղաւ ասպատամբութեան և ապերախտութեան կողմէ :

— Կ'երևի ինձ — ըստ նա պահ մը վարանելէն ետեւ — որ եղբայրս միաք ունէր Խվանօնէի հարուստ վիճակն իր մտերմին ընծայել :

— Իրօք ընծայեց զայն — պատասխան տուաւ Աէտրիկ — և այս ալ մեր գժտութեան մէկ մեծ զրգիւն եղաւ , քանի որ խոնարհեցաւ իր աւատական ստրուկ իշխան ընդունիլ այն երկիրներն որոց ազատ և օրինաւոր տէրերն էին իր նախնիքը :

— Ուրեմն լիովին հաւանութիւն պիտի տաս , բարի Աէտրիկ — ըստ Ճօհն իշխանն — եթէ այս երկիրն այնպիսի անձի մը տամորուն արժանիքը չպիտի նուազի բրիտանական թաղէն հող ստանալով : Քէմինալտ աը Գրօն-ալ-Պէտօ — յարեց նա դէպ ՚ի պարզնին դառնաւլով — յուսամ որ Խվանօնէի սպարմութիւնը այնպէս լաւ պիտի պահչես , որ Ակլֆրիտ իր հօրը տհաճութիւն չպիտի պատճառէ վերսորին նոյն տուատական հողը կոսելով :

— Ս Անառնինոս վկայ — պատասխանեց արեւակէ գնակտով հսկայն — որ Զեր վերմութիւնը թող զիս սաքսոնի մը տեղ դնէ , եթէ երբէք այս Աէտրիկը կամ Ակլֆրիտ , կամ Անկլիոյ լաւագոյն արիւնը կրող մարդ մ'ենէ ձեր չնորհած հոլային պարզեն իինէ կորպէ :

— Ովոր քեզ սաքսոն անուանէ , սպարն — պատասխանեց Աէտրիկ՝ դժարելով այս ոճէն որով տոկէպ հօրմաններն իրենց սովորական քամահնապանդ կ'յայսնէին անկլիայուոց — այնպիսի մեծ պատիւ մ'ըրած պիտի լինի քեզի որուն անարժան ես :

Գրօն-ալ-Պէտօ պիտի պատասխանէր , բայց Ճօհն իշխանն իր թեթևամտութեամբն ու Ժպրէութեամբն անոր խօսքը կանխեց և ըստաւ .

— Իրափի , լրտեր , աղնիւ Աէտրիկ Ճշմարիտ կ'խօփի և իր ցեղը կ'ընայ պարձիկ որ առաջնութիւնն ունի մերինին վրայ թէ տոհմային երկայնութեան և թէ վերարկուին երկայնութեան կողմէ :

— Արդարեւ պատերազմի դաշտին մէջ մեր առջնէն կ'երթան , ինչպէս եղծեամիները կ'վաղին շաներուն առջնէն — ըստ Մարլուադէն :

— Եւ իրաւոնք ունին մեղնէ առաջ քալելու — ըստ էջմիթ Վանհայրը — մի մոռնաք իրենց կ'երպերուն վայելչութիւնն ու գերազանց աղնուութիւնը :

— Մանաւանդ իրենց նշանաւոր ժուժկալութիւնն ու շափասիրութիւնն — ըստ Գրէսի մոռնալով սաքսոն օրիորդի մը հետ նշանուելու խորհութիւն :

— Յիշել պէտք է նաև այն արիութիւնն և վարմունքն՝ որովերևելի չանդիսացան ՚ի Հետինկս և այլուր — ըստ Պրայն տը Պուա Կիլ պէտք :

Մինչդեռ պալատականներն ըստ կարգի՝ հանդարու և ծիծաղկուտ գէմբուլ իրենց իշխանին օրինակին կ'հետեւէին Սէտրիկի գէմ հեղնական սլաքներ նետելով՝ սաքսոնին երեսը բարկութեամբ կ'բորբոքէր և իր վէս ակնարկը մէկէն միւտին վրայ կ'արձակէր, որպէս թէ այսչափ նախատինք հետղէտէ իր վրայ տեղալուն՝ անկարողէր ամենուն խօսք հասցնել, կամ զայրադին ցուլի մը նման, որ չորս կողմէն թշնամիներէ պաշարեալ չգիտէ թէ զորն ընտրէ իր անմիջական վրէժինդրութեանը նպատակ: Ի վերջէ՝ զայրոյթէն կիսովին խեղուած ձայնով մը խօսեցաւ, և Ճօհն իշխանին դաւնալով՝ քանի որ իր կրած նախատանաց առաջին զրգուին այն էր,

— Մեր ազգին յիմարութիւններն ու մոլութիւններն որչափ մեծ լինին — ըստ նա — դարձեալ սաքսոն մը ուներ ապահով անցներ, (ամենէն ստորին վատութեան համար զօրաւորադոյն մակդիր մը) եթէ իր յատուկ սրացնին մէջ՝ և հիւրընկալութեան բաժակը շրջան ըցնելու ժամանակ, ենէր ինքն անարդէր, կամ հանդուրժէր որ ուրիշներն անարդէն անվասա կոչնական մը, ինչպէս որ Զեր վաեւմութիւնն այս իրկուն թոյլ տուաւ որ անարդէն զիս. խակ Հէտինկսի ճակատամարտին մէջ որչափ ծանր եղան մեր հարց աղէտքը, յիշել պէտք էին զէթ անոնք — և նոյն պահուն Գրօն-ար-Գէօին և Տաճարականին դէմը նայեցաւ) որ՝ քանի մը ժամառաջ, թամբ և երասմն կորուսին Սաքսունի մը նիվակին առջեւ:

— Հողիս վկայ, աշա դառն հեղնութիւն մը — ըստ Ճօհն իշխանն: — Ինչպէս կ'զմնէք զայն, պարմներ: Մեր սաքսոն հպատակներն օր ըստ օրէ ինելք և արիութիւն կ'ստանան, իրենց միտքը կ'սրի, և այս աղմկալի ժամանակները յանդուդն կերպեր կ'առնուն: Ի՞նչ կ'ըսէք այս բանին, լրտերս: Երկնից լրտին վրայ կ'երդնում, որ լաւագոյն կ'սեպեմ մեր նաւերը մննել և խիսյն Նօրմանտիա դառնալ:

— Սաքսոններէն վախնալով — ըստ Պրէսի խնդալով: — Մեղի համար ուրիշ դէտք չեն այլորսորդութեան աէդերն այս վարակները առաջնորդութիւն ունենալու առաջնորդութիւն ունենալու:

*Սաքսոններու մէջ այս նախատական մակդիրէն աւելի վատահամբաւիչ բան մը չկար: Այսի բակ յաղթողն Անեւէմ, որ անոնց ատելի էր, իր գրոշակին առաջ մը անկօս-սաքսոն զինորմնէր գողլէց՝ սպառնալով ուներ անուարիկէ անոնք:

— Կաստակներու վերջ տուէք, ամփիւ ասպետներ — ըստ Վօլոմար ՝ Եւ լսու կ'լինէք — յարեց նա իշխանին գառնալով — որ Զեր վեմութիւնը Հաւասարէր արժանի Սէտրիկին որ ոչոք միտք ունէք նախատել զինքը կատակներով, որ Հարկաւ օտարականի մ'ականջին ծանր կը հնչէն:

— Նախատել — պատասխանեց Ճօհն իշխանն՝ իր մարդավարական կերպերն առնով — յուսացոր ոչոք կինայ մտածել որ իմ միտքս, կամ ուրիշի թոյլ տալէք իմ առջևս մէկը նախատել: Ճօհն ես ինքս Սէտրիկի կի կինայ խմելու համար բաժակս կ'նում, քանի որ իր որդուոյն համար խմելու կ'մերժէ:

Բաժակները լցան սեղանին վրայ պալատականաց սուս ու պատիր ծափահարութեամբ, բայց Սաքսոնին վրայ փափաքելի տպաւորութիւնը չկրցան ընել: Սաքսոնը բնապէս սուր խմացողութիւն չունէք, բայց ամոնք որ կարծէին թէ այս շողմարար ցցցերը կարող են ջնջել կրած նախորդ նախատինքին զգացումը թեթեւ կարծիք մ'ունէին անոր մոռաց վրայ: Սակայն Սէտրիկ լուռ կեցաւ, երբ Քօնինկապրիկ Աթէլստէյնի կենդանութեան համար Ճօհն իշխանի կողմէ նորէն բաժակ մ'առաջ արիուեցաւ:

Ասպետն իշխանին այս առաջարկութեան անստարբեր չմնաց և անոր պատասխանեց իր մեծ դաւամբը պարագելով:

— Արդ՝ աեարք իմ — ըստ Ճօհն իշխանն, որ սկսէր էր տաքնալ խմած զինիէն — մեր սաքսոն հիւրերուն իրաւունքը ճանչելէն ետե՛ կը մնայ մեղաղաղել որ փոխադարձ մարդավարութիւն յայտնեն մեզ: Արժանի ցեղապետ — յարեց նա Սէտրիկի դաւնալով — կարելի՛ է արդեօք ինսդիրել որ Նօրմանի անուն մը յիշեցնես մեղոր ձեր բերանն ըստ կարի նուազ աղտեղէ, և զինիի բաժակով մը անոր ձգած դառնութիւնը սրբել դիւրին լինի:

Վօլոմար Ֆիցուրս ուսք ելաւ՝ մինչդեռ Ճօհն իշխանը կ'խօսէք, և Սաքսոնին աթոռին ետեէն սահելով՝ անոր ականջին փափաց որ այս առիթը ձեռքէ չչանէ և երկու ցեղերու մէջ ափիրած զժտութեան վերջ տայ Ճօհն իշխանին անունը տալով: Սաքսոնն այս քաղաքական թերագութեան չանսաց, այլ ուսք ելնելով և բաժակը մինչեւ բերանը ընլով Ճօհն իշխանին սա խօսերն ուղղեց:

— Զեր վեմութիւնը կ'ապահով աթուարի որ այս խնջյքին յիշուելու արժանի նօրմանի մ'անունը տամ: Թերեւս գժուարին դորձ մ'է այս, վասն զի ինդիրել գերիէն որ իր ափիրոջ զովեստներն երդէ, պահանջել է յար-

թաշարէն՝ որ տակաւին իր պարտութեան բոլոր աղէտքը կ'քաշէ՝ յաղթողին դովեստներն երգել, սակայն զարձեալնօրման մը պիտի անուանեմ, զինուց և աստիճանի մէջ առաջինն, իր տոհմին մէջ լաւազոյն և ազնուաղոյն մարդն։ Եւ այն շրթերն որ պիտի մերժեն անոր բարի համբաւին վկայելու, սուտ և անսպասիւ շրթեր պիտի անուանիմ եւ իմ խօսքս կենացս չափ պիտի պաշտպանեմ։ Ուստի այս բաժակը կը սղարպեմ ՚ի կենդանութիւն Առիւծասիրտ Ռիչարտի։

Ճօհն իշխանն՝ որ կ'յուսար սաքսոնին ճառին վերջն իր անունը լսել, սարսուռ մ'զաց երբ իր անսարդիալեղօրին անունը յանակնակալս յիշուեցաւ։ Սեքենապէս բաժակը շրթերուն տարաւ, ապա խիզյն վարդրաւ որպէս զի այս անյուսաւի առաջարկութեան մասին կոչնականներու բունելիք ընթացքը զիտէ, և իրօք շատեր այս առաջարկութեան թէ հաւանին և թէ զիմաղը լը միօրինակ վսանդառը սեպեցին։ Սակայն ոմանք, հին և փորձառու սղալատականներ, զրեթէ Ճօհն իշխանին օրինակն հետեւեցան՝ նախ բաժակն իրենց բերնին մօտեցնելով և ասաւ մեղանին վրայ գնելով։ Կային նաև այնպիսիներ՝ որ աւելի վեհանձն զդացումէ շարժեալ զուցեցին։ — Ընդ երկար կեցցէ Ռիչարտ թաղաւորն, և երանի թէ շուտով մեղի վերսպառնայ։ Խոկ մէկ քանի հիւրեր ալ, որոց մէջ ֆրօն-տը-ռէօ և Տաճարականը կ'զանուէին՝ տխուր արհամարհանօր իրենց առջեւ դրին բաժակիները։ Բայց ոչ ոք կըսարացէ ՚ի բաց մերժել իշխող թաղաւորին կենդանութեան համար առաջարկեալ բաժակը։

Սէտրիկ մէկ վկայիկնի չափ իր յաղթութիւնը վայելելէն ետև՝ իր ընկերին ըստու։ «Ելիք, աղիւ Աթէլսակին, այս տեղ բաւական ատեն մնացինք, վասն զի Ճօհն իշխանին մարդասէր հիւրնկալութեան ճաշակն առինք։ Վննիք որ մեր սաքսոնեան կոշտ սովորութիւններն աւելի լսու իմանալ կ'փափաքին, պէտք է որ դան մեր հարց տունը վնասեն մեզ, վասն զի բաւական արքունի ինջոյքներ, բաւական նօրմաննեան մարդավարութիւն տեսանք։

Այս ըսելով ոսք ելաւ Սէտրիկ և ինջոյքին սրահը թողուց Աթէլստէնի և ուրիշ բազմաթիւ հիւրերու ընկերակցութեամբ, որ սաքսոն ցեղէն լինելով Ճօհն իշխանին և սղալատականներուն երկիծական խօսքերէն ինքընկին անսարդեալ կ'սեպէին։

— Ս. Թօմասի ոսկերայ վրայ կ'երգնում — ըստ Ճօհն իշխանն այն միջոցին որ անոնք կ'քաշուէին — այս նօրման զեղջուինն այսօր բոլոր տուաելութիւնները վկայելցին և յաղթական կ'դառնան։

— Conclamatum est, poculatum est — ըստ Կյուէր վանաշայրը — խմացինք և պուացինք, ժամէ զինիի ամանները մէկդի թուուլ։

— Այս զիշեր կրօնաւորը զեղանի մեղաւոր մը խոստովանել տալ կ'ազէ, և աչա այս պատճառաւ մեխնելու կ'շտապի — ըստ ուղ Պրէստի։

— Կ'սալիխ, ասպետ — պատասխանեց վանականը — բայց պէտք է որ քանի մը մղոն ճամբայ քալեմ այս իրկուն դէպ ՚ի բնակարանս։

— Մեղնէ կ'բաժնուին — ըստ Ճօհն իշխանը կահացուկ մը Վօլտմարին — իրենց երկիւղը գէպքերուն գոշակն է, և այս վատասիրտ վանահայրն ամնէն առաջ զիս կ'թողը։

— Մի վահնար, տէր իմ — ըստ Վօլտմար — այնպիսի պատճառներ պիտի պարզեմ անոր առջեւ որ պիտի ստիպուի մեղի միանալու երբ Եօրք քաղաքը գումարուինք։ Մեծաւոր — ըստ վանականին — քեզ առանձին խօսիլ կ'ուղեմ ձիդ հեծնելէն առաջ։

Միւս կոչնականները շուտ մը ցրուեցան, և մինակ Ճօհն իշխանին և հետեւորդներուն յարող մարդիկ մնացին։

— Աչա այս է քու խորհրդիդ արդիւնքն — ըստ Ճօհն իշխանը՝ ղայրալիք ակարգի մ'ուղելով Վօլտմարին — արբշիու սաքսոն զեղջուկ մը զիս կ'նախատէ սեղանիս վրայ, և իմեղբօրս անուան իսկ իմ տուր բարեկամներս զիս երեսի վրայ կ'թողուն որպէս թէ բրուտ եմ։

— Համբերէ, աէր իմ — պատասխանեց խորհրդականը — կարող եմ ամբաստանութիւնէ քեզ գարճնել և քու գժպէի թէթեամտութիւնդ պարաւաել որ իմ խորհուրդս ՚ի գերեւ հանեց և քու լաւաղյն դատողութիւնդ վրիսպեցուց։ Բայց իրար մեղադրելու ատեն չէ. Պրէստի և ես պիտի երթանք իսկոյն այն անհաստատ վատերը գտնելու և պիտի համոզինք որ չեն կարող այսուհետեւ ետ քաշուիլ քանի որ այնքան յառաջացած են։

— Անօգուտ բան է — ըստ Ճօհն իշխանը սենեկին մէջ քայլամուլոր պտղաւելով և այնպիսի յուղմամբ խօսելով որուն խմած զինին անմամն չէր — անօգուտ բան է. պատին վրայ զիրու տեսան, առիւծին թաթն աւաղին վրայ տեսան, լաեցին անոր շառաչիւնն որ անտառը կը գլորէր, ոչ ինչ չէ կարող անոնց արիւթիւնը զրգուել։

— Երանի թէ — ըստ Վօլտմար Պրէստին — որ իր արիւթիւնը նախ ինքը դրգուէր։ Եր եղբօրն անունն իսկ իրեն սարտու կ'ազգէ։ Իշխանի մը խորհրդականները գժբաղբ են, երբ թէ ՚ի բարին և թէ ՚ի չար համատասամութիւնէ և յարատեւութենէ զուրկ է նա։

Գ. Լ. Ռ Ի Խ Ժ Ե

Եւ սակայն — հա՛, հա՛, հա՛ — նա կ'մտածէ
թէ եմ իր կամաց գործին և սպասուոր:
Հա՛, թող սցդպէս լինի. շփոթութեան այս բաւզէն ։
Որ եր դաւերուն և վատ բանութեան է արդիւնք,
Բարձրագոյն վեճակի ես հասնելու տի ճգնիմ,
Եւ ով չու պիտի որ անիրաւ եմ:

ՊԱԶԻԼ, ՈՒԷՇՐԻՒՇԻՆ Իւ:

Երբէք մամուկ մ'այնքան աշխատ չէ եղած իր պատառուն ոստայնի թելերը հիւսելու, որչափ աշխատ եղաւ Վօլտմար Ֆիցուրս Ճօչն իշխանին դաղսնի կուսակցութեան ցիր ուցան անդամները միաբանելու և ՚ի մի վայր դումարելու: Քիչեր համակրութենէ շարժեալ յարած էին անոր, և ոչ ոք անձնական ակնածութենէ: Հետևապէս հարկ եղաւ որ Վօլտմար անոնց աշաց առջեւ շահու նոր նորյոյսեր տայ և իրենց արդէն վայելած օգուստները յիշեցնէ: Նորատի և վայրենամիտ աղնուականին՝ ապագային մէջ, անպատիժ ազատութեան և անսամձ շուայտութեան յոյս տուաւ, փառասիրին՝ իշխանութեան, ընչափին՝ անշափի հարստութեան և լայնածաւալ հողերու տիրապետութեան: Վարձկաններու պարագումներ սակի սպարզեներ ընդունեցան, որ իրենց համար ամենէն համոզակեր փաստն էր, և առանց որոյ միւս միջոյներն ապարգիւն պիտի մասյին: Այն միր դործակաստարին կողմէն խոստումներն աւելի առատ տրուեցան քան թէ դրամ, և մէկ խօսքով ոչ ինչ զանց չըրաւ երմիւն ամբանդելու կամ վհատ մարդը քաջալերելու: Իրշարտ թագաւորին վերադարձն իր անհաւանական դէպք մը ներկայացուց, սակայն երբ կասկածելի ակնարիներէ և անորոշ պատասխաններէ դիմուեց որ այս երկիւղն իր դաւադիրներուն միտքն ևս քան զետքէ, բայց ՚ի բայց խօսեցաւ թագաւորին վերադարձին վրայ՝ իրու իրական դէպք մը, և յայտնեց թէ այս բանս իրենց քաղաքական հաշիւները չէր կընար խանդարել:

— Եթէ Իշարտ թագաւորը վերադառնայ — ըստ Վօլտմար — իր մուրացիկ և չքաւոր խաչակիները հարստացնելու համար է, ՚ի մաս անոնց որ իր ետևէն չզային Սուրբ Երկիրը: Վ'վերադառնայ նա՝ աչուելի դատաստան մ'ընելու այն անձերու մասին, որ՝ իր բացակայու-

թեան ժամանակ՝ երկրին օրինաց կամ թաղին արտօնութեանց դէմանս իրաւութիւն կամ բռնաբարութիւն մ'ըրած են: Կ'վերագառնայ նա՝ Տաճարական և Հիւրասէր ասպետներէ վրէծ լուծելու՝ Սուրբ Երկրի պատերազմներուն ժամանակ՝ ֆրանսայի Ֆիլիպ թագաւորին կողմէն անցնելուն համար: Վերջապէս, կ'վերագառնայ նա՝ իր եղբօր՝ Ճօչն իշխանին կողմէն իշխանին կուսակից եղողն իբրև ապատամբ՝ պատժելու համար: Միթէ իշխանին կուսակից եղողն իբրև ապատամբ՝ պատժելու համար: Ճօչն իշխանին կուսակից եղողն իբրև ապատամբ՝ պատժելու համար: Դաշտում գաղաքական գործութիւնները առաջանաւ ապատամբ՝ պատժելու համար: Վաղ գիտենք որ ուժեղ արիստութեան ապատամբ՝ մ'է գիտենք Արքիւր թագաւորին օրերը չենք ապրիր, երբ ախոյեան մը բանակի մը դիմապրաւ կ'ինար: Եթէ իրօք Իշարտ վերադառնայ, անտարակց միայնակ, առանց հետևորդի և բարեկամի կ'դառնայ: Իրքաջարի բանակին սոկոլները Պալէստինի աւազները սպիտակ գործեցին. իր կողմանակիցներէն փոքրիկ մաս մ'որ տառապագին ընկան հայրենի հողն, այն Ակլֆրիտ Խվանուէին պէս, աղքատ և վշտաբեկ մարդի հողն, այն Ակլֆրիտ Խվանուէ մէջ կ'բերէք Իշարտի ճննդեան իրաւունքը — յարեց նա՝ այս մասին առարկուներուն կակածները ջրելու համար:

— Միթէ Իշարտի անդրանկութեան իրաւունքը, Նօրմանսիայի գուքս, Յաղթողին առջնեկ որդի, Ուոյէրդին իրաւունքէն աւելի հաստատուն է: Եւ սակայն Սշմէան Վիլյէմ և Ճէնրի, իր երկրորդ և երրորդ եղբարքն, ազգին ձայնով հետօնետէ իրմէ նախադաս համարուեցան: Ուոյէրդ՝ Իշարտին վերոգրեալ ամէն արժէքն ունէր, անվեհեր սասկետ, քաջ սպարագլուխ մ'էր, վեհանձն առ բարեկամն և առ եկեղեցին, և այս ամէն ձրից իբրև պսակ՝ խաչակիր էր և սուրբ Գերեզմանին տիրապետու: Բայց և այնպէս Գալատիֆի բերդին մէջ իբրև թշուառ և կոյր կալանաւոր մը մեռաւ, վասն զի մողովրդեան կամաց դէմ կ'շարժէր, որ անոր իշխանութիւնը կ'մերժէր: Մեր իրաւունքն է այնպիսի արքունի տան իշխան մ'ընտրել որ կարող լինի վեհապետական իշխանութիւնը լսաւ սղանէլ, այսինքն — յարեց նա առջի ըսածն ուղելու — այնպիսի արքայազն մ'որուն ընտրութեամբն աղնուական անոնց շահերն աւելի ևս զարդանան: Թերեւս անձնական ձրից կողմէ Ճօչն իշխան իր եղբօր՝ Իշարտէն ստորին լինի, բայց երբ անդամ մը նկատենք որ այս վերջինը վիրէմինդրութեան սուրն ՚ի ձեռին Անկլավ կ'դառնայ, մինչեւու միւսը վարձք, արտօնութիւն, մասնաւոր շնորհներ, հարստութիւն, փառք, պատիւ կ'պարզեէ, վարանելու պէտք չկայ համար թէ աղնուականներն առ խօսեմն թեան որ թագաւորը պաշտպանել սպարտաւոր են:

Այս և ուրիշպատճառներ՝ որ ունինդիրներուն յատուկ վլխակին կը յարմարէին՝ ձօ՛հն իշխանին կուսակից աղասանիին վրայ մեծ կշիռ ու նեցան։ Չատեր հաւանեցան Եօրք գումարուելիք ժողովին ներկայ գտնուելու, որպէս զի պարտ ու պատշաճ անօրէնութիւններն ընեն ձօ՛հն իշխանը թագաւոր պասկելու։

Գիշը տարածամ էր, երբ Վօլումար՝ թափած ճգանց արդիւնքը տեսաւ թէեւ, բայց յողնած դադրած էշպի գդեակը զնաց տը զրէսին գտաւ, որ խնջոյքի հաղուստը փոխեր և կանաչ կարճ բաղէն հաղեր էր, նոյն զյն չուխայէ տափատով մը, գլուխը մորթէ գլխարկ մը դրեր, մէջքը կարճ սուր մը, ուսէն շեփոր մ'անցուցեր, ձեռքն աղեղ մ'առեր և կամարէն սլաքներու կապարճ մը կախեր էր։ Եթէ Վօլումար առանձին սենեկի մը մէջ հանդիպէր այս կերպարանին, առանց ուշադրութեան սլիմի անցնէր երթար՝ զմնի պահակ զեղջուկ մը սեսպէվ, սակայն զանի ներքին սրահին մէջ գտնելուն՝ աւելի մոտադիր դիտեց անոր դէմքն և նօրման ասուետն՝ անկլիայի զեղջուկ զննորի մը հագուստով ծագեալ, ձանչեց։

— Ի՞նչ կ'նշանակէ այդ խեղափակութիւնը, զրէսի — ըստ Վօլումար՝ փոքր ինչ սրտմտելով։ — Միթէ բարեկենդանի օրեր են որ գիմակ գրե՛ խալեր կ'ընես, մինչդեռ մեր ձօ՛հն իշխանին բաղըն որոշուելու վրայ է։ Ինչո՞ւ համար դու ալ չեկար շնար այն անփիտ վատերուն մէջ, որ լոկ Քիշարս թագաւորին անունէն դող կ'ելնեն, ինչ պէս որ կ'գողան Սարակինայուց որդիքը։

— Ես ալ իմ գործովս զբաղեցաց — պատասխան տուսաւ զրէսի հանդարտօրէն — ինչպէս դու ալ քու գործիդ հետ էիր։

— Ես, իմ գործիս հետ լինիմ — զոշեց Վօլումար։ — Ընդ հակառակն՝ մեր ամենուն տէր՝ ձօ՛հն իշխանին գործին կապարապէի։

— Որպէս թէ այդ ընելով, Վօլումար — ըստ զրէսի — ուրիշ սպատակ մ'ունենայիր, քան քու անձնական շահուդ հոդն։ Արի, մի կեղծեր, Վօլումար, մենք իրար կ'ձանշնք, փառափիրութիւնն է քու զրդիուդ, զուարձութիւնն է իմս, և մեր փոխադարձ հասակին յարմար են։ Դու ևս իմ կարծիքս ունիս ձօ՛հն իշխանին վրայ, այսինքն շատ տկարամիտ է և անվեհեր թագաւոր մը զինար լինիլ. շատ բռնաւեր է՝ հետևապէս անզուսպ, շատ ստահակ և ինքնահաւամն հետեւապէս ժողովրդասէր լինելու անկարող, և շատ յեղյեղուկ և վեհերուած հետևապէս որպէս զինամար ընդունելու բաժինն են։

յուսան բարձրանալ և իրենց բաղդր շնել, ուստի դու քաղաքագիւտութեամբդ կ'օգնես անոր և ես իմ ազատ ընկերներուս տէզերով։

— Չատ յուսասու օգնական մ'ես — ըստ Վօլումար անհամբեր — քանի որ այս ձգնամամի պահուն յիմարի գեր կ'իաղաս։ Ըսէ նայիմ, այս անձուունի ծլոտումնվդ ինչ կ'մոտագրես ընելու այսպիսի ստիւպողական վայրկեան մը։

— Կին մը ձեռք ձգելու — պատասխանեց պաղութեամբ զրէսի — Բենիամինի ցեղին սովորութեան համեմատ։

— Բենիամինի ցեղին — ըստ Վօլումար։ — Միթքդ չեմիմանար։

— Միթէ երէկ երեկոյ խնջոյքին ներկայ չէիր — ըստ զրէսի — երբ Եյմէր վանահայրը վէտ մը պատմեց ՚ի պատասխան վիխասանին երգած տաղին։ Պատմեց նա թէ լինչպէս, շատ տարիներ առաջ, ՚ի Պալէստին սոսկակի վէտ մը ծագեր է Բենիամինի ցեղին և Խորայէլաց ցուց ազդին մէջ, թէ լինչպէս ասոնք նոյն ցեղին զրեթէ բոլոր ասպետները ջարդ ու բուրդ ըրեր են, և թէ լինչպէս երդում ըրեր են, մեր Տիրամօր վրայ՝ թէ չպիտի թողուն որ մնացողներն այն ցեղին տղայ ամսուն և կարգուին, և թէ լինչպէս իրենց սկարին վրայ զըջալով մարդ դրկեր են սրբազն Պատրիարք հարյունութ համար որ իրենց ուխտէն աղատ մնան, և թէ լինչպէս սուրբ Հոգու վրէ Բենիամինի ցեղը վասուաւոր նիվակախաղ գուպարի մ'աստին ներկայ գտնուող կինները յափշտակեր տարեր են և այսպէս աւանց անոնց նշանածին կամ ընտանիքին հաւանութեան, նոյն կանանց ամուսին եղեր են։

— Այդ վէտը մտիլ ըրի — ըստ Վօլումար, թէ կանահայբն ու դու թուականին և գէպիք այլանդակի փափոխութիւններ ըրիք։

— Ես քեզի կ'ըսեմ — յարեց զրէսի — որ միտք ունիմ՝ Բենիամինի ցեղին պէտք կին մը ստանալ, և ըսածես սա կ'իմացուի որ այս հագուստովս սաքսոն եղներու երամակին վրայ պիտի յարձակիմ, որ երէկ զիշեր դղեկեն եղան, և սիրագեղ բովլենան պիտի յափշտակեմ տանիմ։

— Յիմմը ես, զրէսի — հարցուց Վօլումար։ — Քաջմիտ դիր որ թէեւ այն մարդիլ սաքսոն են, բայց հարստութիւն և զօրութիւն ունին, և այնքան սեւլիյարդ և պատի կ'ընդունին իրենց հայրենակցաց կողմէ որչափ որ այն հարստութիւնն ու մեծութիւնը մինակ սակաւաթիւ սաքսոններու բաժինն են։

— Բայց հարկ է որ և ոչմէկուն բաժինը մինի — ըստ զրէսի — վէտք է աշխարհակալութեան գործը լիսպին ՚ի կատար հանել։

— Սակայն այս ընտրած ժամանակից անպատճէ է — ըստ Վ.օլումար — գալիք տապահպին համար ժողովրդեան համակրութիւնն անհրաժեշտ է ձեզ, և ձօչն իշխանն իր մաերլիմներն անարդողները դատապարտելու չպիտի մերժէ :

— Թիղ դատապարտէ, եթէ բաւական յանդուդն է — ըստ Պրէսի — այն ատեն պիտի տեսնէ թէ ինչտարբերութիւն կայ իմկորովի տիրագործներուս աջակցութեան և գէղմ' անսիրտ սաքսօն գեղջուկներու օդնութեան մէջ: Սակայն միտք չունիմ ինքփինքս անմիջապէս յայտնել: Միթէ անտառային որսորդ մ'այսպիտ անահ կերպարան մը ցոյց տուած է որչափ ես այս հաղուսոով և շեփորով: Պիտի կարծուի թէ այս բռնաբարութիւնն եօրքայը անտառներու վտարակներն ըրածեն: Աննենդ լրաւեմներ ունիմոր սաքսօններու շարժումները կ'դիտեն: Այս գիշեր սուրբ Վիոլի կամ Վիդհօլտի վանատունը պիտի պառկին, և միթէ այսպէս չեն անուաներ Պրոն-ի-Դրէնդ գտնուած սաքսօն գեղջուկ սուրբը: Հետևեալ օրն որ Ճանքայ ենեն մեղի սկափի մօտենան, և այն ատեն՝ իրեւ բաղէներ, իսկըն անոնց վրայ պիտի յարձակինք: Վերջն իմ յատուկ ձեւերովն պիտի երկիմ, մարդապար ասպետի գեր պիտի խաղամ, պիտի երթամ աղատիմ գժբաղդ և վշտապին օրիորդն իր կոշտ առեսանդողներուն ձեռքէն, Ֆրօն-տը-Պէօի դղեակը կամ Նօրմանտիա, եթէ հարկ լինի, պիտի տանիմ, և իր ծնուաց չպիտի յանձնեմ մինչեւ որ Մօրիս տը Պրէսի նշանածը կամ կենակիցը չդառնայ:

— Այդ ինչ հիանալի և իմաստուն խորհուրդ մ'է — ըստ Վ.օլումար — և ինչպէս որ կ'նայիմ, բոլորվին քու մտքի ծնունդ չէ: Արի, բայց ի բայ խօսէ, տը Պրէսի, այս հնարադիառութիւնն իվ սորմեցուց քեզ, և ինչ պիտի ձեռնոտ գտնուի գործադրութեան, վասն զի, ինչպէս որ զիտեմ, քու գունդդ հեռու, եօրք քաղաքը կ'գտնուի:

— Կոյս Մարիամ, եթէ զիտնալ կ'փափաքիս — ըստ տը Պրէսի — ահա յայտնեմ քեզ որ այս խորհուրդը Պրայն տը Պուա-Վիլպէր տաշարակնը նիւթեց, իսկ Բենիամինի որդուոց արկածը զայն ինձ թելադրեց: Պրայն տը Պուա-Վիլպէր՝ իր զօրականներուն հետ վտարակներ պիտի ձեանան, և ինձ պիտի օդնեն յարձակման ժամուն, յետոյ ես հաղուսուս փոխելով պիտի ներկայիմ և կորովի բազուկովս օրիորդը պիտի պատեմ:

— Երկին վկայ — գոչեց Վ.օլումար — որ այս յատօկադիծը ձերեր կուքին իմաստութեան արժանի է, իսկ քու խոհեմութիւնդ յատօկապէս

կ'երեկի այն խորհրդին մէջ որով օրիորդը քու արժանընտիր գանակցիդ ձեռքը պիտի թողուս: Կարծեմ թէ պիտի յաջողիս սաքսօն բարեկամներուդ ձեռքէն օրիորդն առնուլ, բայց վերջն ի՞նչպէս պիտի կարենաս Պուա-Վիլպէրի Ճանկէն զանի աղատել, ահա այս բանս ինձի չպափանց կասկածելի կ'երեկի: Վասն զի կաքաւը յափշտակելու և իր որսը պնդապէս պահէնու վարդ բազէ մ'է:

— Տաճարական մ'է նա — ըստ տը Պրէսի — և հետևապէս չէ կարող իմ նախանձորդս դառնալ սոյն ժառանգուհին կին առնլու, տը Պրէսիի աղատայ նշանածին դէմ անպատի բան մ'ընելու մոոք: Յանուն երկնից, եթէ ինքը միայն իր ուխտին ատեանն իսկ լինել անձամբ, չպիտի ժարհէր այսպիսի նախատինք մ'ինձ ընելու:

— Որովհետեւ ինչոր լսեմ — վրայ բերաւ Վ.օլումար — չպիտի կարենամ այդ յիմար խորհուրդը մտքեդ վանել (վասն զի գիտեմ թէ հրաշափ բնութեամբ յամառ ես) գոնէ կարելի եղածին չափ քիչ ժամանակ վատնէ, նայէ որ այդ յիմարութիւնդ որչափ դժպէի նոյնչափ տեսղական չլինի:

— Հաւաստի եղիր — պատասխանեց տը Պրէսի — որ քանի մը ժամուան դործ պիտի լինի միայն, իսկըն Եօրք պիտի զամ հասնիմ, իմանվէ հեր և արի զգաղնդիս դլուխն անցնիմ, և քու քաղաքականութեանդ թելադրած որ և է յանդուղն ձեռնարկ մը պաշտպանելու, զիս սպատրաստ պիտի գտնես: Բայց ընկերներուս ձափին որ կ'հաւաքուին, և արտաքին բակն Երիվարներուն դափին ու վրնջումը կ'լսեմ: Մնաս բարեւ, իբրեւ Ճշմարիտ ասպետ՝ ահա կ'երթամ գեղեցկութեան ժպիտները շահէլու:

— Իբրեւ Ճշմարիտ ասպետ — կրկնեց Վ.օլումար՝ անոր ետևէն նայելով — լաւագոյն է բաել, իբրեւ Ճշմարիտ յիմար, կամ իբրեւ մանուկ մ'որ ամենէն կարեւոր և անհրաժեշտ գործը կ'թողու մէկդի, որ իր շորս դին թութուող ակքանին ասուին բւնէ: Բայց ես այսպիսի գործիւներով պիտի աշխատիմ, և որմէն օգտին, այնպիսի իշխանի մ'որ թէ անխոչեմէ և թէ լիտի, և թերեւս ասլաշնորհ տէր մը դառնայ, ինչպէս որ արդէն ցոյց տուալ որ հետո որդի և տմարդի եղբայր մ'է: Բայց սա, աս ևս իմ գործածած գործիներէս մին է, և որչափ որ գուռող, եթէ երբէք իր շահէրն իմինէս բաժնէ, այս ալ զաղանիք մ'է զորքիչ ատենէն պիտի իմանայ:

Քաղաքաղիսին մտմառուքն իշխանին ձայնէն այն միջոցին ընդհանրացան, վասն զի իշխանը ներքին սենեկէ մը կ'պուար. — Ազնիւդ

Վոլտմար Գիցուրս : — Եւ դգակը ձեռքը՝ մեր ապագայ դիւանապետ՝
տը՝ (վասն զի խորագէտ նօրմանն այս բարձր պաշտօնին կ'անցար)
փութաց ապագայ վեհապետին հրամաններն ընդունելու երթալ :

Գ. Լ. ՈՒ Խ Ծ. Զ.

Անձն, վայրի մի տեղ, մարդու աչքէ հեռու,
Կ'ապրէր մանկութենէն ճշնաւոր ծերունի.
Պարզ լոռ էր իր խամբ, քարացը՝ իր հեղ հիւղեկ,
Ռւտեսուը լոկ միրգեր, ընզելին ակնի ջրիկ.
Մարդերու անհաղորդ՝ հետ Աստուծոյ՝ օր անցնէր,
Միայն գործն էր աղօթք, միայն խինդ զովեսաներ,
ԲԱՐՆԻ :

Ընթերցողը մտքէ համած չէ անշուշտ որ անծանօթ ասպետի մը
Ճիգը նախորդ գուապարին մրցանակն որոշեց : Այս ասպետը՝ կուլին
առջի օրէն ցոյց տուած անհոգ և անտարբեր վարժունքին համար՝ Սև
Դանդաղէոր անոնը տուացաւ համդիսականաց կողմէ : Անչպէս յայտնի
է, Սև ասպետը յանկարծ կրկէտէն հեռացաւ երբ յաղթանակը տարին,
և երբ իր արխութեան մրցանակը ստանալու համար ասդին անդին
վիճակուցին, տեսան որ աներեսոյթ եղեր էր : « Նոյն միջոցին՝ մինչդեռ
հերոսները փողերու ձայնուլ ասպետը կ'իրջէին, ոս դէպ ՚ի հիւսիս կը
դիմէր՝ բանուկ ուղիներէ խորչելով՝ և անտառներու մէջէն ամսնէն
կարծ ձանքան բռնելով : Գիշերն անյնելու համար՝ արահետէն հեռու
փոքրիկ օթեան մ'իջաւ, ուր սակայն, թափառաշըջիկ գուասնէ մ'ի-
մացաւ գուապարին ելքը :

Հետեւեալ առտու՝ ասպետը կանուխիել ուղի ընկաւ՝ երկար ուղեւո-
րութիւն մ'ընելու մտօք, ըստ որումիր երիւարին առջի առտու պէտք
եղած հողը տարած լինելուն՝ պիտի կարենար անդադար իր շուիղը
շարունակել : Սակայն իր յոյսերն ՚ի գերեւ ելան, վասն զի ձանքաներն
արտուղի լինելով՝ ուշացաւ և երբ մութը կոխեց, ինքոյնք վէտ
հայտինիք կողմերը գտաւ ՚ի եօթքայր : Նոյն սպահուն՝ թէ ձիաւոր և
թէ ձի հանդսափ պէտք ունէին, և հետեւապէս չորս կողմը նայեցաւ
որ մօտալուտ դիշերն անյնելու տեղ մը զտնէ :

Ռւղեսրին եղած վայրը՝ պատսպաբան կամ ուտելիք գտնելու անյար-

նար կ'երենէր, և թերեւս պիտի ստիպուէր թափառական ասպետներս
սովորական ընթացքը բւնելու, որոնք՝ այսպիսի պարագաներու մէջ՝
իրենց ձիերն արածելու թողլուլ՝ գետինը կ'առակէին իրենց սիրուհոյն
վրայ խորհելու, իբր ամսէնովանի ունենալով միայն կաղնի մը : Բայց
կ'երեւէր թէ Սև ասպետը կամ մտածելու սիրուհի մը չոնէր, կամ ինչ
պէս պատերազմի՞ նոյնակը սիրոյ անտարբեր լինելով, սիրատենչ զգա-
ցումներով չէր բորբոքէր ըստ բաւականին՝ անոր գեղեցկութեան և
անդթութեան վրայ, որպէս զի կարենայ իր յոդնութեան և նօթու-
թեան արդիւնքը մեղմելով՝ անկողնի և ընթրիքի հաստատուն վայելքի
տեղ սիրով գոհ լինիլ : Ուստի զժոհոհ կ'երեւէր, երբ չորս դին նայե-
լով՝ գիտեց որ բոլորափը միայն անտառներ կ'գտնուին, որոց մէջ
ցանցառներ և քանի մը շաւիղներ կային իրաւ, բայց սոյն շաւիղներն՝
անտառին մէջ արածող բազմաթիւ արջառներ, որսական կենդանիներ,
կամ անսոնց ետևէն վաղող զուրսակներ յօրիներ էին :

Արեւ՝ որուն նայելով ուղիեր էր ասպետն իր ընթացքն՝ աջկողմէն
Տէրպիշայրի բլուրներուն ետևն իջեր էր արդէն, այսպէս որ եթէ Սև
ասպետը փորձ փորձէր իր ձանքան շարունակելու թերեւս աւելի մոլո-
րեր քան յառաջանար : Ուստի ամսնէն բանուկ շաւիղն բնտրելու աշ-
խատելին ետև՝ որպէս զի հովուի մը հիւղը համնի կամ անտառի
պահնորդի մը բնակարանը, սակայն լիովին անարդին ելնելով՝ իր
փորձերը, ասպետը յարմար դասեց իր ձիուն ու շիմութեան վստահիլ,
վասն զի ՚ի փորձ զիտէր՝ ուրիշ պարազմաներու մէջ, թէ այս կենդանի-
ներն ինչ հիանալի յատկութիւն ունին իրենց ձիաւորները տաղնապա-
լց վլուանդներէ աղասելու համար :

Ընտիր երիւարը՝ սպառապէն ձիաւորի մը ներքեւ՝ երկարատև օրուան
մ'ուղեւորութիւնէ յետին ծայրյորնած՝ այն ինչ թոյլ սանձէն զցաց՝ որ
ինքն իր գլխին երթալու արտօնութիւնն ունի, որ կարծես թէ նոր ողի
և ոյժ առաւ, և մինչդեռ առաջ՝ հազիւ ուրեմն և մի միայն հեծումով՝
մորակին նեղքե կ'շարժէր, այժմ, որպէս թէ իրեն վրայ եղած վստա-
հութենէն հպարտացած, իր ականջները սնկեց, և ինքնայրոր՝ ա-
ւելի վառլուուն շարժում մ'առաւ : Օրուան մէջ՝ ուղեւորին բռնած ըն-
թացքէն թէն կ'շեղէր փոքր ինչ երիւարինը, բայց որովհետեւ կենդա-
նին անվրուկ կ'շարունակէր այն ուղին, ձիաւորը լիովին ինքզինքն ա-
նոր յանձնեց :

Արդիւնքն արդարացուց ասպետին ընթացքը, վասն զի, քիչ մ'ետ-
քը, շաւիղը հետպէտէ աւելի լայնցաւ և աւելի բանուկ երևցաւ, և

փոքրիկ զանդակի մը գուշիւնն իմացուց ասպետին որ մատուռի մը կամ՝
Ճնարանի մը մօտ կ'զնուրի :

Եւ արդարեւ, նյոն հետայն ասպետը հարթ արօտ մը հասաւ, որուն
դիմացի կողմը՝ դար ՚ի վար դաշտի մը վրայէն կ'բարձրանար ժայռ մը
որ իր սպիտակ և հողմահար ճակատը կ'ընծայէր ուղւորին : Բաղերը՝
որ այս ժայռին քանի մը կողմերը կ'պատէր, իսկ ուրիշ տեղեր ալ մրտե-
նիի թիեր, որոց արմատները ժայռին փաղերուն մէջ մնունդ կ'դասեին,
վարի վեհերուն վերեւ կ'տատանէին, մարտիկ ասպետին սաղցարտին
փետուրներուն պէս, չորս տալով այն բանին որուն երեղին իրօք
սարսափ կ'ազդէր : Ժայռին գոզն, և իբր թէ անորյենած կոշտ հիւղ
մը կ'տեսնուէր, որ ըստ մեծի մասին մօտակայ անտառին կողմերէն շի-
նուեր էր և օդէն կ'պատսպարուէր՝ լուախառն կառով իր ծեպերը տո-
գորուած լինելուն : Նորասունկ եղենի մը ոստաշատ բունին ծայրը շե-
ղակի փայտ մը կապուած՝ դրան առջեւ տնկեր էին, իբր անշուք նշան
տուրք խաչի : Աջ կողմէն քիչ մը հեռու՝ ակնալճիտ աղբիւր մը ժայ-
ռէն կ'վիմէր գոգաւոր քարի մը մէջ, որ աշխատութեամբ գեղջական
աւազան մը դարձեր էր : Անկից հոսելով վտակը կարկաչասահ կ'իջ-
նէր իր այն ջրուղին զոր ընդ երկար փորեր էր, և այսպէս կ'թափա-
ռէր փոքրիկ դաշտավայրին մէջէն մօտաւոր պուրակին մէջ անհետ լի-
նելու համար :

Այս աղբիւրին մօտ՝ պղտիկ մատուռի մը փլատակները կային, ո-
րուն տանիսը մասովին փեր էր : Այս շնէքն, երբ ամբողջ էր, միայն
տասն վեց սոք երկայն և տասն երկու սոք լայն էր, և իր տամալին՝
որ համեմատաբար ցած էր, շնէքն չորս անկիւններէն վեր ենող չորս
համակեդրոն կամարներու վրայ կ'կինար, մէն մի անկիւն կարճ և ծանր
միւնով մը բունուած : Երկու կամարներուն կողերը գեռ կ'մային . թէ &
տամալին անոնց միջներ քայքայեր էր, բայց միւներուն վրայ անաւեր
կ'կինար : Այս հնամի մատուռին գուռը կլոր և սոտր կամարի մը տակ
էր, որուն մանուածապատ զարդերն ու խուրձերը՝ շանաձկի մը ակրա-
ներուն կ'համանին, և սպասնեան խիստ հին ճարտարապետութեան մէջ
շատ անդամ կ'երեխն : Չորս սիւնակի վրայ աշտարակ մը կ'բարձրանար
գաւթին վերեւն, անկից կախուած էր ժանդահար և օդավար զանդակն
որուն մեղմիկ հնչինը քիչ մ'առաջ Աև ասպետին ականջը զարկեր էր :

Այս անդորրաւէտ տեսարանն՝ որ վերջալուսով կ'փաղիէր, ուղւո-
րին առջեւ կ'պարզէր հանդարախիկ, և յոյս կ'տար անոր նոյն զիշերն ա-
պահով խշտեակ մը դտնելու, վասն զի անտառաբնակ Ճնաւորներու

յատուկ պարտքն էր ուշամնաց կամ մոլորեալ անցորդներուն ասպինջա-
վանութիւն շնորհէլ :

Հետևասէս՝ ասպետը մեր նկարագրած բաները մանր քննելու հա-
մար ժամանակ շնորհուց, այլ ուղւորներու պաշտպան՝ սուրբ Յուլիանո-
սի փառք տալով իր նժոյգէն վար ցատկեց և մենարանին գուռը զար-
կաւ իր նիղակին ծայրով, որպէս զի մենաւորին ուշադրութիւնը
դրսէ և հիւրընկալութիւն իմորիէ :

Բաւական ժամանակ անցնելէն ետև՝ ներսէն ձայն մ'ելաւ, և այս
պատասխանն իրեն նպաստաւոր չէր :

— Ով որ ես, Ճանբարդ զնա՞ — ըստ հիւղէն խոր և խուզու ձայն
մը — և իր երեկոյեան աղօթից ատեն՝ մի վրդովեր Աստուծոյ և սուրբ
Տքնարանի ծառան :

— Արժանի հայր — պատասխանեց ասպետն — այս անտառներուն
մէջ մոլորեալ հէք ուղւոր մ'եմ, և քեզի առիթ մը կ'տամ ողորմափ-
ռութեան և հիւրասիրութեան դորձ մ'ընելու :

— Բարի եղբայր — պատասխանեց մենարանին բնիկը — Տիրամայրն
ու սուրբ Տքնարան համեցան զիս սոյն առաքինութիւններու առարկան
քան թէ գործադիրն ընել : Այս տեղ չոնիմ ուտելիք՝ որուն շոն մը
անդամինձի հետ մասնակից լինելու կամենայ, և փափկասուն երիվար
մ'իմ խշտիս պիտի անդունէ, ուստի Ճանբար շարունակէ, և թողԱս-
տուծ հետդ լինի :

— Բայց ինչպէս կարելի է ինձ — պատասխանեց ասպետն — այս
թաւուտին մէջէն Ճանբար գմնել, մինչդեռ մութը կ'կոխէ : Կ'աղաչեմ
քեզ, տէր հայր, քանի որ քրիստոնեայ ես, գուռը բաց և գոնէ Ճան-
բար ցոյց տուր :

— Եւ ես կ'աղաչեմ քեզ, քրիստոնեայ եղբայր — պատասխանեց
Ճնաւորն — որ զիս աւելի չնեղես : Արգէն շփոթեցիր միտքս մէկ
հայր, երկու ողջնու և մէկ հաւատամ ըստելու ատենս, քանի որ՝ իբրև
թշուառ մեղասոր մը պարտաւոր էի, իմ ուխտիս համեմատ, զումին
ելնելէն առաջ այս աղօթքս ըսել :

— Ճանբարն, Ճանբարն — աղաղակից ասպետը — Ճանբարն ցոյց տուր
ինձ, եթէ ուրիշ բան մը կարելի չէ քեզնէ ստանալ :

— Ճանբարն — վրայ բերաւ Ճնաւորը — զիւրին է գտնել : Ճնաւ-
որն ուղին մօրատի մը կ'տամի, և անկից հուն մ'որմէ կրնաս անցնիլ
քանի որ անձրւները դադրեր են : Հունէն անցնելէն ետև պէտք է
հագ տանիս՝ ձախ գետափէն վեր ելնելու ատեն, ուսքդ լաւ կոխելու :

վասն զի գետափը մեպաձև է, և ուղին՝ որ գետին վրայ կ'նայի՝ մօտ օրերս քանի մը տեղէն քայքայեր է, ինչպէս որ խմացայ, վասն զի ուր ուրեմն կ'հեռանամ՝ իմ մաստուռէս։ Ուստի այնուհետև կինաս շիտակ երթալ . . . :

— Քայքայուն ուղի՛ մը, վի՛չ մը, հան մը և մօրաս մը — ըստ ասպետը՝ ճկնաւորին խօսքն ընդհատելով։ — Տէր ճկնաւոր, եթէ դու մօրուք ունեցող և վարդարան համբող ճկնաւորներուն մէջ ամենէն սուրբն անդամ՝ լինէիր, պիտի յորդորէիր զիս այն ճանբան շարունակել այս զիշեր։ Ուստի ահա կ'յասնեմ քեզ, քեզ որ տեղացոց ողորմութեամբը կ'ասպիս թէե և ինչպէս կ'կասկածիմ անոր ամսարժան ես, որ իրաւոնք չանիս ուղեւորին ասպաւէն մը մերժելու, քանի որ նեղութեան մէջէ։ Հուտ գուռը բաց, թէ ոչ խաչին վրայ կ'երդնում, որ զայն պիտի կրօճանեմ և ես բռնի մուտ պիտի դմում։

— Բարեմիստ ուղեւոր — պատասխանեց ճկնաւորն — այդչափ մի շոսալիր. Եթէ իմ պահպանութեանս համար մարմնաւոր զէնք դործածելու սովորս զիս, բան մը չափախ շահիս։

— Կոյն պահուն՝ ուղեւորին քիչ մ'առաջ լսած հաջելու և ունալու հեռաւոր ձայները. կատաղօրէն սասակացան, և ասպետը մտածեց որ բռնի դուռը բանալու համար բած սալունալիքէն շուարելով՝ ճկնաւոր շուները կանչեր էր օգնութեան, որ թերեւս ներքին օթելիէ մ'եւլեր էին, ուր կ'զանուէր իրենց շնարին։ Ասպետը՝ ճկնաւորին այս պատբաստ թիւններէն աւելի բորբոքելով, որ ըստ երեսյթին իր հիւրասեաց խորհուրդն ի գործ դնելու պիտի ծառայէին, իր ուսքածն ուժդին զարլաւ դրան որ գերաններն ու ծինները դղրդեցան։

Ճկնաւորն՝ իր դուռը կրկն հարուածէ մը վտանդի մէջ դնել չուղելով, պոռաց բարձրաձայն։

— Համբերութիւնն, համբերութիւնն, բարի ուղեւոր, ոյմդ ինայէ, և ահա իսկցին դուռը պիտի բանամ, թէե կարելի է շատ գոհ չլինս սոյալէս վարժելուս վրայ։

Ճետեապէս գուռը բացուեցաւ, և ճկնաւորն, ստուար, հաստակագմ մարդ մ'որ անաաշ կտաւէ պարեգու և կնդուլ հագեր, մէջքը պրտուէ պարան մը կապեր էր, ասպետին առջեւ ելաւ։ Մէկ ձեռքը ջահ մը և միւսը վարակու վիրդ մը բռներ էր, այնքան հասա և ծանր որ լսիտի տեղ կընար անցնիլ։ Նրկու մաղսա շուներ, կէս բարակ, կէս կապիւ կազմ ու պատրաստ էին ճանրուրին վրայ յարձակելու դուռը բացուելուն, բայց երբ ջահը շոլաց ասպետին բարձր կատարինն և ոս-

կի մտրակներուն վրայ, մինչդեռ գոնէն դուրս կանգուն կ'կենար, ճկնաւորն՝ առջի խորհուրդը փոխելով՝ իր օդնականներուն կատու թիւնը զսպեց, և իր վարմոնքը գեղջուկ մարդաւարութեան մը գարձնելով ասպետին հրաւէր կարդաց իր հիւղը մանելու։ Յետոյ արեւ մարդ մոնելէն ետեւ դուռը բանալու գմկամակութիւնն արդարացնել ուղեց, սպածառաւելով թէ շատ մ'աւազակներ և վտարախներ գուրաը կ'թափառին և ոչ միայն մեր Տիրամօր կամ սուրբ Տընադանի յարդ ու պատիւ չունին, այլև այն անձերու համար որ իրենց կեանքն անոնց սպասառաւորութեան կ'նուիրեն։

— Բարի հայր, քու հղիկիդ աղքատութիւնն — ըստ ասպետը՝ չորս դին նայելով։ և լոկ տերեւէ անկոյին մը, կաղնիէ անշուք խաչ մը, խորհրդատեար մը, խորասոբորտ սեղան մ'ու երկու աթոռակ, և ուրիշմէկ քանի հնոտի կարասիներ տեսնելով — քու հղիկիդ չքաւութիւնը բաւական պաշտպանութիւն մ'է քեզի որ և է գողերու գէմ, թողլ այս երկու հաւատարիմ շուներու աջակցութիւնն, որ բաւական խոշոր և ուժեղ են, և կարծեմթէ կրնան այծեամ մը տապաշելու, և բնապէս քանի մը մարդու գէմ զնելու։

— Անոտին բարի պահնորդը — վրայ բերաւ ճկնաւորը — թոյլ տուաւ ինձ այս կենդանիները դործածելու, որպէս զի ինքնինքս պաշտպանեմ այս ամայութեան մէջ մինչև որ ժամանակները շոկուին։

Այս ըսելով՝ ճկնաւորն աշշանակի տեղբռնող որրած երկաթի ձուղի վրայ միսց ջահն, և կաղնիէ եռոսանախն խարոյիներուն առջեւ դնելով, զոր չոր փայտով փոքր ինչ արծարծեց, սեղանին մէկ կողմը տեղաւորեց աթոռակ մ'ու ասպետին ըստ որ նոյնն ընէ միւս կողմը։

Յետոյ նատան և իրաբու երես նայեցան յետին ծանրութեամբ՝ իւս բարձրացիւն ինքնին մասածելով օր հաղիւ ուրեմն տեսած է կիսանքին մէջ իր առջև գտնուող կերպարանին պէս աւելի կորովի և ըմբշային կերպարան մը։

— Պատուելի ճկնաւոր — ըստ ասպետն անոր երեսն ընդհանր ակնապիշ դիմելէն ետեւ — եթէ քու բարեսպաշտիկ մոմեսուքք վրդով վելու չըլանայի, երեք բան պիտի խնդրէի իմանալ սրբութենէդ, նախ նոր պիտի դնեմ իմ երիվարս, երկրորդ՝ ինչ ընթրիք պիտի ընեմ, երրորդ՝ այս զիշեր ուր պիտի պատկիմ։

— Ես մատովս պիտի պատասխանեմ քեզի — ըստ ճկնաւորը — քանի որ իմ սովորաւթիւնս չէ խօսիլ, երբ նշանցր նպատակին կ'օդաւու։ — Այս ըսելով յաջորդաբար հիւղին երկու սնկիւնները ցցուց։

Ահա ախոռն այն տեղէ — ըստ նա — իսկ ամկողինդ այս տեղէ
— Եւ ասա մօտակայ դարակէն երկու ափ ողու պարունակող պնակ մը
առնլով՝ սեղանին վրայ դրաւ և յարեց . — Եւ այս քու ընթրիքդ է :
Ասպետն իր ուսերը թոժուեց և հիւղէն դուրս ելնելով՝ գնաց երի-
վարը ներս բերաւ , զոր նոյն պահուն ծառի մը կապեր էր , թամբը
հանեց իննամօք և իր յատուկ վերարկուն ուժաթափ նժոյզին կրնակը
ծածկեց :

Ճգնաւորն՝ ըստ երեսիթին՝ քիչ մը կարեկից եղաւ՝ տեսնելովթէ օ-
տարականն ի՞նչ հոգովի և ճարտարութեամբ իր նժոյզը կ'իննամէր , վասն
զի՞ պահնորդին ձիուն պահեստի ուտելիքին վրայ քանի մը խօսք
քրթմնջելէն ետև՝ պատին մէկ սորէն յարդի խուրձ մը հանեց , աս-
սերտին երիվարին առջև նետեց , և անմիջապէս ետքը՝ բաւական չոր
խոտ թափեց այն անկիւնն որ ձիուն խշտին պիտի լինէր : Ասպետն ա-
նոր մարդավարութենէ շնորհակալ եղաւ , և այս գործն աւարտելէն ե-
տև՝ եկան նորէն իրենցյատուկ աթոռները նստան սեղանին մօտ՝ որուն
վրայ ուղուի պնակը կ'զմնուէր : Ճգնաւորն՝ երկար աղօթքէ մ'ետքն՝
որ երբեմն լատիներէն էր , թէև անոր նախին հետքն այն ինչ մնացեր
էր , բաց ՚ի քանի մը բառի և խօսքի երկայնաձիդ մասնիկներէ , իր
հիւրին օրինակ տուաւ համեստօրէն՝ իր ահաղին բերնին մէջ գնելովթ-
րեք չորս հատ ոլոռն , բերան մ'որուն ակրաները վարադի մը ձիրան-
ներուն կրնային բաղդատուիլ սորութեան և սպիտակութեան կողմէ , և
հետեւապէս բերանը դրան , իբր սին ցորենի հատիկներ էին այնսկիսի
լայն ու զօրաւոր աղօթի մը համար :

Ասպետն այս դովելի օրինակին հետեւլու համար , սաղաւարտը ,
զրաշն և զէն ու զարդին մեծ մասը հանեց մէկդի դրաւ , և Ճգնաւո-
րին ցցուց գանգրալի և ոսկեհեր գլուխ մը , վսեմկերպարան , կապոյտ
աշեր , որ հիանալի փայլ և փայլակ ունէին , վայելուչբերան մը , որուն
մերն շուրթը մազերէն աւելի մութ գոյն պեխեր ունէր , և բոլորը
մէկէն ժակիրէ , անվեհեր և դիմազրաւ երես մը կ'ցցուցնէր , որուն հետ
գուգակշու էր իր հումկու կազմութիւնը :

Ճգնաւորն՝ որպէս թէ իր հիւրին վստահութեան պատասխանել կա-
մենալով՝ իր կնկուղն եախն ձգեց և գնդաձեւ գլուխ մը ցցուց որ ծա-
ղիկ հասակի տէր մարդու յատուկ էր : Իր լերկ ածիլուած դամին , որ
գուուղ ու հաստ մեւ մազերու բոլորակ մ'ունէր՝ դրեթէ ցանկապատ
քրակի մը կ'նմանէր : Իր դէմքը վանական խստամբերութեան կամ
Ճգնաւորի զրկանաց երեղիթ մը չունէր , ընդ հակառակն վէս և կայս-

նառ կերպարան մ'էր , մե ու լայն ունկերով , վայելչակազմ ճակատով
և կլոր ու կարմրուն այտերով , փողաշարի այտերուն նման , որմէ երա-
կայն , գուուղ մեւ մօրուս մը վար կ'իջնէր : Այսպիսի դէմք մը՝ սրբակրօն
մարդուն մսեղ կազմուածին միանալով՝ կ'վկայէր թէ նա աւելի եղի
զիստ և մսան կ'ուտեր քան թէ ողուն և ընկեղէն : Այս հակասու-
թիւնն օտարակամն աչքին զարկաւ : Չոր ուղուը գժուարաւ ծամելէն
ետև՝ անհրաժեշտ համարեց իր բարեպաշտուն տան տէրէն քիչ մ'ըմ-
պելի ինդրել , և Ճգնաւորն անոր լինդիրը կատարեց վճիտ ջրով լի-
թակցի մ'անոր առջև զնելով :

— Այս ջուրը սուրբ Ֆընադանի աղբիւրէն կ'բղխի — ըստ նա — և
անով երկու երեւու մէջ , հինդ հարիւր Դանեցի և Բրիտոն կոապաշտ-
ներ մկրտեց : Օրհնալ լինի իր անունն : — Եւ իր մեւ մօրուը կյցին
մօտ բերելով՝ շափէն աւելի ումու մը կլլեց՝ իր տուած գովեսան ար-
դարացնելու համար :

— Պատուելի հայր , կ'երևի ինձ — ըստ ասպետն — որ այդ կե-
րած հատիկներդ , նոյնպէս այն ինչ ըմպած նուիրական այլ սին ըմպե-
լիդ հիանալի կերպով կ'օգտեն քեզ : Դու ինձ աւելի յարմար մարդ մը
կ'երեխս ճակատ խոյ մը , կամ լախտամարտի մէջ՝ մատանին ,
և կամ սրամարտութեան մէջ՝ վահան շահէլ քան թէ այս անապատին
մէջ՝ պատարադ ըսելով և ոլոռն ու պաղ ջուր ճաշակելով ժամանակ
սպառել :

— Ազնիւ ասպետ — պատասխանեց Ճգնաւորը — քու մոտածմունք՝
ամէն տղէտ աշխարհականի խորհրդին պէս լոկ մարմնոյ կ'վերաբերին :
Տիրամայրն ու իմ սուրբ պաշտպանս շնորհ ըրաւ այս իմ յանձն առած
ասպաշխարութիւնն օրհնել , ինչպէս որ բանջարեղէնն ու ջուրն օրհ-
նուեցան երբեմն Սէդրաք , Միսաք և Աբէդնազով որդւոց համար , որ
նոյն ջուրը խմել լաւագոյն համարեցին քան թէ Սարակինացւոց թաւ-
դաւորին մեծարած դիմին և կերպակուները վայելել :

— Սուրբ հայր — ըստ ասպետը — դու , որուն կերպարանին վը-
րայ Նրկին այդ հարշքը գործեր է , ներէ ինձի պէս հէք մեղաւորի մը
հարցնել թէ ի՞նչ է անունդ :

— Դու կրնաս կոչէլ զիս Գօրմէնհըրստի կրօնաւորը — պատասխա-
նեց մենաւորը — վասն զի այս կողմերն այնակէս կ'անուանեն զիս : Խ-
րաւ ե որ սուրբի մակդիր ալ կ'յարին անունիս , բայց ասոր կարեսու-
թիւն չեմ տար , քանի որ անարժան մէկն եմ : Արդ , քաջդ ասպետ ք
կրնամ արդեօք հարցնել քեզ իմ պատուաւոր հիւրիս անունը :

— Կրասի — ըստ ասպետը — Գօրմէնհըրստի կրօնաւոր, այս կողը մերը մարդիկ զիս Սև Ասպետ կ'անուանեն : Շատեր այս անուան գաճա-դալվոտ ածականն ալ կ'աւելցնեն, ածական մ'որովնշանաւոր հանդի-սանալու փառասիրութիւնը բնաւ ըռնիմ :

Ճգնաւորը հազիս կրցաւ իր ժայռը բռնել իր հիւրին տուած պա-տասխանին վրայ :

— Կ'նայիմ — ըստ նա — պարոն Գանդաղիոտ ասպետ, որ գու-զգ ճ բարեխորհուրդ մարդ մ'ես . ասկէ զատ՝ կ'դիտեմ որ իմ վանա-կան անշուք խնջոյք քեղի ախորդելի չեն, թերես սա պատճառաւ որ արբունեաց և բանակի շռայլութեան և քաղաքներու հօփութեան սո-վորած ես : Սակայն հիմակ միտքս կ'զայ, պարոն Գանդաղիոտ, որ երբ այս անստանին ողորմասէր պահնորդն այս շռներն իմ պաշտպանու-թեան համար, նոյնպէս սա յարդի խուրձերն այս տեղ ձգեց, ձգեց նաև քիչ մ'ուտեաս, որ իմ վիճակիս անցարմար լինելուն, անոր յիշա-տակն անդամ՝ իմ ծանրադոյն խորհրդածութեանցս մէջ, մաքէս ելեր էր :

— Կ'համարձակիմ երդնուլ որ այդպէս է — ըստ ասպետը — Վատահ էի որ հղիկիդ մէջ լաւադոյն ուտելիք պիտի գանուի, սրբակրօն հայր, երբ առաջին անգամ կնդուղդ զլինէդ վար առիր : Այն պահ-սորդդ կայտառ պասանի մ'է . և ամ որ այդ ծամելիքդ սեմնէր որ սա ոլուներուն հետ կ'մաքառէին, և քու կոկորդդ սա անարժան ջրով ո-ղորեալ, չափակ կարենար հաւտալ որ այս ոպարէնին և ըմպելիին դա-տասպարատած ես, որնք մի միայն ձիերու յարմար են, (և նոյն պա-հուն յիշած պարէնը սեղանին վրայ ցոյց տուաւ) և զիթափրութեամբ պիտի ջանար այդ անունդ փոխելու : Ուրեմն խկոյն նայինք թէ բարե-սէր պահնորդին ձգած ուտեսսն ինչ է :

Ճգնաւորն ասպետին վրայ հետաղնին ակնարկ մը նետեց . այս ակն-արկը ծիծաղարժ երեսյթ մ'ունէր, որպէս թէ կ'վարանէր թէ նոր աստիճան խաչեմութիւն էր իր հիւրին վստահելու : Սակայն կարելի եւ-դածին չափ ասպետին կերպարանին վրայ անստա անկեղծութիւն կ'եւ-րելէր : Իր ժայռան ևս անդիմաղելի ծաղը նշան մ'ունէր և հաւա-տարմութեան ու անկեղծութեան կողմէ այնպիսի ապահովութիւն մը կ'յայտնէր, որուն առ հարկի ճգնաւորը կարելիր կ'զանուէր :

1102

2013

ՀՀ Ազգային գրադարան



NL0354944

